Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
7-89

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

КОГДА КНИГА ВЗЯТА							
20/IV							
9/IV							
242							

Ը6-ԱԱ3
Ը8-5

1 9 NOV 2011
891.99
7-89 ич
№ 1416
2131
9227 7-91
219

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՈՒՐԲԱԽԵԱՆ

ԾԱՆՕԹ ՊԱՏԿԵՐՆԵՐ

КНИЖНАЯ ТОРГОВЛЯ
„СОТРУДНИКЪ"
* БАКУ. *

Центральная Библиотека им. Ленина
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
№ Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
1903

6ok.

04 APR 2013

28.133

Дозволено цензурою. С.-Петербургъ, 19-го Іюня 1903 года.

ՀԱՅ. ԱՌԻՐՍԻՆ ՊԵՏԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА.

876
41

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



I.

9227

Գ. քաղաքի Տիրամօր եկեղեցու յարկի տակ՝ ժամկոչներին յատկացրած մի խցիկ կայ. 188.. թուականի ապրիլ ամսի սկզբում՝ մի կիրակի առաւօտ՝ այդ խցիկում կախած պատի ժամացոյցի միջից մի կկու է դուրս գալիս, չորս անգամ «կը-կու» է կանչում և կրկին մտնում ներս։

Հերթապահ ժամկոչ Մաթոսը, որը թախտի վրայ իր անկողնում քնած է, հէնց որ լսում է կկուի ձայնը, շարժուել է սկսում, մի քանի անգամ տեղումը շուռ է գալիս, բարձրաձայն յօրանջելով ցատկում է անկողնից, հագնում է շորերն ու բարձրանում զանգակատուն. այդ օրը պատարագ պէտք է լինի։

Մաթոսը առաջ մեծ զանգն է տասնուհինգ անգամ կէնտ-կէնտ խփում, յետոյ մեծ զանգի ձայնին միացնում է հինգ միմեանցից փոքր զանգերի ձայները և սկսում երկար ու բարակ զանգահարել։ Ձատերին այնպէս է թւում, կարծես,

զանգակները ժամկոչ Մաթոսի ձեռում կենդանություն են ստացել և հա «զիլի-զիլի-զիլի-զիլի դիլի-դիլի- զոն-զոն» են բղաւում։ Քառորդ ժամի չափ այդպէս զանգահարելուց յետոյ՝ Մաթոսը զանգակատնից ցած է իջնում, եկեղեցու դռներն է բաց անում, մի քանի սրբերի առաջ մարած կանթեղներն է նորից վառում, մի քանի մոմկալների մէջ կիսավառ մոմեր է տնկում, արևմտեան դռնով դուրս է գալիս և մի բոպէ աչքերը գցում քաղաքի տներին... Նրանք մութ ստուերներով են շրջապատուած, մթնշաղը դեռ ևս ամեն տեղ է տիրում։ Մաթոսը վերադառնում է իր խցիկը, անկողինն է հաւաքում, թախտի տակից մի շիշ է դուրս բերում, փողը բերնին դնելով մնացած արաղն էլ է խմում ու կրկին նոյն դռնով դուրս գալիս, բուրնոթու տուփը ձեռին։ Մի ինչ որ բայաթի քթի տակից մրմռալով՝ մի քանի անգամ ետ ու առաջ քարի վրայ նա ման է գալիս, յետոյ նստում է սանդուխի ամենաբարձր աստիճանի վրայ և սկսում բուրնոթին քթածակերից կուշտ-կուշտ ներս քաշել։

Մաթոսը կը լինի մօտ յիսուն տարեկան. բարձրահասակ է և շատ նիհար . գանգի առաջին կէսը անմազ է բոլորովին, միւսը սպիտակախառն սև ու երկայն մազերով է ծածկուած. միրուքի մի քանի մասերը բոլորովին սպիտակած

են, ձախ աչքն էլ շիլ է։ Այդ շիլ աչքը շատերին է մոլորեցնում. այն բոպէին՝ երբ Մաթոսի շիտակ նայող աչքը խոնարհութիւն և պատկառանք է արտայայտում, շիլ աչքը, ընդհակառակը, բարձրից է մտիկ տալիս ձեր երեսին և խորհրդաւոր կերպով ժպտում, որի ազդեցութեան տակ՝ դուք ձեզ վատ էք զգում. ձեզ այնպէս է թւում՝ կարծես, մի վատ բան էք արել, Մաթոսը իմանում է այդ և իր շիլ աչքովը հասկացնում է, որ եթէ ուզի, ամեն բան ուրիշին կը պատմի և ձեզ խայտառակ կանի։ Բայց և այնպէս ծխականներից շատերը քաշւում են ժամկոչ Մաթոսից, որովհետև նա է միայն տեսնում ամեն անգամ, թէ ինչպէս եկեղեցուն կից հանգստարանում՝ թագա մեռելների գերեզմանների վրայ ուշ գիշերներին լոյս է իջնում. այո, նա տեսնում է այդ և իսկոյն միւս օրը յայտնում տէրտէրներին, տէրտէրներն էլ — ծխականներին, իսկ վերջիններները շտապում են դէպի լոյս իջած գերեզմանը, եօթը ծունկ աղօթք են անում նրա վրայ և հողից մի փոքր առնում շորի մէջ փաթաթում ու տանում տուն։ Եւ ով այնուհետև հիւանդանայ՝ հողի ծրարը նրա բարձի տակն են դնում. հիւանդը երեք օրից բոլորովին առողջանում է ու տեղից վեր կենում։ Մաթոսն է նոյնպէս տեսնում մի անգամ Ս. Սարգսի տօնից մի օր առաջ՝ նոյնպէս ուշ գիշերին՝

որ եկեղեցին յանկարծ լուսաւորուեց. նա գնում գիշերապահ Մակիչին է զարթեցնում և երկսով գալիս, դրան ճեղքերից ներս են նայում. Մակիչը ոչինչ չի տեսնում, բայց Մաթոսը տեսնում է որ Ս. Սարգիսը իր որդու հետ ձիան վրայ հեծած եկեղեցում ման է գալիս. բայց երբ դուռը բանալով նրանք ներս են մտնում, ամեն բան անհետանում է։ Միւս օրը ժողովուրդը իմանում է այդ և ահագին բազմութեամբ լցւում եկեղեցի։

Մաթոսը լուրիշ երկրից է եկած և շատ է ափսոսում որ մայրը նրան Դ. քաղաքում չի ծնել։ 20 տարի շարունակ ժամկոչութիւն է անում Տիրամօր եկեղեցում, շատ տէրտէրներ և տիրացուներ է տեսել, տիրացու Սիմոնի հետ խնամական կապերով է կապւած և իրան առհասարակ լաւ է զգում, որովհետև դիրքը հաստատ է, հմուտ և փորձւած ժամկոչ է համարւում։

Նա թէև լաւ եկամուտ ունի, բայց փող չի կարողանում պահել, որովհետև արաղ շատ է սիրում և ամեն օր խմում է։ Իսկ Զատկի և Ծնընդեան տօներից անմիջապէս յետոյ՝ երկու-երեք շաբաթ շարունակ՝ նա համարեա ամեն օր հարբած է լինում, որովհետև Տիրամօր եկեղեցու բոլոր ծխականներին էլ այցելում է տէրտէրների հետ զուգընթացաբար ու «տօնը» շնորհաւո-

րում։ Սայլով է ման գալիս Մաթոսը. սայլի միջին արաղի տակառիկ ունի դրած և մի մեծ քթոց։ Սանդուխով վեր բարձրանալով՝ դրան առաջ ոտներովը ձայներ է հանում, կոկորդն է հուպ տալիս ու զօրով հազում. մին էլ տեսնես, դուռը կիսով չափ բացւում է և տանտիկինը Մաթոսին մի թաս արաղ է տալիս։ «Ընհաւոր Ծնունդ» կամ «Քրիստոս յարեաւ ի մռելոց» ասում է նա քաղցր ձայնով և քիթ ու մռութը կծկում. արաղի թասը տեսնելիս՝ իսկոյն թեւի տակից մի շիշ է հանում, ձագարը դնում բերնին և արաղը ածում շիշի մէջ. եթէ մի թաս էլ տան, այն էլ կածի այնտեղ և յետոյ, խմորեղէնն ու ձուերը փէշի մէջ ածած, գլուխ տալով ցած է իջնում, ձուերն ու խմորեղէնը դարսում քթոցի մէջ, արաղն էլ, եթէ շիշը լեցւել է արդէն, տակառի վերևի ծակը բաց է անում և կըլկլացնելով ածում այնտեղ ու շիշը դատարկում։ Պատահում է որ տէրտէրն ու տիրացուն նրանից առաջ են մտնում ծխականի տունը. Մաթոսը մինչև նրանց դուրս գալը սպասում է դրան մօտ։ Ներսից «դը՛ռ-դը՛ռ, մը՛ռ-մը՛ռ» ձայներ են գալիս նրա ականջին. բայց հէնց որ մրմռոցը կտրւում է, տէրտէրն ու տիրացուն շտապ-շտապ դուրս գալիս, Մաթոսն էլ արաղի շիշը թեւի տակ դրած առաջ է գալիս ու «տօնը» շնորհաւորում։

Երեք օր տէրտէրների հետ միաժամանակ տնից -տուն ման գալով՝ Մաթոսը երկու տակառիկ արաղ, մի քանի հաղար ներկած ձու և ահագին քանակութեամբ խմորեղէն է հաւաքում ու տանում տուն։ Ձուն ու խմորեղէնը նրա երեխաներն են ուտում, իսկ ինքը երկու երեք շաբաթ անընդհատ արաղ է խմում ու քէֆ քաշում։ Այդ ժամանակամիջոցում ծխականներից շատերն են նկատում, որ եկեղեցու զանգակները սովորականից շատ աւելի երկար են զօղանջում, աւելի ձայնեղ են դառնում և քաղցրահնչիւն. Մաթոսը նրանց, կարծես, մի առանձին կենդանութիւն է հաղորդում։ Մի անգամ, կէսօրից մի փոքր անցած, Մաթոսը վեր առնում արաղով լիքը շիշը ծոցն է դնում ու բարձրանում զանգակատուն. ինչքան ժամանակ է մնում նա այնտեղ, յայտնի չէ, միայն թէ հեռւում նա ինչ որ կրակ տեսնելով՝ սկսում է բոլոր ուժովը «դան-դան-դան» հրդեհի զանգ խփել. նրան ձայնակցում են միւս եկեղեցիների զանգերը. մարդիկ տներից դուրս են թափւում, դէս ու դէն են վազում, հրդեհի տեղն են ուզում իմանալ. վերջիվերջոյ յայտնւում է, որ ոչ մի հրդեհ չկայ, այլ միայն Փանոս աղայի բակում չորս հատ խոզ են խանձել։ Տէր Խաչատուրը այդ առիթով թէև շատ է բարկանում Մաթոսի վրայ, բայց տիրացու Սիմոնը, Մաթոսի խնամին, մէջ է մտնում, ուրիշին մեղապարտ է դուրս բերում ու Մաթոսին ազատում փորձանքից։

Իր պաշտօնի մէջ Մաթոսը առհասարակ ծոյլ է. դժւար գործերը կամ իր ընկեր — ժամկոչ Գաբոյին է յանձնում և կամ գիշերապահ Մակիչին. այդ երկուսը Մաթոսի անմիջական ազդեցութեան տակ են գտնւում, նրա հետ էլ արաղ են խմում և ընկերութիւն անում։

II.

Եկեղեցու հարաւային կողմի ծառերի միջից հաստափոր մի մարդ եափնջու մէջ փաթաթւած դուրս է գալիս և մօտենում սանդուխին. դա գիշերապահ Մակիչն է, Մաթոսի մօտիկ ընկերը։

Առաւօտեան զով քամին և զանգակների զօղանջիւնն են նրան անուշ քնից վեր կացրել. թէ չէ՝ պահապանների տնակում փափուկ եափընջու մէջ փաթաթւած, թախտի վրայ նա ամբողջ գիշերը անուշ քուն էր քաշում. այդ կերպով է նա առհասարակ պահպանում իրան յանձնրւած եկեղեցին. և, պէտք է ասել, դեռևս ոչ մի

գող նրա օրով այնտեղ չի մտել. Մակիչի խռբմ-փոցից սարսափահար լինելով՝ նրանք հեռու-հեռու են մոտ գալիս։ Մակիչը հաստ ու յաղթանդամ տղամարդ է, մոտ 40 տարեկան. անհոգ, ծոյլ և բթամիտ է, բայց աղաւնի շատ է սիրում. իր տան կտրի տակ միշտ աղաւնիներ է ունենում պահած։

— Հը՛, քէօփակ, ողջունում է նրան Մաթոսը, սանդուխի մոտ կանգնած տեսնելով։ Մակիչը նրան բարձրաձայն յօրանջելով է միայն պատասխանում։

— Վեր առ, աչքերդ շուտ կը բացուին, ասում է Մաթոսը, բուրնոթու տուփը ցոյց տալով։

— Քէֆս ըսկի լաւ չէ, Մաթոս, մրթմրթում է Մակիչը՝ յամրաքայլ վեր բարձրանալով. նա նստում է Մաթոսի կողքին և սկսում բուրնոթի քաշել, հազալ ու փռշտալ։

— Հը՛, ինչ էլաւ քեզ, տո՛. էշը հօ քթիդ տակին չխանձուեց. հողեմ ես քու գլոխը, ինչքան ես խմել, որ քէֆդ լաւ չի, պըտի սըվորես, տո՛, պըտի սըվորես...

— Կըսըվորեմ, Մաթո՛ս, եավաշ-եավաշ կըսըվորեմ... համ էլ փիս երազ եմ տեսել։

— Ի՞նչ ես տեսել։

— Մի էգ եղունիկ տեսայ... էկաւ ու մեր

տան կտրին նստեց, իմ որձ եղունիկի հետ ջիզի-ջիզի արեց ու երկսով թռան ու փախան. էդ, ասենք, հէչ... ոտիս վրայ շուռ եմ գալի, ա՛յ տղայ, տեսնում եմ ինչ... մի հատ էլ անծուխի նման սև ագռաւ եղունիկներիս ընի մոտ ա նըստած. շւացնում եմ, փափաղովս եմ վախացնում, քար եմ փնտրում որ խփեմ, հա՛յ դէս, հա՛յ դէն, չէլա՛ւ... անիծածը թռաւ ու եա՛լլահ... եղունիկներիս բունը մտաւ. էդ սահաթին ես էլ թաբսի նման գարթնեցի. էլ չիմացայ թէ ինչ էլաւ... Լաւ բան չի ագռաւը, Մաթոս։

— Ի՞նչ ա որ։

— Ագռաւը հէնց իմանաս տէր Խաչատուրն ա. նա ինձ դուրս կանի, կըտեսնես։

— Ա՜յ թէ դուրս չարաւ, էն ժամանակ ինձ ինչ կըտաս։

— Զըխչըխը չի լսում, ասում ա, սաղ գիշերը քնած ես մնում, ասում ա, սաքի ինքը գիշերները ըսկի չի քնում։

— Ի՞նչ կըտաս, քեզ ասում եմ, երկու բօթիլ արաղ կառնես...

— Երկու բօթիլ... Մաթոս, քու խաթրու իրէքն էլ, չորսն էլ կառնեմ. ինչքան փող ըլի մոտիս՝ քեզ փէշքաշ ա, թաք, քեզ դուրբան, տէր խաչատուրը ինձ դուրս չանի։

— Ընխային կաց, սարսաղ, քանի տիրացու

Սիմոնը սաղ ա՝ իմ ճանն էլ ալչու կըկանգնի, քոնն էլ։

— Ախար դու մարդ ես է, Մաթոս...

Այդ միջոցին փողոցի դրան կողմից ոտների ձայներ են լսում. Մաթոսը վեր է կենում նըստած տեղից, Մակիչն էլ է իսկոյն ցատկում ու մի կողմ քաշւում. նրանք երկսով լուռ դէպի դուռն են նայում։

— Տօ, մտիը էլի, լսում է այն կողմից։ Մաթոսը ճանաչում է իր ընկեր—ժամկոչ Գաբօյի ձայնը և կրկին նստում։ Գալիս են տիրացուներից երկուսը, Գասպարն ու Մինասը, ձեռներին մի-մի աշտանակ բռնած։ Յոգնած ու խղճուկ ձայնով նրանք բարև են տալիս, զգուշութեամբ սանդուխով վեր են բարձրանում և աշտանակները տանում եկեղեցի։ Նրանց ետևից մի ոտի վրայ կաղալով գալիս է և Գաբօն։

— Բարի լոյս, ասում է նա մշմշալով և իսկոյն նստում քարէ սանդուխի վրայ։

— Աստծու բարին քեզ, պատասխանում է Մակիչը ու նորից նստում Մաթոսի մօտ։

— Հը՞, պնչածակերդ ընչի ես ուռցրել, քէօփակ, հարցնում է Մաթոսը։

— Օ՞հ, շատ փիս յոգնած եմ, իմ տունը ախար որտեղ ա...

— Աշտանակները ընչի ես տիրացուների ձեռը տուել, քէօփակ, խեղճ ես ձևանում...

— Սուս, եավաշ խօսա, խաբել եմ. տէր Խաչատուրն ա հրամայել, ասացի, ձեռաց հաւատացին. օհ, ոտներս...

— Մեռելը դու թաղեցիր, քէլէխի հացը դու կերար, բարձին ու դօշակին դու տէր դառար, մեզ համար ըսկի մի բօթիլ արաղ չառեցիր, քէօփակ, հալա մարդ էլ ես խաբում...

— Թող, թէ Աստուածդ կըսիրես, Մաթոս. արաղ ես ուզում, արաղ կառնեմ. էնպէս եմ յոգնած, էնպէս եմ յոգնած...

— Ընչի, ինչ ես արել։

Հալա հարցնում ես է՞... Էրէկ ախար տէր Խաչատուրը քեզ էր հրամայել որ նրա տունը գնաս. ընչի ինձ ղրկեցիր։

— Շատ էլ լաւ արեցի։

— Բազարից մի ջւալ ալիր վզիս դրած մինչև նրա տունն եմ տարել... օֆ, վզաքոքս հալա ցաւում ա. եռոյ... կոտրած անկաջով դատարկ ղազանը Փանոս աղայի մօտ եմ տարել ու իւղով լիքը ետ բերել. էդ քեզ էրկու. ծիծաղում ես, հա... եռոյ... տէրտէրակնոջ լաղանը—իրա նման ահագին զատ ա—քաշ տալով ընչախ էյ... քաղաքի ծէրը, կլեկչի Օվակի մօտ եմ տարել. քաղցած-ծարաւ էնքան եմ սպասել, մինչև որ կլե-

կել եմ տալ, առել ու ետ բերել... ոտնեբս, ոտնեբս մինչև հրմի էլ են մզմզում։

— Եանի Օվակի տանը ըսկի բան չկերաբ։

— Երկու թէ իրէք թիքա դոլմա եմ կերել. հացի վերջին հասայ, դրանով ինչ կըլի։ Լագանը բերել եմ, տո, սահաթը վեցն ա դառել, էլի ուզում ա մեռելի տունը դրկի։

— Ա՛յ տղայ, դրանում ըսկի ջիգեար չի մնացել, նկատում է Մակիչը։

— Ըսկի՞ որ ասես, հաստատում է Գաբօն։

— Ախար, Գաբօ, երազումս էլ տեսայ ես նրան։

— Ո՞ւմ տեսար։

— Սև ագռաւ տեսայ, ով պըտի ըլի, տէր Խաչատուրն ա հալբաթ։

— Եավաշ խօսա, տմբօ, տէր Խաչատրի անունը տալիս՝ առաջ մի լա՛ւ չորս կողմդ նայիր, ետոյ բերանդ բաց արա, նկատում է Մաթոսը ու դառնում Գաբօյին.

— Օվակի դոշակը քանիսով ծախեցիր, դըրուատն ասա։

— Օվակի դոշա՛կը... երկու մանէթով. ինչ կայ։

— Սուտ ես ասում. չորս մանէթ երկու աբասի փող ես առել ջհուդից։

— Ո՞վ ասաւ։

— Քեզ ինչ. ընչի՞ ես սուտ ասում, քէօփակ. էսօր երկու աբասին կըհանես ու մեզ համար աբաղ կըբերես։

— Բա դու թազա խաբար չես լսել, կըտրում է նրան յանկարծ Գաբօն։

— Ի՞նչ խաբար։

— Ախար դու մի ասիլ Թխմազենց հարսը ծանը հիւանդացել ա, էսօր-էգուց, ասում են, կը մեռնի։

— Ի՞նչ ես ասում։

— Հաստատ. քո բաժինն ա, ա՛յ... պա՛-պա՛ պա՛-պա՛... չորս բարձ, երկու դոշակ, երկու վերմակ, ինչքա՞ն ասես շորեր քեզ կըհասնի...

— Եանի դրուստ հիւանդ ա՞։

— Տո՛, քեզ բան եմ ասում. տատմէր Մրօն իր բերնովը էրէկ պատմում էր մեր տանը. էսօր տէր Խաչատրին բալքի հաղորդելու կանչեն։

— Էդ լա՛ւ բան ա՞...

— Դու էդտեղ 25 մանէթ փող կաշխատես, Մաթոս, չունքի հարուստ օջաղ ա... մանղալը կրակ ես գցել թէ չէ...

— Չեմ գցել։

— Գնամ, պատրաստեմ... օֆ, ոտնեբս...

Նրանք բարձրանում են տեղներից. Գաբօն մտնում է եկեղեցի, Մակիչը դանդաղ քայլերով սանդուխից ցած է իջնում ու դուրս գալիս դէ-

պի փողոց. Մաթոսն էլ մտնում է իր խցիկը, թեք է ընկնում թախտի վրայ ու մտածում, թէ Թխմազենց հարսը որ մեռնի, իրան ինչքան բան է հասնելու։

Հինգ րոպէից Գաբօն ածուխով լիքը մանղալը երկու ձեռներով բռնած նորից դուրս է գալիս սանդուխի վրայ. մանղալը դնում է քարի վրայ և սկսում է ածուխը կրակել ու հովահարել։

Գաբօն Մաթոսից հինգ տարով փոքր է. հասակը՝ կարճ, փորը՝ ներս ընկած, դլուխը՝ խիարի նման նեղ ու երկար, վիզը՝ բարակ և նոյնպէս երկար. աչ ոտի վրայ կաղում է. լալկան մարդու ձայն ունի. դիրքը հաստատ չէ, որովհետև տէր Խաչատրին դուր չի գալիս. էսօր-էգուց նա կարող է դուրս անել։ Գաբօն աղէսի նման խորամանկ է, նապաստակի նման էլ երկչոտ. եթէ տեղը գցեց՝ անպատճառ սրան-նրան կըխաբի. բայց եթէ խաբեբայութեան մէջ բռնուեց՝ ձկան նման բերանը ջուր առած՝ մի տեղում ինչպէս նապաստակ կուչ է գալիս ու պպզում. այդ րոպէին ուզում ես՝ թակիր նրան, ուզում ես՝ հայհոյիր, ինչ ուզում ես, ասա, ամեն բան սուս ու փուս կուլ կըտայ, մինչև որ վերջապէս զզուես, խղճաս ու հեռանաս մօտիցը։ Մաթոսի հետ նա ընկերութիւն է անում, ժամանակ-ժամանակ ա-

բաղով է նրան պատուում, շատ անգամ էլ յիմար ու խեղճ է ձևանում, որպէս զի, փորձանքի մէջ ընկնելիս, նրա պաշտպանութիւնը վայելէ ու մնայ իր պաշտօնի մէջ։

Ածուխի կոյտը սկսում է կարմրել, նրա զանազան ճեղքերից կապտագոյն լեզուակներ են դուրս ցցում։ Այդ միջոցին երեցփոխանի օգնական մուխսի Բաղալը համարեա անձայն քայլերով վեր է բարձրանում սանդուխով ու մտնում եկեղեցի. երեսը ջերմեռանդօրէն խաչակնքելով՝ նա չոքում է Տիրամօր պատկերի առաջ և աղօթում. յետոյ, սաղմոսներ շշնչալով, մօտենում է մոմերի պահարանին ու բանալիով բաց անում։

III

876
41

Մուխսի Բաղալը կըլինի 45 տարեկան. կարճահասակ է և նիհար. սև մազն ու միրուքը կիսով չափ սպիտակել են արդէն. թոյլ իրանը առաջ է թեքւած. աչ թիակի ոսկորը դուրս է ցցւած. կլոր ու սևորակ աչքերի նայւածքը ժըպտուն է միշտ։ Նրա բնաւորութեան մէջ՝ ջերմեռանդութիւնն ու միամտութիւնը էժանագին ցուցամոլութեան հետ ամենահաշտ կերպով են ապրում։ Եկեղեցին, ժամերգութիւնը, տէրտէրներն

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՕԳԵՎՈՐԱԿԱՆ ՀԱՅԿ-СОРА.
Ա. Մանուկյան

ու այն ամենը ինչ որ եկեղեցուն է վերաբերում՝ Բաղալի համար սրբութիւններ են։ Վարք Սրբոցն ու Ս. Գիրքը նա ազատ է կարդում. Էֆիմերդէնոյնպէս. հմուտ երաշխանի հռչակ է վայելում արհեստաւորների ու մանրավաճառների շրջաններում։ Տասնումէկ տարի առաջ նա պսակուել է սիրուն աղջկայ վրայ. տուն էլ ունի, պարտէզ էլ ունի, ամեն բանով գոհ է Աստծուց, միայն մի մանչ զաւակ է փափագում ունենալ, բայց Աստուած տասնումէկ տարի շարունակ նրա կնոջ-սիրունիկ Եղսիի արգանդը կապած է պահում, երեխայ չի տալիս։ Այդ ժամանակամիջոցում՝ ինչքան Եղսիին ծանօթ փոքրիկ աղջիկներ կային, բոլորն էլ մեծանում-մարդի են գնում, կէնտ ու ջուխտ երեխաներ են ծնում և իրանց օջախները շենցնում. իսկ Եղսին ու Բաղալը բուէճների նման մենակ են մնում բոլորովին իրանց տան չորս պատերի մէջ. այդ հանգամանքը մեծ խոց է դառնում Բաղալի սրտի համար. նա արդէն սկըսում է մինչև անգամ ատել իր ամուսնուն. նախատում է նրան ամեն մի յարմար րոպէին, ամաչացնում է և լացացնում, բայց իր սրտի խորքում՝ յոյսը դեռ ևս չի կտրում բոլորովին։ Ամեն անգամ, երբ որևէ արհեստաւորի տանը երեխայ է ծնուում և Բաղալն էլ սովորաբար հրաւիրուած է լինում այնտեղ, նա երկար չի նստում, որովհետև նորածին մանուկի ձայնը և ծնողների ուրախ դէմքերը նրա նախանձն են սաստիկ գըրգռում. տաք-տաք իւղով-ձուն լաւաշի մէջ փաթաթելով՝ վեր առնում ծոցն է դնում և շտապում դէպի տուն. հէնց որ ոտը դնում է իր տան շեմի վրայ՝ նրա և Եղսիի միջև հետևեալն է սովորաբար կատարուում։

—Եղսի, էստեղ արի, շուտ արա.

—Ի՞նչ կայ, Բաղալ, ո՞րտեղից ես գալի.

—Հալա հարցնում ես էլ թէ որտեղից եմ գալի՞... չես ամաչում.

—Ընչի՞ պէտք ա ամաչեմ ախար.

—Սուս արա, թէ չէ՞... վեր առ էս լաւաշը, իւղով-ձու ա միջումը, կնունքից եմ գալիս, դոշիդ քսիր ու կեր, բալքի էս անգամ ուղուր ըլի... էհ, ինչքան իւղով-ձու ա որ դու կերար. մի՞ բան էլա չելաւ... ուր ես սեղանի վրայ դնում, տո՛. կեր, կեր ասում եմ, չար սահաթ կայ, բարի սահաթ կայ, կեր...

Բաղալը լաւաշի ծայրը զօրով կնկայ բերանն է կոխում.

—Բաղալ, քե մատաղ, բաց թող, բերանս ցաւում ա, կուտեմ, կուտեմ, հրէս ուտում եմ էլի՞... թէ Աստուած կամենայ, ես էլ երեխի տէր կըլեմ։

—Ախար ե՞րբ է՞... էսքան տարի գլուխս ես մենակ իւղում.

—Ընչի եմ գլուխդ իւղում, քա՜...

—Բա ինչ ես անում... դու կնիկ ես եանի՞...

—Կնիկ չեմ բա ինչ եմ.

—Սատանի տոպրակ ես դու, հա՜...

—Վայ ես քոռանամ, էդ ինչ խօսք ա որ դու ինձ ասում ես, Բաղալ, վա՛յ իմ գլխին...

—Վայը իմ գլխին ա եկել որ քեզ նման ջորուն եմ պատահել, բղաւում է Բաղալը, ոտը տափին տալով. բայց երբ նկատում է որ Եղսիի աչքերից արցունք է թափւում, իսկոյն լրջանում է ու ձայնը մեղմացնում.

—Լա՜ւ, լա՜ւ, էլ ո՞ւր ես լաց ըլում. սուտ եմ ասո՞ւմ, վեր առ, էս կտորն էլ կեր ու պրծիր։

Եղսին համ ուտում է, համ էլ հեկեկում։

—Սիրտս այրւած է, Եղսի ջան, էնդուր համար եմ տաքանում, թէ չէ ընչի պէտք ա քո սիրտը ցաւացնեմ. ինչ արած, էլի դու իմ Եղսին ես, օտար չես, հօ չեմ կարա քեզ ուրիշի հետ փոխել...

Եւ ահա, այդ խօսքերից յետոյ Եղսին աչքերը սրբում-հանգստանում է, իսկ Բաղալը գըլխակոր ման է գալիս սենեակում ու շշնչում.

—Մեղայ Տէր, մեղայ, մեղայ... Սիրտ իմ խռովեցաւ ի փորի իմում և ես թոթափեցայ իբրև մարախ։ Այլ արդարք ժառանգեսցեն զերկիր և բնակեսցեն յաւիտեանս յաւիտենից...

Բաղալի աղօթքները վերջապէս հասնում են Աստծու ականջին։

Մի ամառային գիշեր՝ Բաղալն ու Եղսին, իրանց տան կտրին պառկած, անուշ քուն էին քաշում. կէս գիշերը արդէն վաղուց էր անցել. գունատ աստղերը շիլ աչքերի նման երկնակամարի վրայ բլբլում էին. լուսինը, ամպի կտորտանքների տակ փոփոխակի մտնել ու դուրս գալով, շուրջը աղօտ լոյս էր շաղ տալիս և հետզհետէ արևամուտ հորիզոնին մօտենում. շան հաջոց անգամ չէր լսւում այդ միջոցին. երբեմն-երբեմն միայն կատուների տափոտ համերգների արձագանքը դուրս էր թռչում չինարների ու նռենիների խորքերից և գալիս ու բոպէաբար խանգարում էր կտրներում պառկած հայ քրիստոնեաների խաղաղ քունը։

Բաղալն ու Եղսին այնուամենայնիւ շատ անուշ քուն էին քաշում այդ պահուն. նազուկ զեփիւռն էլ թրթռում էր նրանց շուրջը, դուրեկան մեղեդիներ էր շշնչում նրանց՝ականջներին և ծառ ու ծաղկի բուրմունք էր որ անընդհատ բերում ու խփում էր Բաղալի քթին։ Նոյն այդ քիթը, վերմակի տակից մերթընդմերթ դուրս ցցւելով, կամ խրտնած ոչխարի նման էր բառաչում և կամ ոտներից կախ տւած խոզուկի նման խռվզում.

մի-մի անգամ էլ՝ կիսաջարդ շոնգուրի չփչփոց էր լսւում Բաղալեան քթի խորքերից։

Եղսին յանկարծ զարթնում է և այլ ևս չի կարողանում քնել. խորհրդաւոր ժպիտը դէմքին՝ նա մերթ սրտի զարկն է տնտղում, մերթ երկընքի աստղերին է մտիկ տալիս և մերթ անհամբեր հայեացքներ գցում կողքին պառկած ամուսնու վրայ։

—Սուրբ Մարիամ Աստուածածին, դուրբան ըլեմ քո լիս երեսին, շշնչում է նա վերջապէս ու նստում տեղաշորի վրայ։

—Որձակը փախաւ, բղաւում է յանկարծ Բաղալը քնի մէջ։ Եղսին ժպտում է, բերանը մոտեցնում է ամուսնու ականջին ու փսփսում.

—Բաղալ, քե մատաղ, վեր կաց, բան եմ ասում...

Բայց Բաղալը, ըստերևութին, ոչինչ չէր լսում. պարբերաբար քթից ու բերնից «խր՞ռ-բը՞ռ-փը՞շ-փրուհ» ձայներ արձակելով՝ նա անվրդով քուն էր քաշում։

—Ոնց պէտք ա ուրախանայ, երբ իմանայ թէ բանը ինչումն ա, ախ, Տէր Աստուած, մտածում է Եղսին, աչքերը Բաղալի դէմքին մեխած։

—Բաղալ, Բաղալ, զարթիր է՛, ախար բան եմ ուզում ասել, կրկնում է նա, ամուսնու թեւից թեթեւակի քաշելով։

—Սուս արա, կտրում է նրան այս անգամ Բաղալը։

Նա երեսը միւս կողմն է շուռ տալիս ու գլուխը կոխում բարձի տակ։ Այդ իսկ րոպէին՝ սոսկալի ճիչ է բարձրանում նրանց կտրի ծայրին. երկու կատու, մէկմէկու հետ պինդ փաթաթուած, միքանի րոպէ միմեանց դունչ են չանկռում և յետոյ, կտրից ցած գլորուելով, ընկնում են փշալի մամուխենու խորքը։

—Տէր ողորմեա, բացագանչում է Բաղալը, քնաթաթախ տեղից վեր թռչելով։ Աչքերը կիսախուփ, շրթունքները ծամծմելով՝ քանի մի րոպէ նա իր շուրջն է նայում, առանց իրան հաշիւ տալու թէ որտեղ է և ինչ է անում։

—Վա՛յ, նանէ, սիրտս թրթռաց, կոտորուիք դուք, նստիր, Բաղալ, նստիր, մի վախիր, անիծուած կատուներն էին, շշնչում է Եղսին. Բաղալը սուս ու փուս նստում է։

—Բաղալ, քե մատաղ, ինչքան ժամանակ ա զարթնել եմ, քունս չի տանում...

Բայց Բաղալը նրան չի լսում. գլուխը երկու ձեռների մէջ առած՝ նա անշարժ նստել է, մինչդեռ շրթունքները հազիւ լսելի ձայնով շշնչում են.

—Ես ննջեցի և ի քուն եղէ. զարթեայ և Տէր ընդունող իմ էր։ Ի բաց կացէք յինէն ամենե-

քեան, ոյք գործէք զանօրէնութիւն։ Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա և լեզուք իւրեանց նենգաւորք եղեն...

—Անտէր կատուները էլի կտուրն են բարձրանում, նկատում է Եղսին.

—Վաստակեցայ ես ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ և արտասուք իմովք զանկողինս իմ թացի։

—Դու ընչի չես քնում, յանկարծ դառնում է Բաղալը իր ամուսնուն և դեռ ևս պատասխան չստացած՝ շարունակում դժգոհ ձայնով.

—Ընչի՞ չես թողնում որ մարդ կարգին քնի. էլի սկսեցիր քո հին խաղերը... անամօթ.

—Ով ա խաղալ ուզում, քա՜...

—Դու, ո՞վ պէտք ա ուզի, ես հօ չեմ.

—Քե մատաղ, Բաղալ, մի բարկանար, ուրիշ բան կայ.

—Ուրիշ ինչ կայ ախար...

Եղսին նրա ականջին մի բան է շշնչում. Բաղալը մի բոպէ մնում է սառած. բայց շուտով է սթափւում, բռնում է Եղսիի թևից և դողդոջուն ձայնով հարցնում.

—Սուտ հօ չես ասում.

—Վայ ես քօռանամ, ընչի պէտք ա սուտ ասեմ.

—Տես, հա, քանի անգամ ասել ես, սուտ ա դուրս եկել, հանաքը դէն թող, թէ չէ...

—Այ մարդ, թուրք հօ չես, քեզ բան եմ ասում, հանաքի վախտ ա, ա՜յ, ա՜յ, էլի սրտիս տակովը լփլփում ա...

—Լփլփում ա...

—Եավաշ, ուր ես բղաւում, հարևան կտրից ձայներ են գալիս։

—Վայ ես նրա նազուկ տոտիկներին մատաղ ըլեմ, լփլփում ա, հա՜... փառք ողորմութենիդ, Աստուած, տասնումէկ տարւայ մեր աղօթքները վերջապէս դու լսեցիր։

—Դէհ, ինչ կասես հրմի, Բաղալ, կնիկ եմ թէ ջորի.

—Լա՜ւ, լա՜ւ, իհարկէ հրմի կնիկ ես, ես քո հոգուն մատաղ... ախ, Աստուած... Ահա ծանեա-զի Աստուած իմ ես դու։ ԶԱստուած օրհնեցից ի բանս իմ և զՏէր գովեցից ի խօսս իմ։ Եղսի ջան, մեղայ քեզի, հազար մեղայ...

—Հա՜, հրմի ես մեղայ ասում, ուրբաթ օրը բա ընչե՞ր էիր ասում։

—Էլ չեմ ասի, հոգուդ դուրբան, մրմնջում է Բաղալը, անսովոր գգւանքով փայփայելով իր անգին ամուսնուն, որը նրա համար վերջապէս մի համարիւն ու հարազատ երեխայ լոյս աշխարհ պէտք է բերէ։

Այդ առաւօտ Բաղալը սովորականից աւելի վաղ է վեր կենում և շտապում դէպի եկեղեցի.

նրա քայլերը աւելի մեծ ու հաստատ են, երեսին անսովոր ուրախութիւն է փայլում, իսկ շըրթունքները անընդհատ շշնչում են.

—Առեալ ածից զքեզ ի տուն մօր իմոյ և ի սենեակ յղացելոյն զիս։ Պորտ քո թակոյկ ճախարակեայ, որովայն քո՝ որպէս զշեղջ ցորենւոյ փակեալ շուշանաւ. երկու ստինք քո իբրև ուլս երկւորիս այծեման...

—Չի եթէ ննջեսցեն երկուք՝ ջեռուցանեն զմիմեանս. իսկ մին՝ զիարդ ջեռնուցու...

—Մեղայ Տէր, մեղայ, մեղայ... Դիր Տէր պահապան բերանոյ իմոյ և զդուռն ամուրշրթանց իմոց...

Նոյն օրւայ կէսօրին՝ Բաղալը նստած էր իր պարտէզում, կլոր սեղանի առաջ, փայտէ նըստարանի վրայ։ Աջ կողմում՝ թթենու ճիւղերից սև մետաքսեայ փողկապն էր կախ արել. ակնոցը քթի ծայրին դրած՝ մատները անդադար շըրթունքներին տանելով՝ թացացնում էր և նրանցով Էֆիմերդէի թերթերը շուռ տալիս. նա ինչ որ փնտրտում էր և միևնոյն ժամանակ, գլուխը յաճախակի դէպի տան դուռը դարձնելով, անհամբերութեան նշանները էր ցոյց տալիս դէմքի վրայ, որովհետև տատմէր Մրօն ու Եղսին բաւական ժամանակ է առանձնացել էին սենեակում ու դուրս չէին գալիս. Բաղալը սաստիկ

մտատանջութեան մէջ էր. անպատճառ հիմակւանից էր նա կամենում իմանալ՝ Եղսին մանչ տղայ է ծնելու թէ աղջիկ. այդ նպատակով էլ հէնց ինքն էր եկեղեցուց ուղղակի գնացել ու տատմէր Մրօյին վեր առել իր մօտ բերել, որպէս զի իսկութիւնը նրա բերնից էլ լսի ու հանգստանայ։

—Լուն ռոճիկ է, մարդոյ լեարդ ուտել՝ գանձ տեսանէ, մարդոյ ոսկը ուտել՝ ի բանտ մտանէ, կարդում է նա լսելի ձայնով. գլուխը աջ ու ձախ շարժելով՝ թերթերը կրկին դէս ու դէն է շուռ տալիս ու կարդում.

—Ուղտ տեսանես՝ պարոն է. օձն թէ ի մահճի տեսանես՝ կին առնես. թէ ոտից մէջն խաղայ՝ մարդ վիճի ընդ ինքն և ծեծւի... ուր ա ախար, մրթմրթում է Բաղալը, մի քանի թերթ ևս շուռ է տալիս ու դէսից-դէնից կարդում.

—Թէ վերի շրթանց մէջն խաղայ՝ համբուրէ զո և կամի. թէ ամեն փորն խաղայ՝ զինչ խնդրէ յԱստուծոյ՝ տայ նմա Աստուած։ Թթու մածուն ուտելն հարամ ռոճիկ է... Գա... գա...

—Ի՞նչ ես էդտեղ կարդում, դու ինձ լսիր, ես քեզ աւելի լաւ բան կասեմ, լսում է յանկարծ Բաղալը իր ականջի մօտ ու տեղից վեր թըռչում։ Տատմէր Մրօն ու Եղսին կանգնած էին նրա քամակին. Եղսին լուռ էր, իսկ տատմէրի դէմքին ինչ որ հեգնական ժպիտ էր փայլում.

«վայ, աղջիկ ա լինելու» ասում ա Բաղալը մըտքումը և ինչ որ մի թել է, կարծես, կտրում նրա սրտից...

—Մի վախիր, Բաղալ, աչքալոյս եմ քեզ տալիս, ասում է տատմէր Մրօն, աջ ձեռը նրա ուսին դնելով. խորհրդաւոր ձայնով նա աւելացնում է.

—Մանչ տղայ ա բերելու քո Եղսին, Բաղալ, լաւ իմանաս հա... մսխալով կշռած, կանգունով էլ չափած են իմ խօսքերը, էդ հօ դու գիտես...

—Գիտեմ, գիտեմ, ինչպէս չէ, սաղ ըլես, Աստուած քեզ կեանք տայ, ա քիր, ախար հոգիս վկայում ա որ մանչ տղայ պըտի ըլի, չունքի էրկու անգամ գաւազան եմ տեսել երազումս. Էֆիմերդէն հրէս ասում ա քիր... Բաղալը ֆշտապով վեր է առնում սեղանի վրայից Էֆիմերդէն և բաց արած երեսում փնտրտում ու կարդում.

—Հրէս, ա՛յ... գա... գայլի միս թէ ուտես, չէ, սա չի... գաւա... ա՛յ, ա՛յ, գաւազան ի ձեռին՝ որդի է, տեսնում ես, ա քիր, կարդա, հրէս, գրած ա քի՝ գաւազան ի ձեռին որդի ա... ախար էրկու անգամ երազ եմ տեսել, գաւազանը ձեռիս եկեղեցի էի գնում...

—Հողեմ ես քու Էֆիմերդէնի գլոխը, եանի նա ինձանից լաւ է հասկանում, բացագանչում է տատմէր Մրօն վիրաւորուած ձայնով։

—Էհ, ընչի՞... դու էլ, դու ի հարկէ, ա քիր, քու բանը ուրիշ ա, հոգուդ դուրբան, մի բարկանալ, քեզ ով ա ինչ ասում, հալբաթ որ...

—Դէ լաւ, լաւ, ետոյ կիմանաս, թէ ես ինչ կնիկ եմ. քեզ մի անգամ ասացի որ իմ խօսքը մըսխալով կշռած, կանգունով էլ չափած ա, չմոռանաս, մնաք բարև, պէտք ըլի՝ էլի կըգամ։

Տատմէր Մրօն Եղսիի ուղեկցութեամբ գնում է դէպի փողոցի դուռը. Բաղալն էլ մրթմրթալով հետևում է նրանց։ Փողոցի դրան մօտ՝ տատմէր Մրօն Եղսիին ինչ որ ծածուկ խրատներ է տալիս, Բաղալին էլ մի լաւ չանչ է անում ու դուրս գալիս փողոց։

Ս. Աստուածածնի վերափոխումից մօտ երկու շաբաթ առաջ՝ մի կիրակի օր՝ առաւօտեան ժամից յետոյ Բաղալի տանը հիւրեր են հաւաքւում. սեղանի գլխին նստել է ծերունի Տէր Բարսամը. նրանից աջ ու ձախ նստել են՝ կլեկչի Նազարը-Բաղալի քաւորը, Խունդուզենց Սրաբը, Աբրթին բիծան, ուստա Օվակը և մի քանի ուրիշ պատուաւոր ծերունիներ. տիրացու Մինասն էլ սեղանի միւս ծայրին է նստել. նրանք արդէն թէյի վերջին բաժակներն են դատարկում։ Երկու ժամից աւելի է ինչ որ նրանք Բաղալի նորածին որդուն տեսութեան են եկել. երեխան կայտառ է և սիրուն դէմք ունի. Բաղալը մի քանի ան-

դամ պատմում է հիւրերին Երեխայի աշխարհ գալու մանրամասնութիւնները. ուրախութիւնից նա չի կարողանում երկար ժամանակ մի տեղում նստել. իսկ երբ նորածնի լացի ձայնն է լսում, իսկոյն ծննդկանի սենեակն է վազում և Եղսիին նկատողութիւն անում, որպէս զի երեխային չլացացնի, այլ ծիծ տայ ու քնացնի։

—Բաղալ, էստեղ արի, ասում է վերջապէս Տէր Բարսամը.

—Տէրտէր ջան, կարգիդ դուրբան, հրամայիր, ասում է նա մօտենալով։

—Նստիր, որդի։

Բաղալը նստում է. սեղանի շուրջը բազմած ծերունիները իրանց միրուքների ծայրերը տէր-հօրն են դարձնում ու սպասում թէ ինչ կասի։

—Ե՞րբ ես ուզում որ տղէդ մկրտենք, որդի, հարցնում է Տէր Բարսամը.

—Տէրտէր ջան, ուխտ եմ արել որ Ս. Աստուածածնի վերափոխման օրը մկրտել տամ։

—Մի քիչ անյարմար օր ես ընտրել, Բաղալ, պատարագը երկար կը քաշի։

—Տէրտէր ջան, միրուքիդ դուրբան, սուրբ ուխտ եմ արել, ոնց անենք, ուզում ես որ ուխտս քանդեմ։

—Աստուած ոչ անի, որդի, ընչի՞ ես ուխտդ քանդում. թող էդպէս ըլի. էդ լա՛ւ... անունը բա ինչ ես դնելու.

—Անունը.

—Հա, անունը, մէջ է մտնում կլեկչի նազարը.

—Անունը... ետոյ կասեմ.

—Հը՛մի ասա, Էլի, նկատում է Տէր Բարսամը։

Բաղալը լուռ է մնում. տէրհայրը շարունակում է.

—Ուզում ես, թող տիրացու Մինասը անունների ցանկը կարդայ, դու էլ ջոկիր, որը քէֆդ ա ուզում. տիրացու, կարդա՛։

Տիրացու Մինասը չորս ծալած մի թուղթ է ծոցիցը հանում և սկսում շուտ-շուտ կարդալ.

—Սողոմոն և Դաւիթ, Զաքարիա և Զմաւոն, Մաթոս և Մաղաքիէլ, Երեմիա և Աբիմելէք...

—Չէ, չէ, էդ չէլաւ, լրջութեամբ նկատում է Բաղալը։

—Ընչի՞ չէլաւ, որդի, թող կարդայ, վերջումը ախար ուրիշ անուններ էլ ա գրած։

—Որ էդպէս ա, թող վերջիցը կարդայ.

—Վերջիցը կարդա, տիրացու.

—Կուռնելիոս և Սեղբեստրոս, Ղունկիանոս և Կիպրիանոս, կոտրատիոս և...

—Տօ, միւս երեսի վերջիցը կարդա, հրամայում է Տէր Բարսամը.

—Հայկ և Արամ, Աշոտ և Աբգար, Արտաշէս և Արտաւազդ, Տիգրան և Վարդան, Սանդուխտ և Զարուհի...

—Ո՞ւր ես կնկայ անուններ կարդում, բղաւում է Բաղալը սաստիկ բարկացած և ցատքում տեղից։

—Նստիր, որդի, նստիր, հանգստացնում է նրան Տէր Բարսամը։ Տիրացուն ուզում է կարդալը շարունակել, բայց տէրհայրը նրան նշան է տալիս որ լռի և դառնում է Բաղալին.

—Հը՛, Բաղալ, ջոկեցիր...

—Ըսկի՛ մի բան...

—Ոնց թէ մի բան... բա երեխան անուն չպէտք է ունենայ։

—Ա ն թ ա ռ ա մ պըտի՛, ըլի իմ։ երեխի անունը, տէրտէր ջան։

—Ա ն թ ա ռ ա մ... էդ հօ կնկայ անուն ա, Բաղալ.

—Կնիկը ինչ ա որ նրա անունը Ա ն թ ա ռ ա մ ըլի, բղաւում է Բաղալը սաստիկ կարմրելով։

—Էդ անունը մանչին սաղ չի գալ, վախվըխելով նկատում է կլեկչի Նազարը և աչքերը տնկում Տէր Բարսամի միրուքին.

—Էդ կարելի բան չի, նկատում են միւս ծերունիները մինը միւսի ետևից։

—Ընչի՛ սաղ չի գալ ախար, աւելի պինդ է բղաւում Բաղալը, ինքնիրան մոռանալով.—քաւոր, քեզ եմ հարցնում, աղջիկն ա լաւ թէ մանչ տղէն, հը՞...

—Հալբաթ մանչ տղէն ա լաւը, մրթմրթում է կլեկչի Նազարը։

—Քաւոր ջան, գլուխս ջարդիր, խօսքս մի կոտրիր էս անգամ, թող Ա ն թ ա ռ ա մ ըլի իմ որդու անունը. Աստծու ողորմութեամբ՝ իմ որդին, տէրտէր ջան, իմ որդու որդին, թոռան թոռը, դէ՛ փ-դէ՛ փ ա ն թ ա ռ ա մ պէտք ա ըլեն իրանց սուրբ յիշատակներովը. յոյս իմ և Աստուած իմ... Դաւիթ մարգարէն ոնց ա ասում, տէրտէր ջան...

—Ո՞նց ա ասում...

—Ասում ա. «Օգնեսցէ նոցա Տէր, և փրկեսցէ զնոսա. ապրեցուսցէ զնոսա ի մեղաւորաց և կեցուսցէ զնոսա և նոքա ժառանգեսցեն զերկիր։

—Օրհնեալ է Աստուած, ասում է կլեկչի Նազարը, բոլորովին փափկանալով։

Այդ միջոցին «վա՛վ, վա՛վ» ձայնում է օրօրոցի միջից անանուն հողածինը։

—Հրէս, անմեղ հրեշտակն էլ ա վկայում, տէրտէր ջան, բացագանչում է Բաղալն ու վազում օրօրոցի մօտ։

Երեխայի «վա՛վը» լսելուց յետոյ՝ կլեկչի Նազարը ինչ որ անյայտ զօրութիւնից կաշկանդւում

է և մնում սառած։ Տէր Բարսամը, որ բոլոր ժամանակը միրուքը շոյելով լուռ նստել էր, վերջապէս սթափւում է և աջ ձեռի մի քանի մատները առաջ պարզում. մի քանի ձեռներ իսկոյն նրան բուրնոթիւ ամաններ են մօտեցնում։ Բուրնոթին ծանր ու բարակ քաշելուց յետոյ՝ նա մատները վերարկուի աստառին է քսում և բարձրանում տեղից. նրա հետ բարձրանում են և միւսները ու գնում երեխայի օրօրոցի մօտ. Տէր Բարսամը խաչակնքում է նորածնին և ասում.

—Բաղալ, Անթառամ ես ուզում, թող Անթառամ ըլի սրա անունը. քաւեալ եմ ես յանուանէ քումմէ, որդի մարդոյ։

—Ամեն, ասում են բոլորը միաձայն։

Կէս ժամ անցած, երբ հիւրերը արդէն հեռացել էին, Բաղալը մի գիրք ձեռին մտախոհ ման էր գալիս սենեակում. գիրքը, ի հարկէ, Էֆիմերդէն էր. աջ ձեռի ցուցամատը երկու թերթերի մէջտեղը մտցրած՝ նա մերթ օրօրոցին էր մօտենում, ուշիուշով գննում էր նորածնի մազն ու աչքունքը և մերթ գիրքը բաց անում ու կարդում. այնտեղ հետևեալն էր գրած.

ԼՈՒՍՆԻ 25.

Օրն պահպանութիւն է ամենայն իրաց. մի երդնուլ, մի երդումն տալ, և մի ուրեք գնալ, զի

չար է և յայն օրն ծնանի նեռն. որ ծնանի շէկ լինի, շատամօրուս և ցանկացող. փախուցեալն դառնայ, հիւանդն մեռանի, երազն սուտ է։

Բանը նրանումն է որ երեխան լուսնի 25-ին է ծնւած և Բաղալը ամեն անգամ, երբ վերևի տողերն է կարդում, մտատանջութիւնների մէջ է ընկնում, որովհետև նրա երեխայի մազերն ու աչքունքը սև են, մինչդեռ Էֆիմերդէն գրում է, թէ լուսնի 25-ին ծնւածը շէկ կըլինի. Բաղալը այս անգամ պարզ տեսնում էր, որ իր աչքով տեսածը և գրքում կարդացածը միմեանց չէին բռնում։ Երկար մտատանջւելուց յետոյ վերջապէս այս անգամ էլ նա «տեսնենք վերջը ինչ կլինի» ասելով գիրքը դնում է տեղը և գնում ծննդկանի մօտ։ Ս. Աստուածածնի Վերափոխման օրը երեխային մկրտում են և անունը դնում Անթառամ։ Երկու շաբաթ շարունակ Անթառամը մեծ ախորժակով մօր կաթն էր ծծում ու քնում։ Բաղալը նրա մօտից համարեա չէր հեռանում. երկար ու բարակ դէմքին էր մտիկ տալիս, իր դէմքի հետ շատ նման էր գտնում, համբուրում էր, հանաքներ էր անում և երկու ձեռներովը պինդ գրկախառնած՝ յաճախ դուրս էր գալիս փողոցի դուռը, որպէս զի անցորդներն էլ տեսնեն նրա սիրունիկ Անթառամին ու հիանան։ Երրորդ շաբաթւայ կիսից երեխայի խաղաղ քունը խան-

գալուում է, փորն էլ լուծել է սկսում. գնալով հետզհետէ նա թուլանում է ու դեղնում. մի գիշեր էլ փչում է հոգին և մեռնում, 35 օր միայն աշխարհիս երեսին ապրելով։ Ո՞վ կարող էր նկարագրել Բաղալի և նրա ամուսնու կսկիծները. այն սրտաճմլիկ տեսարանները, որոնք տեղի ունեցան նրանց տանը՝ տեսնողների աղիքներն էին գալարում։ Մօտ վեց ամիս Բաղալը խելագարներից ոչնչով համարեա չէր զանազանւում։ Վերջիվերջոյ՝ Եղսիի աղերսանքը, տէրտէրների խրատները ու մխիթարանքը, ծանօթների և տատմէր Մրօյի տուած յոյսերը նրան մի փոքր հանգստացնում են։ Այժմ նա գիշեր-ցերեկ ծնկաչոք աղօթք է անում, աղքատներին փող է բաժանում և յոյս ունի, որ Աստուած նրան նորից կըլսի և կրկին մի մանչ տղայ կընծայի... Բաղալը հաւատում է, և նրա հաւատը անսասան է...

IV

Տիրացու Գասպարն ու տիրացու Մինասը, աշտանակները իրանց տեղերը դնելուց յետոյ, մտնում են այն սենեակը, որտեղ տէրտէրներն ու տիրացուներն են հաւաքւում, ու սուսիկ-փուսիկ իրանց համար մասլահաթի բռնւում։ Ջուտով

նրանց ընկերանում են և տիրացու Դաւիթն ու Մելքոնը։ Դրանք 15-20 տարեկան երիտասարդներ են, աշխարհականի շորեր են հագնում դեռ ևս, աղքատ ծնողների զաւակներ են. դէսից-դէնից շարականն ու ժամագիրքը մի կերպ կարդալ են սովորել, սրան-նրան աղաչելով եկեղեցու սպասաւոր են ընդունւել, սև փող են աշխատում ու պահում իրանց չքաւոր ծնողներին։ Դաւիթն ու Մինասը տէրտէրների հետ են ման գալիս, նրանց աշխատանքը լաւ է. բայց Գասպարի ու Մելքոնի եկամուտները դեռ ևս աննախանձելի են ու պատահական։ Այդ չորս տիրացուներն էլ զարմանալի համբերութեամբ են զինւած և սրտերի խորքերում օրօրում են այն յոյսը, թէ մի օր հալբաթ նրանց համար էլ մի-մի աղաբաբերաբ դուրս կըգայ, նրանք էլ կըդառնան մի-մի ծխատէր քահանայ և հասարակական գործերի առաջնորդ...

Նոյն սենեակը միմեանց ետևից մտնում են՝ Սահակ սարկաւագն ու տիրացու Սիմօնը։ Նրանց տեսնելիս՝ ջահիլները իսկոյն վեր են կենում տեղներից, շապիկներն են հագնում ու գնում եկեղեցի։

Սահակ սարկաւագը 60-ը անցկացրած բարձրահասակ ծերունի է. շարժողութիւնները ծանր ու դանդաղ. երեսը մազաղաթի գոյն ունի. մազն

ու միրուքը ձիւնի նման սպիտակ են. միրուքի և բեխերի միջին մասերը բուրնոթի շատ քաշելուց դեղձանիկի գոյն են ստացել. բերնումը ատամ չունի, արծաքիթը մեծ ու կապտագոյն է, սպունգի նման ծակոտիկներով պատած. ականջները ծանր են լսում։ Զարական, աւետարան, քարոզ բոլորը անգիր է իմանում Սահակ սարկաւագը. 40 տարի շարունակ միևնոյն բանը առանց հասկանալու և զարմանալի արագութեամբ կրկնելով՝ նրա լեզուն այլ ևս ոչ մի բան չի կարող ծանր ասել. ընդհակառակը, սարսափելի թռիչքներ է անում և ամեն ինչ մի քանի րոպէում ասում ու վերջացնում. ոչ մի որոշ բառ չի կարելի ջոկել նրա ընթերցանութեան ժամանակ. և ամեն ինչ հոմերական անտարբերութեամբ է նա կարդում և երգում եկեղեցու մէջ։

Թէև Սահակ սարկաւագը արաղ շատ է սիրում, բայց հեզ ու հանդարտ բնաւորութիւն ունի. բարկանալը ինչ բան է՝ չի իմանում. ով ինչ է ասում, նրան էլ հաւատում է. ամենի հետ ընկերաբար է վարւում, այդ պատճառով ոչ ոք նրանից չի քաշւում։ Իր տանը նա մենակ է ապրում. սիրում է ուտել, խմել, մանաւանդ քնել։ Հէնց որ առաւօտեան պատարագից յետոյ տուն է վերադառնում՝ արաղ խմում-հաց է ուտում և իսկոյն պառկում-քնում. 4-5 ժամից վեր է կե-

նում, թէյ է խմում, տաք եղանակներին պատշգամբն է դուրս գալիս, շան հետ է մի փոքր խաղում, աստղերին է մտիկ տալիս, զկրտում ու միրուքն է շոյում, թեւերի միջից լու է բռնում, յետոյ նորից նստում-արաղ է խմում, իրիկնահաց է ուտում և իսկոյն քնում։ Քնի մէջ Սահակ սարկաւագը սարսափելի ձայներ է հանում կոկորդից, խորթում է, տնքում է, քիչ է մնում որ խեղդւի, մի քանի անգամ գիշերը զարթնում է, քափ ու քրտինքն է սրբում, բուրնոթի է քաշում ու նորից գլուխը դնում բարձին. նրա ասելովը՝ երազումը վիշապների և սատանաների հետ է միշտ կռիւներ մղում։

Տարին մի անգամ՝ Սահակ սարկաւագի ծնընդեան տարեդարձին՝ նրա մօտ մարդիկ են հաւաքւում, տօնն են շնորհաւորում, ուտում և խմում։ Այդտեղ հիւրերը ամեն ջանք են գործ դնում, որպէս զի սարկաւագին ինչքան կարելի է շատ խմացնեն. և երբ այդ նրանց աջողւում է, այն ժամանակ խնդրում են նրանից, որպէս զի արբեցողութեան վրայ յօրինած այն տաղը երգէ, որը «Կռունկ» ամստգրիցն է մի ժամանակ արտագրել, իրանից էլ եղանակ է յարմարացրել և երգում է միայն այն ժամանակ, երբ շատ խմած է լինում։ Վիզը ճուկ, ձեռի ափը քրտնախաշ

երեսին դրած, կիսաբաց աչքերը բլբլացնելով՝ նա երգում է։

. . . . . .

«Փսխէ, զերեսն ի վերայ դնէ,
«Զունն գայ, զբերանն լիզէ.
«Նա հանց գիտէ թէ զիւր կինն է.
«Եկեալ զբերանըն կու սրբէ...

—Ը՛ը՛ը՛... ձայն են բռնում լսողները. սարկաւագը սկսում է հաղալ, կոկորդում հաւաքւած լորձունքը զօրով կուլ է տալիս, ճանապարհ է բաց անում և նորից, գլուխը դէպի վեր ցցած, աւելի բարձր և յուսահատ ձայնով երգում.

«Գինին շնութեան է օգնական,
«Սողոմական ախտն շարժէ.
«Պօղոս առ մեզ կու հրամայէ,
«Հաբբեցութիւնն խիստ չորէ.
«Ով զարբենալն հալալ է ասէ,
«Զերդ շունն ի տէրն կու հաչէ.
«Ո՞վ որ խրատիս համն ճաշէ,
«Զարքայութիւնն ժառանգէ...

Վերջին տողերը հեկեկալով է նա երգում և արցունքի շիթեր են դուրս ցայտում նրա աչքերից. սենեակում լռութիւն է տիրում. սարկաւագը, երկու արմուկները սեղանի վրայ դրած, գլուխն էլ արմուկների վրայ՝ մի քանի րոպէ մնում է անշարժ և անխօս. բայց ահա քթածա-

կերը ուռցնելով նա սկսում է խորը շունչ առնել ու խռմփալ... այդտեղ արդէն հիւրերը թողնում են նրան այդ դրութեան մէջ և ցրւում իրանց տները։

V

Ուրիշ մարդ է բոլորովին տիրացու Սիմօնը։ Նա կըլինի 35 տարեկան. թխադէմ է և բարձրահասակ. դանգն էլ, կզակն էլ սրածայր են. առաջինը—դէպի վեր, երկրորդը—դէպի ցած. քիթը մեծ է և սերգևիլաձև. ականջները—խոշոր, առագաստների նման առաջ պարզւած. ճակատը նեղ ու փոս ընկած. գլուխն ու երեսը սեւագոյն հարուստ բուսականութեամբ է ծածկւած. աչքերի արտայայտութիւնը սարսափ է ազդում առաջին անգամից. բիբերը—սաստիկ սև, իսկ սպիտակուցները փայլուն ու խոշոր. և երբ աչքերի խնձորիկները աջ ու ձախ է նա շարժում, Ձէկսպիրի Օտէլլոյի կատաղի աչքերը ուղղակի գալիս են ու ձեր առաջ պատկերանում։ Բայց խաբուսիկ է այդ կերպարանքը, որովհետև հէնց որ տիրացու Սիմօնը խօսել է սկսում՝ լսողի երկիւղն էլ, սարսափն էլ անհետանում են իսկոյն։ Հէնց որ նա բերանը բաց է անում որ խօսի՝

նոյն բոպէին նրա փոս ընկած ճակատի վրայ՝ վերևից-ներքև մի քանի կնճիռներ են կազմւում և դէմքին տառապեալի արտայայտութիւն տալիս։ Նրա ձայնը թոյլ է և բարակ, բարձր շեշտերը ոչխարի բառաչն են յիշեցնում։ Երբ նա բերանն է բաց անում որ խօսի՝ նրա ահագին մսալի լեզուն, չկարողանալով բերնի մէջ ազատ շարժւել, սպիտակ ատամների միջով անդադար դուրս է սողում և տիրացու Սիմօնին թոյլ չի տալիս ազատ ու արձակ խօսել։ Իսկ երբ նա որևէ պատճառով տաքանում է և աշխատում շատ ու շուտ խօսել, այն ժամանակ լեզուի մսալի ծայրն էլ արագ-արագ սկսում է դուրս սողսողալ շրթունքների միջից և թուք ու լորձունքի անձրևներ ցողել խօսակցի երեսին։ Թէև այդ կերպով տիրացու Սիմօնին աջողւում է արտայայտել իր մտքերն ու զգացմունքները, բայց դրա հետ միասին նա պարզ ցոյց է տալիս, որ, թըլուատ լինելով, սաստիկ է կակազում. մի բան՝ որը ուրիշ ժամանակ նա մեծ ճարպիկութեամբ է աշխատում սրօղել։ Բայց և այնպէս՝ Սիմօնը քահանայական թեկնածու է համարւում, թէ տիրացութիւն է անում և թէ վարժապետութիւն. մի ժամանակ բժշկութիւնով էլ էր պարապում, բայց շուտով է լծողնում այդ փէշակը, զանազան անախորժութիւնների պատճառով։ Տէր Խա-

չատրի տիրացուն է նա և մտերիմը. հոգևոր կոչումը վաղուց է ստացել, սև վերարկու է հագնում ու ցիլինդր դնում գլխին. շատ հպարտ է և բարկացող. փոքրներին սիրում է հրամայել, ծաղրել, իսկ մեծերի առաջ քծնւում է առանց ամաչելու։ Ս. գաւառիցն է նա եկած. Դ. քաղաքում այնտեղից եկած մարդիկ շատ կան. շարքաշ են նրանք և տաղանդաւոր. նրանք իրանց գիւղերից տրեխներով են դուրս գալիս և ցիլինդրը գլխին վերադառնում, ինչպէս, օրինակ, Փանոս աղան։ Հարստութիւն դիզելուց յետոյ նա գնում է որ տեսնի իր հայրենի գիւղը և քրոջ որդուն-Սիմօնին հետն առած նորից վերադառնում է Դ. քաղաքը. և որովհետև Փանոս աղան ու Տէր Խաչատուրը շատ մօտիկ ու սրտակից ընկերներ են, ուստի Սիմօնն էլ շատ հեշտութեամբ Տէր Խաչատրի տիրացուն է դառնում և մտերիմը, որովհետև ուրիշների բերանից գաղտնիքներ կորզելու ու Տէր Խաչատրի ականջին հասցնելու գործում նա արտակարգ ընդունակութիւն է ցոյց տալիս։ Ո՞ւրտեղ է ուսումը վերջացրել տիրացու Սիմօնը, յայտնի չէ, բայց ասում են թէ շատ տեղեր է ման եկած և շատ բաներ է կարդացած։ Նրա տունը քաղաքի համարեա ծայրումն է գտնւում, կնկայ վրայ իբրև օժիտ է

ստացել. նրա կինը մրգավաճառ Եփրեմի աղջիկն է և արդէն 4 երեխաների մայր։

Փանոս աղան հայրենիքից վերադառնալուց յետոյ Տէր Խաչատրի հետ առաջուց ինչ որ խօսակցութիւն է ունենում Սիմօնի մասին և միւս օրը նրան ուղարկում է Տէր Խաչատրի մօտ, որպէսզի տեսնէ, հարցաքննէ և իմանայ, թէ ինչ ընդունակութիւններ ունի։

—Քանի՞ տարեկան ես, այ տղայ, հարցնում է Տէր Խաչատուրը։

—Քսան երեք տարեկան եմ, տէրհայր, պատասխանում է Սիմօնը.

—Ուսում ունիս.

—Հրամերես, ունիմ, տէրհայր.

—Ի՞նչ ես կարդացել.

—Նոր կտակարանը, հին կտակարանը, Գործք Առաքելոցը, Ոսկեբերանը... դի՛փ կարդացել եմ, տէրհայր... Շամչեանն էլ եմ կարդացել.

—Շամչեանի քերականութիւնն էլ գիտես.

—Հրամերես, տէրհայր, մինչև վերջը կարդացել եմ։

Տէր Խաչատուրը մի րոպէ լռում է. նրա դէմքը թէև ոչինչ չի արտայայտում, բայց մտքումը նա ինքնիրան խոստովանւում է, որ Շամչեանից ինքը մի-երկու գլուխ է միայն կարդացել։

ցել։ Ջահիլ ժամանակը ու թողել սաստիկ խրթին լինելուն համար։

—Էլի ի՞նչ ես կարդացել, հարցնում է նա խրոխտաբար, աշխատելով խեղդել սրտի պատճառած անհանգստութիւնը։

—Պղնձէ քաղաքը, Էֆիմերդէն ու վեցհազարեակն եմ կարդացել.

—Վեցհազարեակը...

—Հրամերես, տէրհայր, բոլոր սատանաներին կարող եմ գլխիս հաւաքել, աղօթքները ունիմ... սև կատու է հարկաւոր, բոլորովին սև պէտք է լինի, մին էլ՝ ամայի տուն է հարկաւոր...

—Ա՛յ տղայ, դա հօ անհաւատութիւն է, նկատում է Տէր Խաչատուրը լրջօրէն.

—Հրամերես, տէրհայր. բայց ես քրիստոնեայ եմ և հաւատում եմ Աստծու զօրութեանը։

Տէր Խաչատուրը զգուշութեամբ ծածկում է դէպի միւս սենեակը տանող դուռը, որովհետև տէրտէրակինը սատանաներից սաստիկ է վախենում, և կրկին գալիս ու նստում է իր տեղը. սենեակում մի քանի րոպէ լռութիւն է տիրում. Տէր Խաչատուրը պարզ տեսնում է որ առաջը կանգնած ջահիլ տղէն նրանից աւելի գիտութիւն ունի. եթէ նա խոնարհ լինի ու հնազանդ, իհարկէ, նրա գիտութիւնից Տէր Խաչատուրը վնաս չի ստանալ. գուցէ մի բան էլ ինքը սովորի ու ծխա-

կանները՝ զարմացնի։ Տէր Խաչատրի լռութիւնը Սիմոնի սրտին թրթռոց է պատճառում.—մի գուցէ նրա ունեցած գիտութիւնը տէրհօր աչքին փոքր թւայ. և ահա այս անգամ նա է համարձակւում կտրել լռութեան թելը.

—Նարեկից քաղած ու անգիր արած աղօթքներ եմ իմանում, տէրհայր. հիւանդին կըբժշկեմ, փակ դուռը բաց կանեմ, բաց դուռը կըփակեմ... —Եօթը տուն առանց այբի սաղմոսներովը չար նազարից կազատեմ, կոկորդում խրւած ոսկորը դուրս կըհանեմ...

—Այ տղայ, էդքան բան ո՞րտեղ ես սովորել, նկատում է վերջապէս Տէր Խաչատուրը կոտրւած ձայնով.

—Տօնացոյցն ու Մաշտոցը, շարականն ու Այսմաւուրքը հազար անգամ ձեռովս եմ անցկացրել, շարունակում է Սիմօնը աւելի համարձակ ձայնով։

—Նստիր, այ տղայ, էլ ո՞ւր ես կանգնել, ասում է Տէր Խաչատուրը և ինքն իրան զարմանում, թէ ինչ է ասում։ Սիմօնը մնում է կանգնած. Տէր Խաչատուրը նորից մտքերի մէջ է խորասուզւում. գիտնական տիրացու ունենալը հեշտ բան չի. մի՛ սխալ քայլ արեցիր, մի՛ սխալ խօսք արտասանեցիր՝ յանկարծ, մին էլ տեսնես, խելքիդ տոպրակի կապը քանդւեց, էն անպիտան

գիտնականն էլ տեսաւ, որ տոպրակի միջումը խելքի տեղ միայն թրիք ու դարման է ածած... դէ, գնա դու այնուհետև հաւատացրու ժողովրդին՝ թէ դա թրիք չի, այլ զուտ խելք ա...

—Ես քո խոնարհ ծառան կըլինեմ, տէրհայր, յանկարծ բացագանչում է Սիմօնը, մտաբերելով Փանոս ամիի տւած խրատը. նա չոքում է և Տէր Խաչատրի վերարկուի քղանցքը համբուրելով ասում.

—Քո խօսքը ու հրամանը ինձ համար սըրբազան օրէնք կըլինեն, տէրհայր, թող Աստւած անիծի ինձ, դժոխքի բաժին դառնամ, եթէ խօսքերիս մէջ մազի չափ սուտ լինի...

Տէր Խաչատուրը գիտնական Սիմօնին այդ դրութեան մէջ տեսնելով՝ միանգամից փոխւում է. կասկածները անհետանում են. տէրհօր սիրտը քնքոյշ ու վեհանձն զգացմունքներով է լեցւում։ Սիմօնի ճակատից համբուրելով՝ բարձրացնում է գետնից և աթոռի վրայ նստացնում. երկար ու բարակ բացատրում է նրան՝ թէ ինչպիսի մարդ և ինչպիսի տիրացու է ուզում տեսնել նրա մէջ։ Սիմօնը ամեն բանի յօժարութիւն է ցոյց տալիս և միւս օրից դառնում Տէր Խաչատրի տիրացուն, մտերիմը և լրտեսը։ Փանոս աղան այդ առիթով նրանց փառաւոր ճաշ է տալիս և 100 մանէթ-

փող ընծայում Տէր Խաչատրին՝ իր ծնողների հոգիների փրկութեան համար։

Տիրացու Սիմոնը վեց ամսի չափ իրան լաւ է պահում. բայց տեսնելով որ ամեն կողմից նրան պատում ու մեծարում են, փողն էլ առատութեամբ է հաւաքւում, երեխայի նման երես է առնում և սկսում է այնպիսի բաներ անել, որոնք դուցէ Ս. գաւառի գիւղերում կարող էին աննկատելի մնալ, բայց Գ. քաղաքում դժւար էր ծածուկ պահել։ Էֆիմերդէն և մի ձեռագիր տետրակ առաջին դրած՝ նա սկսում է դեղատոմսեր գրել ու հիւանդներ բժշկել. դուցէ այդ բոլորը աննկատելի կըմնար, բայց տիրացու Սիմոնը իր թշնամիների թւին մի հատ նորն էլ է աւելացնում, որը, նրան բաւական անախորժութիւններ պատճառելուց ջոկ, կողմնակի արգելք ևս է հանդիսանում և վերջ է տալիս նրա բժշկական գործունէութեան։ Տիրացու Նիկողոսը 12 տարի շարունակ Տիրամօր եկեղեցումն էր ծառայում. ունէր ընտանիք և երեխաներ. տիրացու Սիմոնը և նա պէտք է փոխ-փոխ ման գային Տէր Խաչատրի հետ և եկամուտը կիսէին։ Տիրացու Սիմոնը ինչ որ գողութեան պատճառով տիրացու Նիկողոսին Տէր Խաչատրի առաջ զրպարտում է. վերջինն էլ նրան դուրս է անում եկեղեցուց։ Ահա, այդ տիրացու Նիկողոսը, վրէժխնդրութեան ծարաւովը

վառուած, հետամուտ է լինում, տիրացու Սիմոնի հիւանդներին հարց ու փորձ է անում, խայտառակ բաներ է լսում և մի օր էլ, 10-15 մարդու գլուխը անցած՝ ուղղակի հայ ոստիկանապետի տունն է գնում և ամեն ինչ պատմում։ Ոստիկանապետը այդ մասին մասնաւորապէս տեղեկութիւն է տալիս Փանոս աղային, որի հետ մտերմութեան կապերով էր կապուած։ Մի ժամ չանցած՝ Տէր Խաչատուրը, Փանոս աղան և տիրացու Սիմոնը ոստիկանապետի տունն են գալիս։ Տիրացու Նիկողոսը գրպանից մի դաստա թղթիկներ է հանում ու դնում սեղանի վրայ.

—Էս ինչ է, հարցնում է ոստիկանապետը.

—Հաքիմ Սիմոնի տուած դեղատոմսերն է, պատասխանում է տիրացու Նիկողոսը լըրջօրէն։

Ոստիկանապետը թղթիկներից մինը վեր է առնում և կարդում է հետևեալը.

«Հրեշտակակուխը որ անց կենայ,
«Մալաքէ-Տաուզը կըգայ,
«Նոյեան տապանի լուն կըբերէ.
«Կրտապկես, կուտես,
«Անհնար կըդնջանաս.
«Ամեն։

Կարդացածից ոչինչ չհասկանալով՝ նա զարմացական հայեացք է գցում Տէր Խաչատրի վրայ.

վերջինը մնում է լուռ. Փանոս աղան քթի տակովը թէև ժպտում է, բայց նա էլ ոչինչ չի ասում։

—Էս ինչ ես գրել, հարցնում է ոստիկանապետը տիրացու Սիմոնին.

—Ա՜յ, սրան հարցրէք, մէջ է մտնում տիրացու Նիկողոսը, մի գիւղացի առաջ գցելով.— Թղթիկը սրան է տուել, չեմ իմանում ինչքան էլ փող է առել։

—Ասա, տեսնեմ, ինչի համար ես ստացել էս թուղթը, հարցնում է ոստիկանապետը գիւղացուն։

—Աղա ջան, սարիցը ոչխար էի քշում, հիւանդացայ, ջանս դողում էր, հալս հալ չէր, եկայ քաղաք, ժամկոչ Մաթոսին պատահեցի, լաւ տղայ ա, ափսոս ես, ասաւ, արի, քեզ հաքիմի կուշտը տանեմ, ասաւ...

—Յետոյ...

—Ետոյ... հրէս էս հաքիմի կուշտը տարաւ։

—Յետոյ...

—Ետոյ... նա էլ էդ թուղթը տաւ, մի լիտր ջրի մէջ թրջիր, ասաւ, թղթից կծիր, ջրից խմիր, ասաւ, երեք օրումը կրպրծնես, ասաւ. էն ժամանակ սատանան փորիցդ դուրս կըգայ ու սև դոշի փորը կըմտնի, ասաւ, դոշին կըբռնես ու ինձ կըբերես, ասաւ...

—Էդպէս էլ արեցիր.

—Ոչ.

—Ինչու.

—Դոշիս մեղքը եկայ, աղա ջան.

—Բա դու ոնց առողջացար.

—Չեմ գիտում...

—Ո՞նց թէ չես գիտում.

—Ասենք, աղա ջան, հէնց որ էս հաքիմի տնից դուրս եկայ, դոշս էլ ձեռաց կտրուեց։

—Ինչքան փող տուեցիր.

—Շատ փող առեց, աղա ջան, 14 աբասին համբարեցի ու դրի առաջը...

Այդ միջոցին Տէր Խաչատուրը Փանոս աղային աչքով է անում, նա էլ-ոստիկանապետին. երեքով դուրս են գալիս միւս սենեակը և իրանց մէջ քշփշում. մի քիչ անցած՝ ոստիկանապետը վերադառնում է նախկին սենեակը և հրամայում, որպէս զի մարդիկ ցրուեն իրանց տները, իսկ ինքը յետոյ ամեն բան կիմանայ և կըկարգադրէ։

Մարդիկ ցրւում են. ամենից վերջը դուրս է գալիս տիրացու Նիկողոսը՝ սպրդնած երեսով, գլխիկոր և զայրացած։ Վերջապէս, սուրճ խմելուց յետոյ, դուրս են գալիս նոյնպէս՝ Տէր Խաչատուրը, Փանոս աղան և սևերես տիրացու Սիմոնը։ Փանոս աղան նրանց իր մօտ հացի է տանում։ Երկար ժամանակ ոչ ոք սիրտ չէր անում

տիրացու Սիմոնի հետ խոսել. նա էլ սուս ու փուս գինի էր խմում և բեխերի ծայրերը ոլորում։ Վերջապէս, Փանոս աղան, հացի սեղանից վերկենալով, հինգ մատներովը Սիմոնի թիկունքն է թափ տալիս ու բացագանչում.

—Ա՜յ դու օյինբազ, էդ ինչո՞ր ես անում, այ տղայ.

—Լաւ բան չի, լաւ բան չի, մրթմրթում է Տէր Խաչատուրը։

—Ասենք՝ օյինը յիմարների գլխին ա դրել, հախն ա, թղթիկները քեզ մօտ ա, տէրտէր...

—Հրէս, սրանք են էլի, ասում է Տէր Խաչատուրը և թղթիկների դաստան դնում սեղանի վրայ. ոստիկանապետի ձեռից էր նա առել. Տիրացու Սիմոնը իսկոյն վեր է կենում տեղից ու փախչում միւս սենեակը։ Տէր Խաչատուրը թղթիկներից մի-մի հատ վեր է առնում, կարդում է ու մի կողմ դնում.

«Քամին զարնէ, փէշդ բանայ,
«Քօռը տեսնէ ու ծիծաղայ։

—Այ դու անպիտան, տես, ինչ ա գրել, նկատում է Փանոս աղան։

«Աչքերդ սև ա,
«Դօշդ կերևայ,
«Տէր, դու ողորմեա։

—Ի՞նչ լաւ ա գրում, տէրտէր, հը՞...

—Ի՞նչն ա լաւը, օրհնած, դա դեղ ա որ տալիս ա հիւանդին... տես, տես, էս թղթի վրայ ինչ ա գրել... սատանի խելք ունի էդ անպիտանը. «Գամենում ես որ դատաստան չտեսնես՝ Վանք սիրէ, ժամ սիրէ, թաբախ սիրէ»։

—Հա, հա, հա... դրուստ ա ասում, էլի՞...

«Թէ շան հետ գործ ունենաս՝
«Լուն քեզանից կըլի անպակաս։

—Վայ քու գլուխը չմեռնի, Սիմոն, հա, հա, հա...

—Սպասիր, էստեղ գրաբառ ա գրած. «Եւ առաքեաց Դաւիթ ընդ առաջ նոցա, զի էին արքն անարգեալք յոյժ և ասէ. «Նստարուք յԵրիքով, մինչև աճեսցեն մօրուք ձեր»։

—Դա ինչ ա ասում, տէրտէր.

—Միրուքի վրայ ա ծիծաղում, Փանոս... ա՛յ, էլի գրաբառ ա գրած. «Եւ արար Աստուած զդազանս և ետես, զի բարի են.

«Յետ այնորիկ մուկն ծնաւ զթաւշան,
«Թաւշան ծնաւ զաւանակ,
«Աւանակ ծնաւ զփաշա
«Եւ զամենայն զհարէմ նորա.
«Յիշատակ նոցա անիծեալ եղիցի
«Ի պերճութիւն փորին Սիմէօնի»։

—Ի՞նչ ա ասում, տէրտէր.

—Ո՞վ ա իմանում, շատ խրթին ա գրած...

—Տէրտէր, ինչ ուզում ես, ասա, խելօք գլուխ ունի Սիմօնը. եպիսկոպոսի գլուխ ունի, էն առէք-կերէքը վկայ, դրուստ եմ ասում։

—Եպիսկոպոս չէ... բայց խելքումը զատմատ կայ... տես, տես, դեղերի անունները էլ կայ գրած... ը՞հ, հողեմ էն հիւանդի գլուխը, որ սրանցով առողջանայ պըտի...

—Ի՞նչ դեղեր են, սինամաքի հօ կա՛յ...

—Էլ ինչ ասես որ չկայ էստեղ. «ածուխի փոշի, ձիան թրիք, հանքային աղ, ներկած ջուր, ծեծած սիսեռ, հաշիշախառն օղի, սպիտակ ագռաւի ծիրտը, չալ աղէսի վզաքոքի բուրդը, չըղջիկի լեարդը, պառաւ յոպոպի լեզուի իւղը»... վա՛յ քո տունը չքանդուի, թուքը բերնումս չոբացաւ...

—Հա, հա, հա... տէրտէր, էդքան բան որ գրել ա, հալբաթ մարդը մի բան իմանում ա, հը՞, ոնց ես կարծում...

—Ի՞հարկէ իմանում ա, ո՞վ ա ասում թէ չի իմանում. բայց ախար էդպէս չի՞ կարելի թղթեր բաժանել...

—Ի՞հարկէ, չի կարելի. Սիմո՛ն, Սիմո՛ն, կանչում է Փանոս աղան։ Դուրս է գալիս որ Սիմօնը վաղուց է փախել։ Հետևեալ օրը Տէր Խաչատուրը հայրաբար նրան խրատում է և այն օրից տիրացու Սիմօնը դեղատոմսեր ծախելը վերջ է անում։

Ասենք այդ չարութիւնները տիրացու Սիմօնը անում էր միայն առաջին տարիները, երբ դեռ ևս շատ ջահիլ էր, անփորձ և քաղաքի բարք ու վարքին անտեղեակ. իսկ այժմ, երբ տասնեակ տարի է անցել, նա բոլորովին փոխուել է, դառել է թէ փորձառու և թէ հեռատես։

Տիրացու Սիմօնի տունը բակի կողմից նեղ ու երկար պատշգամբ ունի, երկու փոքրիկ լուսամուտներով. ահա, այդ պատշգամբում նա երեխաներ է կարդացնում։ Առաւօտեան՝ աղջիկ ու տղայ գիրքն ու փալասը գլկախառնած գալիս են այնտեղ, փալասը պարզում են յատակի վրայ, նստում են վրան, գրքերն էլ բաց են անում ու դնում ծնկների վրայ։ Պատշգամբի մէջտեղում դրած է մի հասարակ սեղան, վրան-մի երկար ու բարակ ճիպոտ։ Մինչև տիրացու Սիմօնի տուն գալը՝ նրա կինը—Բերսաբէ խանումն է դաստիարակում աշակերտներին։ Գետնախնձորով լիքը դաշտը ձեռին նա նստում է սեղանի առաջ, ճիպոտը դնում մօտին և հրամայում, որպէս զի աշակերտները բարձրաձայն երգելով կարդան իրանց դասերը և այնպէս սովորեն։ Եւ ահա բարձրանում է սարսափելի ճղատց. բասօն դիսկանտի մօտ նստած, բարիտոնն էլ սոպրանոյի մօտ՝ միմեանց հետ մրցել են ճգնում։ Այդ միջոցին մի չարաճճի երեխայ ձեռը տանում է և հարևանի փա-

փուկ մսից յանկարծակի կմշտում. «վ ա յ» բղաւում է վերջինը. «ս ու ս ա ր ա» բղաւում է նոյնպէս Բերսաբէ խանումը և ճիպոտը իջեցնում խեղճի վզին. վերջինը թէև լռում է, բայց դէմքը կնճռած՝ երկար ժամանակ համ վիզն է քորում, համ էլ կմշտած տեղը։ Մի ուրիշ երեխայ ձեռը պարզում է և հարեանի պատառոտուն շորի ծակերից մի կտոր բամբակ է դուրս քաշում, փչում է նրա վրայ ու բաց թողում օդի մէջ. տեսնողները համ բարձր ձայնով կարդում են, համ էլ ժպտուն աչքերով բամբակի թռիչքը զննում. վերջինը թառսի նման գնում Բերսաբէ խանումի քթածակի մօտ է նստում ու խտտոց պատճառում. Բերսաբէ խանումը առանց բան հասկանալու քիթն է քորում. երեխաներն էլ, չկարողանալով այլ ևս իրանց զսպել, բարձրաձայն ծիծաղում են. ճիպոտը այդտեղ էլ նրանց կարգի է բերում։ Երեխաներից մինը աւետարան է կարդում, միւսը Նարեկ, երրորդը Վարք Սրբոց, չորրորդը Տելեմաք։ Օր չի անցկենում, որպէս զի աշակերտներից մէկն ու միւսը առանց ծեծ ուտելու կամ ծնկաչոք պատժւելու տուն գնայ. դա նրանց համար ուսումնական անհրաժեշտ պիտոյքներից մինն է դառել. իսկ չքաւորների որդիքը տիրացու Սիմօնի համար համ բազար են գնում, համ բակն են մաքրում, համ հաւերին

կուտ են տալիս և կովերին դաշտ քշում արածացնելու, համ էլ չարաչար ծեծւում։

Տիրացու Սիմօնի աշակերտները տարւայ ընթացքում մի շաբաթ միայն համարեա անծեծ են մնում. դա՝ Ս. Յակոբայ տօնին յաջորդող շաբաթն է։ Չեմ իմանում ինչ աւանդութեան վրայ հիմնւելով՝ աշակերտներից ամեն մինը Ս. Յակոբայ տօնին մի-մի ողջ աքաղաղ է ընծայ բերում վարժապետին։ Տիրացու Սիմօնի ներքնատունը լեցւում է աքաղաղներով. նրանց կրկռոցն ու ծուղրուղուն անկարելի է դարձնում աշակերտների հետ պարապելը և կամ քնելը. իսկ լուսադէմին՝ երբ առանց հաւ մնացած աքաղաղները մինը միւսի ետևից սկսում են ծուղրուղու կանչել, թեները թափահարել, կրկռալ ու միմեանց հետ կռւել, տիրացու Սիմօնի տունը Սոդոմ-Գոմոր է դառնում. բայց նա շատ շուտով է դրա առաջը առնում. աքաղաղների մի մասը սրանրա վրայ ծախում է. պատահում է՝ որ աշակերտի մայրը իր ընծայած աքաղաղին նորից փող է տալիս ու ետ առնում, որպէս զի Բերսաբէ խանումի աչքը որդու վրայ քաղցր լինի։ Աքաղաղների միւս մասը տիրացու Սիմօնը օրօրի վրայ իր ձեռովը մորթում է և ուտում՝ որը խաշած, որը տապկած, որը խորոված, որն էլ ծուխի մէջ բռնած։ Քանի աքաղաղները ողջ են

և իրանց ծուղրուղուններովը յիշեցնում են տիրացու Սիմոնին, որ նա իր ընտանիքի հետ միասին աշակերտների բերած աքաղաղների մսովն են կերակրւում, նա նրանց ոչ ծեծում է և ոչ դասերը խստութեամբ հարցնում. բայց հէնց որ աքաղաղների ձայները կտրւում են, միսն էլ ուտւում-վերջանում, ճիպոտն ու ծեծն էլ նորից վերանորոգում են իրանց քմահաճ բռնակալութիւնը։

Տիրացու Սիմոնը լաւ կօնծած ժամանակը շատ զարճասէր է դառնում. իսկ զարճութեան առարկան բացառապէս լինում է կատուն։ Երբ որև է խնջոյքից և կամ մեռելահաց ուտելուց յետոյ տուն է գալիս՝ աշակերտներին դուրս է կանչում բակը և հրամայում, որպէս զի կատու բռնեն. մի քանի րոպէ չանցած՝ երեխաները երկու-երեք կատու են բերում, ձեռների մէջ խտրտած. տիրացու Սիմոնը ամեն մինի պոչի արմատից կարճ թել է կապում ու բաց թողում։ Կատուները մի րոպէ մնում են անշարժ և աշխատում են պարզել այն հարցը, թէ արդեօք ինչ օտարոտի փոփոխութեան է ենթարկւել նրանց կազմը. յետոյ, գլխները աջ ու ձախ դարձնելով, պոչերին են մտիկ տալիս, բայց նրա վրայ ոչինչ օտարոտի բան չեն նշմարում։ Խեղճ կենդանիների դէմքերից, ասենք, պարզ երևում է, որ

նրանց ինչ որ մի անախորժ բան անհանգիստ է անում և թէ այդ զգում են նրանք յատկապէս պոչերի արմատների մօտ. դրանից ազատւելու համար կանգնած տեղում նրանք մի քանի անկանոն թռիչքներ են անում, բայց իզուր։ Իսկ աշակերտները ծափ են տալիս, դէս ու դէն են վազում, կատուներին են մտիկ տալիս, ծիծաղում են, թռչկոտում և կրկին մտիկ տալիս։ Կատուները վճռական քայլեր են անում և սկսում բակի մի անկիւնից դէպի միւսը վազվզել ու պոչերին մտիկ տալ։ Երեխաները ծափ տալով հետևում են նրանց, իսկ տիրացու Սիմոնը բոլոր ժամանակը լուռ ու մունջ ծխախոտի չիբուխը բերնին թամաշա է անում և անձայն ծիծաղում։ Կատուները գնալով կորցնում են իրանց համբերութիւնը, որովհետև անախորժութիւնից ջոկ ինչ որ ցաւ էլ են զգում. և ահա, գլուխը կորցրածի պէս, սաստիկ թռիչքներ են անում, իրանք-իրանց պատերին են խփում, հողի կամ կանաչի վրայ թաւալ-թաւալ են գալիս և վերջապէս, բոլորովին անճարացած ու շնչասպառ, սկսում են թունդ ձայնով մլաւել, խղճուկ դնչիկները երեխաներին դարձնելով։

—Խռիկ տէք, բացագանչում է տիրացու Սիմոնը։

Աշակերտները գոռում-գոչումով վրայ են պրծնում, իսկ թշւառ չորքոտանիները, աղմու-

կից սարսափահար եղած, իրանց վերջին ոյժն են հաւաքում, թռչում են պատովը և իրանք իրանց գցում՝ կամ դէպի փողոց և կամ հարևանի բակը։ Այդպէս էր զարճանում առաջին տարիները տիրացու Սիմոնը, երբ գինովցած էր լինում։ Բայց այժմ այդ զարճութիւնն ևս նա մոռացել է, որովհետև քահանայական թեկնածու է համարւում, թշնամիներ շատ ունի և իրան պէտք է զգաստ պահէ, որպէս զի անսպասելի խոչնդոտների չհանդիպի։

VI

—Սարկաւագ, քիթդ էլի՛ է կարմրել, հարցնում է տիրացու Սիմոնը, պահարանից իր շապիկը դուրս բերելով։

—Սպասիր, քո քիթն էլ կըկարմրի շուտով, պատասխանում է Սահակ սարկաւագը անվրդով ձայնով ու նոյնպէս իր շապիկը դուրս բերում պահարանից։

—Մինչև իմ քիթը կարմրի, քո կարմրած քթի արմատից նոր քիթ կըծլի, ասում է Սիմոնը և ժպտալով սենեակից դուրս գալիս. սարկաւագը ոչինչ չի պատասխանում. միայն երկու-երեք անգամ կանգնած տեղումը շուռումուռ է գալիս

և յուշիկ քայլերով գնում-մտնում ժամկոչ Մաթոսի խցիկը։

—Ա՜յ քեզ բարով, ասում է Մաթոսը, բարձրանալով տեղից և նրա մազոտ ձեռը սեղմելով։

—Հը՛, ո՞նց ես, մեր տղայ, մէ տուր տեսնեմ, մշմշում է սարկաւագը սիրտ մտնող ձայնով և աջ ձեռի բութ ու ցուցամատը առաջ պարզում։ Մաթոսը նրան բուրնոթի է տալիս. նա համ քաշում է բուրնոթին, համ էլ շուրջը հոտոտում.

—Ի՞նչ ես հոտոտում, թագի հօ չես, նկատում է Մաթոսը քմծիծաղ տալով։

—Ասլանի պտուկը ո՞րտեղ ես դրել, Մաթոս, վերջը հաշիւ կանենք, շշնչում է սարկաւագը վախվխելով ու ժպտալով։

—Ուշացար, սարկաւագ ջան, ասում է Մաթոսը, արաղի դատարկ շիշը ցոյց տալով։

—Ըսկի՛ չկայ...

—Տեսնում ես, էլի... փող տուր, գնամ բերեմ։

Սարկաւագի դէմքից ժպիտը անհետանում է. սուս ու փուս, գլուխը աջ ու ձախ շարժելով, համր քայլերը նա դէպի դուռն է ուղղում։

—Պողոս առ մեզ զինչ հրամայէ, կանչում է նրա ետևից Մաթոսը։ Սարկաւագը կիսով չափ նրան է դառնում, ձեռներովը և գլխովը յուսա-

հատական շարժումներ է անում ու գնում եկեղեցի։ Այնտեղ արդէն աղօթողներ են հաւաքւել. ծանր քայլերով Սահակ սարկաւագը անցնում է նրանց միջով, երեսը խաչակնքելով Տիրամօր պատկերն է համբուրում, բարձրանում է ձախակողմեան դասը և երկու ձեռների ափերը քունքերին մօտեցնելով՝ երկար ու բարակ լուսամտից դուրս նայում... մթնշաղը համարեա ցրւել է. մարդիկ ստւերների նման անց ու դարձ են անում փողոցում...

—Հա՛ տիրացու Սիմօնի ձայնը լսես, հա՛ մի արշին էժանագին չիթ պատռես, ողջ մէկ է, քաւորը ջան, ասում է Տէր Մարուքէն հեղնական ձայնով ու բարձրանում դասը. քաւորը մնում է ցածում. տիրացուն փիլոն է տալիս. Տէր Մարուքէն այդ օրը պատարագիչ է. նա երեսը խաչակնքում է և ժամը օրհնում. ժամասացութիւնը սկսւում է։

Տէր Մարուքէն քահանաների մէջ ամենից ջահիլն է. 45 տարեկան հաղիւ լինի. ամրակազմ է և հաստափոր. վիթխարի կերպարանք ունի. երկար մազերը առիւծի բաշի նման ծածանւում են նրա ուսերի վրայ. իւղալի աչքերը արևածաղկի յատկութիւն՝ունին. վերջինը կլորիկ երեսը արեգակին է դարձնում, իսկ Տէր Մարուքէի աչքերը, նրա կամքին բոլորովին հակառակ, շուտ

են գալիս միշտ դէպի այն կողմը, որտեղ գեղեցիկ սեռի ներկայացուցիչներն են կանգնած կամ նստած։ Ասում են, թէ Տէր Մարուքէն մանկութիւնը դալմուխների մէջ է անցկացրել և հմուտ ձիարածի հռչակ է վայելելիս եղել նրանց մօտ. այնպիսի ճարպիկութեամբ էր, ասում են, հեռւից օղակը գցում ձիան վզին ու բռնում, որ նոյն իսկ աւազակները մնում էին բոլորովին հիացած և միայն բացագանչում էին. «բ ա՛ ա՛ լ ի, բ ա՛ ա՛ լ ի, չ օ՛ խ ե ա խ շ ի»։ Բայց Գէւօն (այդպէս էր Տէր Մարուքէի աշխարհիկ անունը) այդ քանքարը գետնի մէջ է թաղում և, իր կեանքի 18-րդ գարունը հաղիւ բոլորած, գալիս է Գ. քաղաքը։ Գալու գլխաւոր պատճառը ձայնն է լինում, բարձր, ուժեղ ու զիլ ձայնը. բոլոր լսողները հիանում էին նրա ձայնովը և խորհուրդ տալիս անպատճառ տէրտէր դառնալ։ Նա էլ վերջապէս համոզւում է որ աւելի լաւ է տէրտէր լինել, քան ձիարած մնալ, թէկուզ լաւ ձիարած. այդ պատճառով Գ. քաղաքն է գալիս և Սարգիս եպիսկոպոսի ընծայարանում սկսում ուսում առնել։ Հինգ տարի շարունակ նա թէ ուսում է առնում և թէ եկեղեցում տիրացութիւն անում. վեցերորդ տարւայ սկզբում՝ մարդիկ մի գեղեցիկ օր իմանում են, որ Գէւօն իր վարժապետներից մինին փառաւորապէս ծեծել է ու քաղաքից փա-

խել. ինչու համար է նա ծեծել՝ այդ մնում է գաղտնիք. նույն իսկ ծեծուած վարժապետը—Բիւլբիւլենց Կոտրատիոսը, երբ նրան այդ մասին հարց էին տալիս, այնպիսի անորոշ պատասխան էր տալիս, որ լսողը, գիտեցածն էլ մոռանալով, թքում էր ու հեռանում։

Գէլօն մի քանի տարի ամբողջ Անդրկովկասը ոտի տակ է տալիս. որտեղ նա գնում է, իսկոյն ձայնն է ցոյց տալիս, երգեր է երգում, գինեվաճառների ուշադրութիւնն է իր վրայ դարձնում, սազանդարների հետ է մրցում. միևնոյն ժամանակ ուտում է, խմում է, փող էլ է աշխատում։ Կարճ միջոցում՝ քօռ աշուղների, չօնգուր ածող լօռեցիների, թառ ածող նուխեցիների, գլխնեբին ջրով լիքը գուժեր դնող ու վազվզող փէհլէվանների հետ դառնում է սրտակից ընկեր։ Եթէ մայիս ամսում գնայիք Թիֆլիս և Օրթաճալայի բաղերում զբօսնելիս ձեր ականջին հասնէր մի զիլ ձայն, որը երգելիս լինէր՝

«Ջան ենք ասում,
«Ջան ենք լսում.
«Ուտում ենք գեղարքունին,
«Կօնծում ենք կարմիր գինին՝

կարող էիք համարձակ մօտենալ այն խմբին, որտեղից այդ ձայնն էր գալիս ու հարցնել. «Ջ ա ն Գ է լ օ ն է ս տ ե ղ ա»։ Իսկոյն մի յաղ-

թանդամ մարդ գինու թասը աջ ձեռին կըցատքէը տեղից, ձախ ձեռի բուռթ ու միջամատը չփչփացնելով, փորովն էլ ծիծաղաշարժ շարժումներ անելով, կըպատասխանէր ձեզ երգելով.

«Աբի, գնա՞նք դամ՞ծնեն,
«Ուտենք սա՞խրի մարՀ՞ծնեն...

Այդտեղ արդէն նրա երեսին նայելով՝ դուք իսկոյն կըճանաչէիք ձեր ծանօթ հռչակաւոր ձիաբուծ Գէլօյին և, իհարկէ, շատ... կ ո ւ ր ա խ ա ն ա յ ի ք։

Գէլօն մի օր էջմիածին ուխտ է գնում, իրան է ցոյց տալիս, ուրիշներին է տեսնում. նրա ձայնին այնտեղ էլ են հաւանում։ Գէլօն սկսում է ք ա հ ա ն ա յ ա կ ա ն խ ն դ ի ր ը շօշափել, բայց երբ նկատում է, որ ուրիշներն էլ նրա գ ը պ ա ն ն են կամենում շօշափել, սաստիկ է վիրաւորւում, ուխտը կիսատ թողնելով դուրս է գալիս Էջմիածնից և անցնում դէպի հիւսիսային Ռուսաստան բաղդ որոնելու։ Ճանապարհին ինչ որ եկեղեցականների հետ աստուածաբանական խնդիրների վերաբերմամբ վէճի է բռնւում և տեսնելով որ հակառակորդը յօժար կամքով չի կամենում համաձայնւել նրա կարծիքների հետ, բռնում նրան կարգին ծեծում է, հակառակորդն էլ նրան է ծեծում. հետևանքը լինում է այն՝ որ Գէլօն ութը ամիս բանտն է նստում, մի կտոր սև հաց և մի

ման ջուր միայն օրական ստանալով։ Բանտից հէնց որ դուրս է գալիս, իսկոյն վագոն է նստում և շտապում Ն. քաղաքը, որտեղ ամեն տարի համաշխարհային մեծ տօնավաճառ է լինում, հայ վաճառականներ էլ ամեն կողմերից հաւաքւում են այնտեղ։

Գէւօն հոտոտելով—հոտոտելով փնտրում—գտնում է նրանց, ամեն մինի հետ նստում հաց է ուտում, ձայնն է ցոյց տալիս, երգեր է երգում և այդպիսով բոլորի քէֆը բերում։

Գուցէ ձեզ յայտնի է թէ 80-ական թուականների հայ վաճառականին դուր գալու համար ինչ էր հարկաւոր.—առանց ամաչելու շողոքորթիր նրան, ինչքան լեզուդ զօրում է. ա ղ ա տիտղոսը ինչքան կարող ես շուտ-շուտ արտասանիր. քեզ խ ե ղ ճ ձևացուր, նրան ե ր ջ ա ն ի կ. հիւրանոցի սպասաւորի անելիքը դու արա և միևնոյն ժամանակ դէմքիդ վրայ հրճւանք ցոյց տուր։ Եթէ աղան իր հետ հաց ուտելու քեզ արժանացնէ՝ ամենից առաջ նրա կենացը խմիր. այդ առիթով ոգևորւիր ու ճառ ասա. եթէ աղան ազգին կոտրած ասեղ և կամ հոտած ձու է նւիրել, ասեղից ուղտ շինիր, ձուից-ձի և փառաբանիր նրա անունը. իսկ եթէ ուժեղ էլ ձայն ունիս և աղայի ստամոքսի մարսողութեան օգնած լինելու համար ազգային երգեր էլ ես երգում՝ այն ժամանակ երանի տուր ինքը ամիս քեզ փորումը պահողին, որովհետև աղան արդէն յաղթւած է. փող էլ կրտայ քեզ, ուզում ես՝ տէրտէր էլ ձեռնադրել կրտայ, բ ա ր ե ր ա ր դ ու պ ա շ տ պ ա ն դ էլ կըլինի. իսկ երբ հասարակութեան մէջ այդ մասին խօսք լինի՝ աղան մեծահոգութեամբ կարտասանէ.

—Է՜հ, խեղճ մարդ ա, մի փոր հաց ա՝ թող գնա ինձանով ուտի, հալբաթ մի օր հոգուս ո ղ ո ր մ ի ս կրտայ։

—Ախար վ ն ա ս ես տալիս հասարակութեան, ա՛յ մարդ, տղէտ, խարերայ և անառակ մարդ է, ուր ես նրան քահանայ ձեռնադրել տալիս։

—Ինչ ուզում ա թող ըլի, շշնչում է աղան ականջիդ.—գիտես ինչ կա՛յ... ես իմ ք է ֆ ի ն եմ հարցնում. ք է ֆ ս ուզում ա, կանեմ, չի՛ ուզում, չեմ անիլ. դրուստն ասած՝ ես շատ եմ սիրում իմ բակի շանը-Օսմանին. լա՛ւ շուն ա... ինչո՛ւ... նրա համար որ՝ ինչ ժամանակ էլ տուն եմ գալիս, գիշերով թէ ցերեկով, Օսմանը հէնց որ ինձ տեսնում ա թէ չէ՝ իսկոյն ցատքում ա տեղից, պոչը բուլդի-բուլդի անելով առաջ ա վազում ու ոտներս լիզում... քէֆս ա գալիս. խօսքը մեր մէջ թող մնայ, միայն իմ Օ ս մ ա ն ի ն մ ա ն ո տ ն ե ր ս լ ի զ ո ղ ն ե ր ի ն կանեմ ես լաւութիւն, հասկացա՞ր...։ Երկու տարի առաջ մի ու-

ըիշ շուն էի պահում, Մաշադի էր անունը. տոճ, մի օր էդ շուն շան որդուն լաւ ուտացրի, քէֆիս համար էլ հանաքով ոտս նրա պոչի վրայ դրի ու հուպ տուի. ինչ ես կարծում... վրէս յարձակուեց ու վարտիքս երեք-չորս տեղից ճղրտոտեց. հրամայեցի, էնքան ծեծեցին՝ մինչև որ տեղնուտեղը սատկեց. իսկ Օսմանս չի կծում. մի քանի անգամ փորձեցի, տեսայ որ չէ... իրան հաց տուողին ճանաչում ա. շատ որ պոչը հուպ չեմ տալի՝ խղճուկ ձայնով լաց է լինում միայն ու կօշիկիս կաշին լիզում... ախար ոնց չպահպանեմ էդպիսի շանը, հը՞, հոգուս էլ մեղք ա... հրմի հասկացար...:

Դու մի ասա, Գէլօն այդ բանը լաւ է հասկացած եղել, որովհետև տօնավաճառի ամենաթունդ ժամանակը նա իր համար ս ե փ ա կ ա ն բ ա ր ե ր ա ր է ճանկում. Մինաս աղան է լինում նրա բարերարը։ Մի օր՝ լաւ ուտելուց, լաւ էլ խմելուց յետոյ՝ Մինաս աղան Գէլօյին հետն առած բաղանիս է գնում. երկար ու բարակ նրանք այնտեղ լուացւում են. Գէլօն այնտեղ էլ է երգում. ինչպէս է լինում քիսաչին դուրս է գալիս. իսկ Մինաս աղան պահանջում է Գէլօյից, որպէս զի մի ման սառը ջուր ձեռին բռնած՝ մի լաւ ճառ խօսի ու յետոյ ջուրը ածի նրա գլխին։ Գէլօն իսկոյն յօժարում է. ամանով ջուրը ձեռին

բարձրանում է գոլորշիանոցի եօթներորդ աստիճանի վրայ ու Մինաս աղայի համար արտասանում հետևեալ ճառը.

—Ո՞վ դու, աղաների աղա-Մինաս աղա. դու, որ երկնքի ցօլքն ես, Մինաս աղա. դու, որ արեգակի ամենաթափանցիկ եղբայրն ես, Մինաս աղա, թոյլ տուր ինձ... ինձ, որ գարշելի զեռուն եմ, Մինաս աղա, ինձ, որ քո ոտների աննման տապանների պոկ եկած ցեխ եմ, Մինաս աղա, այո, թոյլ տուր ինձ-սառը ջուր ածեմ քո թարմ ճակատի վրայ, Մինաս աղա, և թող ծովը ցնծայ՝ որ ջուրը բաղդ ունի թարմացնելու այն պատկառելի մորթը, որով, ով Մինաս աղա, ծածկուած է քո աղայական գանգի սպիտակ ոսկորը...

—Թոյլ եմ տալիս, ածիր, հոգիս, ածիր, Գէլօ ջան, ձեռներդ յոգնեցին, մշմշում է Մինաս աղան մի այնպիսի ձայնով, կարծես, խիստ շատ համեղ բան էր կերած։ Գէլօն ջուրը ածում է, Մինաս աղան էլ նրա շրթունքներից է համբուրում. ճառը նրա վրայ մեծ ազդեցութիւն էր արել. նրա սիրտը եկուն խմորի նման հա բարձրանում էր, հա ծաւալւում։ Մի ժամ անցած՝ նրանք երկսով թէյ էին խմում Մինաս աղայի սենեակում. Գէլօն քիչ էր խօսում, իսկ Մինաս աղան ստէպ-ստէպ նրա բաժակի մէջ կոնեակ էր ածում և ասում.

—Խմիր, այ տղայ, դարդ մի արա, Աստուած ողորմած ա. քո խօսքերը ես մինչև մահս էլ չեմ մոռանայ. եթէ մինը հարցնի թէ աշխարհումս մեղրից աւելի քաղցրը ինչն ա՝ Գէւօյի լեզուն ա ես նրան կըպատասխանեմ։՝

—Սաղ ըլես, Մինաս աղա. իմ յոյսը դու ես ու կաս. ուզես՝ մարդ կըշինես. ուզես՝—շուն. քո կամքն ա։

—Տէրտէր, տէրտէր պէտք ա քեզ ձեռնադրել տամ, այ տղայ, էդպէս քեզ ես չեմ թողալ. մեր հասարակութեան համար քեզ նման մարդիկ են հարկաւոր. սպասիր, թէ ողջ մնացինք՝ Գ. քաղաքը հէնց որ վերադառնամ՝ ամեն բան կարգի կըգցեմ։

Մի քանի օրից Մինաս աղան Գէւօյին փող է տալիս և ուղարկում Գ. քաղաքը, խոստանալով, որ վեց ամսից, երբ նա նոյնպէս կըգայ այնտեղ, միմեանց հետ կըտեսնուեն։ Գէւօն Ն. քաղաքից դուրս է գալիս, որպէս զի Գ. քաղաքը գնայ. բայց ճանապարհին կասկածանքների մէջ է ընկնում... մի գուցէ Մինաս աղան իր խոստումը չկատարէ. փորձը նրան ցոյց էր տուել, որ աղաները գինին ինչքան շատ էին խմած լինում, այնքան էլ խոստումներ շատ էին անում. բայց հէնց որ գինու գոլորշին նրանց գլխներից դուրս էր թռչում, տուած խոստումներն էլ գոլորշու հետ թռչում—անհետանում էին։ Բացի դրա-

նից՝ մինչև Մինաս աղայի Գ. քաղաքը վերադառնալը վեց ամիս ժամանակ կար. ուրիշ տեղերում էլ կարելի էր բաղդ որոնել. այդ բոլորը աչքի առաջ ունենալով՝ Գէւօն փոխում է ճանապարհը և գնում Զ. քաղաքը։ Այնտեղ իմանում է, որ մարդիկ ինչքան հարուստ են, այնքան էլ յիմար են։ «Ինձ էլ էդ ապէտք» ասում է Գէւօն մտքումը, գնում երեցփոխանին է ներկայանում, կիրակի օրն էլ եկեղեցում երգում է ու ձայնը ցոյց տալիս։ Աղաները նրա ձայնին հաւանում են և ռոճիկ նշանակում՝ որպէս զի պատարագի ժամանակ եկեղեցում դպրութիւն անէ։ Այդ քաղաքում Գէւօն շատ շուտով է ծանօթանում գիղնեվաճառների հետ և սկսում է կատաղի քէֆեր անել. նկատելով, որ փողն էլ առատ է, պատահողից պարտքով փող է վերցնում։ Նրա գործերը, կարծես, լաւ էին գնում. բայց յանկարծ մի գիշերը, քէֆի ժամանակ, այդտեղ էլ նա մի մարդու ծեծում է ու մի ամիս բանտը նստում։ Բանտից դուրս գալուց յետոյ՝ երեցփոխանը նրան այլ ևս թոյլ չի տալիս եկեղեցում երգել. նա էլ, անճարացած, մի քանի մարդուց ձեռապարտ փող է վերցնում, փախչում-գնում է Մ. քաղաքը և ըստ սովորութեան ուղղակի դիմում այնտեղի աղա երեցփոխանին։ Ինչ է խօսում այնտեղ, ինչ չի խօսում, յայտնի չէ, միայն թէ միւս

օրից նրան լաւ ռոճիկ են նշանակում՝ որպէս զի եկեղեցու համար երգեցիկ խումբ կազմի։ Այդ քաղաքումն էլ Գէլոն սրանից-նրանից պարտքով փող է վեր առնում և այդ փողովը աղիւսի գործարան բաց անում. մի աղջկայ հետ էլ պսակւում է և մի քանի ամիս շատ լաւ ժամանակ անցկացնում. բայց երբ տեսնում է որ պարտատէրերը արդէն շատ են նեղում, ինչ որ կարելի է՝ ծախում փող է շինում և այդտեղից էլ է փախչում իր ջահիլ կնկայ հետ և գալիս, վերջապէս, Գ. քաղաքը։ Վեց ամիսը լրացած լինելով՝ Մինաս աղան արդէն վերադարձել էր տուն։ Գէլոն երեք անգամ գնում է նրա մօտ, բայց տանը չի գտնում. ժամերով խոհանոցում նստած սպասում է նրան, խոհարարուհու բարեսրտութիւնից օգտւելով հաց էլ է ուտում այնտեղ, սուրճ էլ է անուշ անում. վերջապէս, չորրորդ անգամին Մինաս աղան ընդունում է նրան իր առանձնասենեակում և սուր աչքերովը նկատում է, որ Գէլոն առաջւանից աւելի խոնարհութիւն է ցոյց տալիս նրան և մեծ մարդու տեղ է դնում. այո, մեծ բաւականութեամբ նա այդ նկատում է և վճռում՝ անպատճառ նրան քահանայ ձեռնադրել տալ։ Մի քանի օրից Գէլոն, Մինաս աղայի բարեխօսութեամբը, Տիրամօր եկեղեցում երգիչ է նշանակւում։ Բացի դրա-

նից՝ Մինաս աղան, իր փառաւոր դուքանում նստած, համախօսականի թուղթն էլ մօտին դրած, սկսում է ստորագրութիւնները որսալ. ինչ մուշտարի ներս է մտնում, Մինաս աղան աշխատում է ստորագրել տալ նրան թղթի տակին, եթէ նա Տիրամօր եկեղեցու ծխականներից է։ Բայց գործը այնքան էլ աջող չի գնում. ծխականների մեծ մասը ստորագրելուց հրաժարւում է. բացի դրանից գալիս Մինաս աղային իմաց են տալիս, որ Տէր Խաչատուրը, երեցփոխանը և շատերը Գէլոյի քահանայ ձեռնադրւելուն բոլորովին դէմ են։ Մինաս աղան վերջապէս բարկանում է, որովհետև նրա պատիւն են շօշափում, նրա կամքին են հակառակում, Գէլոն այդտեղ երկրորդական առարկայ է դառնում։ Դուքանը թողած՝ Մինաս աղան սկսում է սրա-նրա մօտ գնալ, ահագին աղմուկ է բարձրացնում, բայց, վերջիվերջոյ, հազիւ 20 ստորագրութիւն է կարողանում որսալ։ ստորագրողներից մինն էլ արդէն մի տարի առաջ մեռած ու թաղւած ոմն է դուրս գալիս վերջը։ Գէլոն յուսահատւում է, բայց Մինաս աղան նրան յոյս է տալիս՝ թէ անպատճառ տէրտէր կըլինի։

Տիրամօր եկեղեցու ծխականները, խռովութիւններին վերջ տալու նպատակով ժողով են կազմում, կանչում են Գէլոյին և ասում.

—Աղբէր, թէ դու ինչ պտուղ ես՝ մենք այդ շատ լաւ ենք ճանաչում. այդ պատճառով, ահա, ամբողջ հասարակութիւնը յայտնում է քեզ, որ ոչ թէ քահանայ ձեռնադրել տալ, այլ քո երեսը մինչև անգամ տեսնել չի կամենում, հասկանում ես թէ չէ, ով պէտք է քեզ առանց մեր յօժարութեան քահանայ ձեռնադրէ...

—Ո՞վ է ձեզ հարցնում՝ կամենում էք թէ չէք կամենում. ես կըլինեմ քահանայ և կրգամ կընստեմ ձեր գլխին, ուրիշ ոչինչ, պատասխանում է Գէւօն հպարտութեամբ ու ժողովից դուրս գալիս։

Եւ ուղիղ որ նա քահանայ է ձեռնադրւում շուտով։ Մ. եպիսկոպոսը հրաման է տալիս և Գէւօյին Ա. քաղաքում տէրտէր են ձեռնադրում, անունը դնում են Տէր Մարուքէ ու բաց թողում։ Տէր Մարուքէն գալիս է Գ. քաղաքը և արձակհամարձակ նստում Տիրամօր եկեղեցու այն ծխականների շլինքներին, որոնց քահանան քանի տարի է մեռած էր։

Շատ խայտառակ քահանայ է դուրս գալիս Տէր Մարուքէն. մանաւանդ առաջին տարիները։ Մինաս աղայի և Մ. եպիսկոպոսի նման պաշտպաններ ունենալով՝ նա ոչ ոքից չէր քաշւում, չէր ամաչում. աջ ու ձախ, ով պատահէր՝ բոլորին էլ վիրաւորում էր և կծոտում, ինչպէս մի

որևէ դալմուխի ձի։ Մինաս աղան Տէր Մարուքէին մի հնացած կառք է ընծայում. նա էլ իսկոյն վիճակախաղ է սարքում. և երբ նշանակւած դումարը լիովին ստանում է՝ կառքն էլ ուրիշի վրայ է ծախում. ժողովուրդը տեսնում է այդ ցածութիւնը և սկսում է տրտնջալ։

Ե. եպիսկոպոսից նա մատեան է ստանում և սկսում է փող հաւաքել ինչ որ վանք նորոգելու համար. եպիսկոպոսը յանկարծ մեռնում է. Տէր Մարուքէից փող կամ մատեան են պահանջում. բայց նա ամեն ինչ ուրանում է և հաւաքած փողերը ուտում. ժողովուրդը կրկին է տրտնջում։ Նրան յանձնւած մետրիքական մատեանը իւղոտ ու կեղտոտ է ամբողջովին. մի տեղում սխալ է գրած ու ջնջած. կամ գրածը քերած և ուրիշ բան գրած. միւս տեղում գրածի վրէն թուղթ է կպցրած և ուրիշ բան գրած. սխալներով լիքն է մատեանը. մի եղբօր միակ որդին յանկարծ միւս եղբօր որդիների շարքն է անցնում ու զինւոր գնում. անէծք, նզովք... թափւում են Տէր Մարուքէի գլխին, բայց նա ստում է և յանցանքը ուրիշների վրայ գցում։ Տէր Բարսամի անունով ննջեցեալի տնից ծառան ծրարած փող է բերում եկեղեցի. «Տէր Բարսամը ես եմ» ասում է Տէր Մարուքէն, խաբելով ծառային, և փողը առնում ծոցն է դնում. ժողո-

վուրդը դարձեալ անզօր տրտունջ և զզանք է արտայայտում, առանց որևէ գործնական քայլ կարողանալու անել։ Տէր Մարուքէն յաճախակի ման է գալիս դուքաններում, մի-երկու աբասով փող է հաւաքում, իբր թէ աղքատների համար. ժողովուրդը նրան ամենևին չի հաւատում. բայց դարձեալ փողը տալիս է և երեսը զզանքով միւս կողմը շուռ տալիս։ Տէր Մարուքէն թէև այդ բոլորը նկատում է, բայց կոպէկի նշանակութիւն չի տալիս նրանց։ Առաւօտեան՝ երբ տէրտէր ու ժողովուրդ եկեղեցի են գնում՝ Տէր Մարուքէն եկեղեցու դէմուդէմ գտնւած գինետնից հարբած դուրս է գալիս և փողոցում սաղանդարները քայլերդ ածելով նրան կառք են նստացնում ու տուն ճանապարհում։ Խեղճ ժողովուրդը սաստիկ ամօթից աչքերն է ծածկում ու հեռու փախչում այդ քստմնելի տեսարանից։ Անցնում են տարիները, Տէր Մարուքէն միևնոյն բանը հազար անգամ է կրկնում և ժողովուրդը, վերջապէս, նրան էլ է ընտելանում, ինչպէս ընտելացել է իր մարմնի խորշերից արիւն ծծող միջատներին։

Այժմ Տէր Մարուքէն փոքր բաներով չի սիրում զբաղւել. աւելի մեծ բաների ետևից է նա ընկած. սիրտը սաստիկ փափուկ լինելով՝ որբերին շատ է սիրում մխիթարել, պահել ու պահպանել, եթէ միայն այդ որբերը փողաւոր են.

նա շատ է սիրում այդպիսի հարուստ որբերի համար կ տ ա կ ա տ ա ր նշանակւել։ Գ. քաղաքի որ թաղն էլ մտնես՝ մի-երկու տուն անպատճառ ցոյց կըտան, որտեղ փողաւոր որբեր են ապրում և իրանց ապրուստը Տէր Մարուքէից են ստանում։ Դրանից զոկ՝ ուրիշ ոչ մի բանով նա այլ ևս չի հետաքրքրւում, որովհետև Մինաս աղայի և Մ. եպիսկոպոսի մեռնելներուց յետոյ նրա փուքսը հետզհետէ իջնում է, քթի ծուխն էլ դուրս գալիս և օդի մէջ ցրւում։ Գինեվաճառներից ու մսավաճառներից զոկ ոչ ոք նրա հետ ոչ խօսում է և ոչ ընկերութիւն անում։ «Ի՞նչ գ ո ր ծ ո ւ ն ի մ» իմաստալից առածին հետևելով՝ նա այժմ հանգիստ ապրում է իր համար եկեղեցական տան մէջ, որը զօրով է գրաւել, ոչ կեղեցական տան մէջ, որը զօրով է գրաւել, ոչ գրեհ է տալիս և ոչ դուրս գալիս. տարին հինգ անգամ միայն եկեղեցի է գնում, իսկ մնացած օրերը գինետներում և ուրիշ դրանց համապատասխանող հաստատութիւններում է անցկացնում։ Նրա ծխականների մեծ մասը քաղաքը թողել ու ցրւել է շրջակայ գիւղերը. այդ պատճառով Տէր Մարուքէն տարին մի քանի անգամ կառք է նստում, գնում-փնտրտում է իր ծխականներին, թէ մեռել կայ՝ մեռելն է թաղում. թէ երեխայ կայ՝ երեխան է մկրտում և կամ տներն է օրհնում ու գրպանները լիքը փողով

վերադառնում քաղաք, որպէս զի երկար չ ա ր-
չ ա ր ա ն ք ն ե ր ի ց յետոյ հանգստանայ ու քէֆ
քաշի...

«Մեռել թաղիր,
«Հացդ կեր.
«Պառկիր, քնիր,
«Ուրախ լեր».

ասում է նա այժմ ամեն օր հաց ուտելիս, քնից
վեր կենալիս... և քը՛ռ-քը՛ռ ծիծաղում...

VII

Տիրացու Մինասը բէմի առաջ գրքակալն է
բաց անում. ժամկոչ Դաբօն կրակով լիքը բուր-
վառը յանձնում է տիրացու Դաւթին. Դասպարն
ու Մելքոնը մի-մի վառած մոմ ձեռներին՝ գըր-
քակալի երկու կողմն են գալիս-կանգնում. Տէր
Մարուքէն դառնում է դէպի ժողովուրդը և սկսում
աւետարան կարդալ։

Այդ միջոցին արշալոյսի առաջին ոսկի ճա-
ճանչները բիւզանդական ոճով շինած գմբէթի
լուսամուտներից ներս են թռչում և մի ակն-
թարթում մութ անկիւններն անգամ լուսաւո-
րում։ Գմբէթից կախ արած սքանչելի ջահի հա-
բիւրաւոր արծաթեայ մոմկալներն ու բիւրեղեայ

զարդերը ծիածանի վառ գոյներով շարժուն կա-
մարներ են կազմում պատկերազարդ պատերի
վրայ. հրաշալի են նրանք իրանց նուրբ երանգ-
ներովը, բայց մտիկ տուողի աչքերն են խտտում.
խաւարի ծնունդ հողաշէն մարդը չի կարող հա-
մարձակ մտիկ տալ արեւի լոյսին։

Եկեղեցու քարէ յատակի վրայ, որ կողմն էլ
նայես, ծխականների ոտների տակ գոյնզգոյն և
զանազան մեծութեան գորգեր են տարածուած։
Սրբերի պատկերները, որոնցով բոլոր պատերն
էլ զարդարուած են, ոսկէզօծ շրջանակների մէջ
են առնուած. նրանց զգեստները կամ կապոյտ և
կամ վառ-կարմիր գոյներով են նկարուած։ Տիրա-
մօր պատկերի շրջանակը հրաշալի է. Ինքը-Տի-
րամայրը ոսկէջրած արծաթով է պատած. մեծ-
մեծ ադամանդներից հիւսած թագը փայլում է
նրա ոսկէ ճաճանչներով շրջապատուած գլխին.
չորս աշտանակներ են դրած առաջը, մոմկալների
մէջ հարիւրաւոր մոմեր են վառւում։ Շրջանակի
ստորին մասում նեղ ու երկայնաձև արկղիկ է
շինած, ապակեայ դռնով. արկղիկի մէջ կողք-
կողքի դարսուած են և կամ մեխերի վրայ կախ
արած՝ արծաթեայ փոքրիկ օրօրոցներ, ոտներ,
ձեռներ, աչքեր ու սրտեր։ Ով անգաւակ է, գա-
լիս է եկեղեցի, Տիրամօր պատկերի առաջ ուխտ
է անում, երեցփոխանին փող է տալիս, արծա-

թեայ օրօրոցը մի քանի օրով վեր առնում իր տունն է տանում, որպէս զի զաւակ ունենայ։ Իսկ եթէ մէկի աչքն է ցաւում և կամ սիրտը, այն ժամանակ Տիրամօր աչքը կամ սիրտն է առնում-տուն տանում, որպէս զի առողջանայ։

Գ. քաղաքի ժողովուրդը շատ է հաւատացող. այն օրից, երբ նա, արհեստը թողած, ըսկըսել է զանազան աշխարհներ ման գալ, վաճառականութեամբ պարապել, ինչ տեղ ն ո ր բ ա ն է տեսնում, իսկոյն փող տալիս-առնում է, իր քաղաքն է բերում ու նուիրում իր հ ա ր ա զ ա տ եկեղեցուն. ինչքան թանկագին խաչեր ու խաչվառներ, բուրվառներ ու սաղաւարտներ, շուրջառներ ու պատարագի զգեստներ նա հեռու տեղերից բերել է և բերում է ու նրանցով զարդարում իր քաղաքի եկեղեցիները... արդեօք դա պարզ ապացոյց չէ՝ որ նրա հաւատը դեռ ևս շատ է վառ, շատ է լայն...

Ժամկոչ Մաթոսը խցիկից դուրս է գալիս, տատմէր Մրօյին է տեսնում հեռուից ու մօտենում.

—Քէֆդ ոնց ա, ա քիր.

—Աչքդ լիս, Մաթոս, էլի բաղդդ կտրեց.

—Ի՞նչ ա որ, մեռել ա.

—Ո՞վ.

—Թխմաղենց հարսը.

—Հէ, Մաթոս, առողջացել ա, 50 տարի հալա կըսպասես. թէ դու չուտես նրա քէլէխի հացը, ես քոնը հօ կուտեմ ու կուտեմ։ Տատմէր Մրօն մտնում է եկեղեցի։

—Զահրումար ուտես, անպոչ սատանայ, մրթմրթում է Մաթոսը նրա ետևից և իսկոյն բուրնոթու տուփը փնտրտում։

—Մաթոս, լսում է յանկարծ մի խիստ ու բարակ ձայն.

—Հրամայիր, տէրհայր, բղաւում է Մաթոսը և գժի նման վազում դէպի տէրտէրների սենեակը. կանչողը Տէր Խաչատուրն է, ամենքի սարսափը։ Ոտի մատների վրայ միայն կոխելով՝ Մաթոսը մօտենում է, պատկառանքով նրա աչն է համբուրում, ոսկէջրած արծաթեայ գլխով գաւազանը ձեռից առնելով՝ զգուշութեամբ տանում իր սովորական տեղն է դնում և, կրկին վերադառնալով՝ հեռանց կանգնում Տէր Խաչատրի առաջ. ձեռները կրծքի վրայ է խաչել Մաթոսը, շիտակ ու շիլ աչքերն էլ տէրհօր դէմքին բևեռել։ Տէր Խաչատուրը աջ ձեռով մի քանի անգամ ճաղատ գլուխն է շոյում, յետոյ թևի միջից կարմիր թաշկինակն է դուրս բերում և նրանով սկսում մեծ, հաստածայր և ուռուցիկ քիթը մաքրել։

Տէր Խաչատուրը 62 տարեկան ժիր ծերունի է, կարճահասակ, փոքրիկ սպիտակ միրուքով

ու բլրակաձև փորով. աջ ուսը ձախիցը բարձր է. բերնում միայն մի սևացած ատամ է մնացել-ձախակողմեան ժանիքը. մետաքսեայ թանկագին վերարկու է նա հագել, լանջին երկու ոսկեզօծ խաչեր է կրում. ձախ կրծքի վրայ էլ մի ինչ որ շքանշան է գունաւոր ժապաւէնի ծայրին կախ արել. փոքրիկ գլխին ահագին թաւշեայ կամիլաւկա է դրել, իսկ դէմքի արտայայտութիւնը խոժոր է և անհամբոյր։

—Բաղալը որտեղ է, յանկարծ նա դառնում է Մաթոսին.

—Եկեղեցումն է, տէրհայր.

—Կանչիր, հրամայում է նա և նորից քիթը կոխում թաշկինակի մէջ։ Մի րոպէ չանցած՝ Մաթոսը մուխսի Բաղալի հետ երևում են սենեակի դրան մօտ։

—Մուխսի, ասում է Տէր Խաչատուրը, ձայնը մեղմացնելով.

—Ծառադ եմ, հրամայիր, տէրտէր ջան, պատասխանում է մուխսին խորը գլուխ տալով և նրա աջը առնելով։

—Քանի անգամ եմ ես քեզ ասել, օրհնած, որ դու էս անիծուածին մի քիչ խրատես. նա ձեռով Մաթոսին է ցոյց տալիս։ Բաղալը, ոչինչ չհասկանալով, շշմածի նման մէկ նրան է մտիկ տալիս, մէկ էլ Մաթոսին։ Վերջինը, թէև հաս-

կացել է թէ բանը ինչումն է, բայց, միամիտ ձևանալով, ճիգ է թափում, որպէս զի իր շիլ աչքովն ևս երկիւղախառն զարմացք արտայայտէ։

—Այսօր կէնտ զանգը քանի անգամ խփեցիր, հարցնում է նրան Տէր Խաչատուրը։

—24 անգամ, տէրհայր.

—Սուտ ես ասում, 15 անգամ խփեցիր, ես քեզ ասել եմ որ կիրակի ու տօն օրերը 24 անգամից պակաս չխփես։

—Արևս վկայ, տէրհայր, ես միշտ 24 անգամ եմ խփում. էդ Գաբօն կրլի պակաս խփած.

—Զանգը էսօր դու խփեցիր, հարցնում է Գաբօյին Տէր Խաչատուրը։ Վերջինը ուզում է պատասխանել, բայց տեսնելով որ Մաթոսը աչքունքով նրան ինչ որ նշան է տալիս, լռութիւն է պահում։

—Կորիր աչքիցս, փուչ կենդանի, դուրս կանեմ քեզ, եթէ մի անգամ էլ զանգը պակաս խփես, բղաւում է Տէր Խաչատուրը. Գաբօն ոտների մատների վրայ դուրս է գալիս սենեակից։

—Էլի կրկնում եմ, Մաթոս, կիրակի ու տօն օրերը կէնտ զանգը 24 անգամից պակաս չխփէք.

—Հրամերես, տէրհայր.

—Մուխսի,

—Հրամայիր, տէրտէրջան.

—Բառաշենց Ակոբի կնիկը աղատուել ա, ջուխտակ մանչ տղայ է ծնել. էսօր նրանց տնից երկու մատաղացու ոչխար կըբերեն. լսում ես...

—Լսում եմ, տէրտէր ջան, ոչխար կըբերեն.

—Երկու ոչխար.

—Հրամերես, երկու ոչխար.

—Հա, երկու ոչխար. քու աչքի առաջ երկուսին էլ մորթել կըտաս. մի ոչխարի մորթին ու գլուխը, համ էլ ետևի քառորդամասը մեր տունը կուղարկես, պատարագչի ու միւսների բաժիններն էլ իրանց կըտաս։ Մնացածը եկեղեցու մատաղատանը թող եփեն. պատարագից յետոյ մեր ուտելու բաժինը թող այստեղ բերեն, իսկ միւս մասը Գաբօն եկեղեցու դրանը ժողովրդին թիքա-թիքա թող բաժանի. հասկացար...

—Հասկացայ, տէրտէր ջան.

—Ապրիս, դէ, գնա բանիդ։

Բաղալը գնում է. Տէր Խաչատուրը, մի անգամ էլ քիթը թաշկինակի մէջ կոխելուց-հանելուց յետոյ, մտնում է վերջապէս եկեղեցի։ Տիրացու Սիմօնը իսկոյն առաջ է գալիս և հանդիսաւոր կերպով ծաղկեայ փիլոնը տարածում նրա ուսերի վրայ. Տէր Խաչատուրը դասն է բարձրանում և սկսում աղօթել։

VIII

Ժամանակով Տիրամօր եկեղեցում լինում է Տէր Թոմաս անունով մի քահանայ։ Այդ քահանան ունենում է Զաքար անունով մի պատանի ծառայ։ Մի անգամ Տէր Թոմասը, ուշ գիշերին զարթնելով, ինչ որ խեղդուկ ձայն է լսում. այո, լսում է նա այդ ձայնը և զարդանդում. նրան այնպէս է թւում, իբը ոգիները նրա տանը հաւաքւած ժամասացութիւն են անում։ Սաստիկ երկիւղից Տէր Թոմասը ականջները խցելով՝ գլուխը երկու բարձերի մէջտեղն է խրում և այդպէս քնում մինչև արշալոյսի բացւելը։ Միւս գիշերը նոյն ժամին նա զարթնում է կրկին և լսողութիւնը լարած երկար ու բարակ սպասում... և ահա, խորը տեղից, ինչպէս ջրհորի միջից, էլի նոյն խուլ ձայնն է նա լսում... ժամանակ-ժամանակ այդ ձայնը ուժեղանում է և Տէր Թոմասը բաւական պարզ արդէն լսում է հետևեալը.

—Գան-ձրդ ող-որ-մու-թե-ան, գան-ձիդ ծածկե-լոյն գտ-ող գիս ա-րա...

Անծանօթ ձայնը տասը անգամ միևնոյնը կրկնում է ու լռում։

Տէր Թոմասը երկար մտածում է, թէ ով պէտք է լինի այդ ասողը. վերջապէս, հանգստանում է այն մտքի վրայ, թէ երևի ներքին յար-

կում մի ջերմեռանդ պառաւ գիշերները զարթ-
նում է և աղօթում։ Մի քանի օր ձայնը չի լս-
ւում. բայց ահա մի գիշեր Տէր Թոմասը նորից
լսում է միևնոյնը, և աւելի պարզ. ձայնը այժմ
աւելի ուժեղ է դառել և վանկերը շուտ-շուտ է
արտասանում.

—Գանձդ ողորմութեան՝ գանձիդ ծածկե-
լոյն գտող զիս արա։ Գանձդ ողորմութեան՝ գան-
ձիդ ծածկելոյն գտող զիս արա և այլն և այլն...
անդադար միևնոյնը կրկնւում է։ Յանկարծ Տէր
Թոմասի մտքովը Զաքարն է անցկենում, նրա
ծառան, որը տէրհօր կարծիքով անգրագէտ պէտք
է լինէր։ Իսկոյն նա ցատքում է տեղից, վերար-
կուն ուսերին է գցում, ոտները մաշիկների մէջ
է խրում, յուշիկ քայլերով Զաքարի սենեակին
մօտենալով՝ դրան ճեղքից ներս է նայում. տես-
նում է ինչ... Զաքարը սպիտակեղէնը հագին յա-
տակի վրայ ծնկաչոք աղօթում է. աչքերը ան-
թարթ երկնքին են յառած. երեսին արցունքի
հետքեր են նշմարւում, ինքնիրան կորցրածի է նա
նմանում... ձէմքը՝ մերթ սաստիկ վիշտ կամ բար-
կութիւն և մերթ կատաղի յոյս կամ յուսահատու-
թիւն է արտայայտում... ձայնը՝ մերթ ոյժ առնում-
բարձրանում է և մերթ թուլանում ու շշնչոցի
փոխւում. իսկ շրթունքները անընդհատ և սաստիկ
արագութեամբ շարժւում են և արտասանում.

—Գանձդ ողորմութեան՝ գանձիդ ծածկելոյն
գտող զիս արա։ Գանձդ ողորմութեան՝ գանձիդ
ծածկելոյն գտող զիս արա։...

Տէր Թոմասը այս անգամ սաստիկ է զար-
զանդում. սկսում է դողդողալ և շատ որոշակի
զգում է, որ նրա մարմնի վրայ բուսած մազերը՝
վզաքոքից սկսած մինչև մէջքը՝ ցցւեցին ու խըլ-
խըլացին, ինչպէս հարիւրաւոր մրջիւններ։ Այ-
նուամենայնիւ նա ինքնիրան հաւաքում է, սուս
ու փուս ետ է դառնում և թուլացածի նման
ընկնում անկողնի մէջ։

Միւս օրը Տէր Թոմասը Զաքարին հարց ու
փորձ է անում, ուշադրութեամբ մտիկ է տալիս
նրա նիհար դէմքին, բերնից հանած խօսքերին
և համոզւում է որ նրա առաջ բացառիկ ընդու-
նակութիւնների տէր մարդ է կանգնած։ Դուրս
է գալիս՝ որ Զաքարը թէ կարդալ-գրել գիտէ և
թէ մանաւանդ շատ պատմութիւններ ու առած-
ներ. կեանքումը ինչ որ լսել է՝ բոլորն էլ վեր
առել պինդ պահել է իր հրաշալի յիշողութեան
մէջ։ Տէր Թոմասի հարցին՝ թէ ինչու անդադար
կրկնում էր «Գանձդ ողորմութեան, գանձիդ ծած-
կելոյն գտող զիս արա» նախադասութիւնները՝
Զաքարը պատասխանում է, թէ աշխարհումս
չ ա ր ս ա հ ա թ կ ա յ, բ ա ր ի ս ա հ ա թ կ ա յ.
եթէ վերոյիշեալ խօսքերը բ ա ր ի ս ա հ ա թ ին

հանդիպեն՝ այն ժամանակ Աստուած մարդու ուզածը իրան կըտայ։ Տէր Թոմասը այդ մտքի հետ ևս համաձայնւում է և մի քանի շաբաթից Զաքարին շինում իր տիրացուն։ Կեանքը այն ժամանակներում հրաշալի էր, ամեն ինչ պարզ էր և ամեն ինչ հասարակ. 3 գրւանքայ սոխը մի կոպէկով էին առնում, կօշկակարին տէրտէր էին ձեռնադրում, 10 հատ ձուի համար 2 կոպէկ էին տալիս, մի գրոշ էլ ետ էին ստանում. ծառան տիրացու էր դառնում, խիարի հարիւրը մի աբասուց դէն չէր գնում, միկիտանը սարկաւագ էր ձեռնադրւում, իսկ արշինանոց թազա ձուկը, էն որ ջրից հանել են ու դեռ բոլորովին չեն հանել, 5 կոպէկով առնում, խորովում էին ու սարկաւագի տանը քէֆ անում... լաւ օրեր էին, բայց անցան...

Տէր Թոմասը իր հաշուի մէջ չի սխալւում. Զաքարից օրինակելի տիրացու է դուրս գալիս. ամօթխած, աշխատասէր, հնազանդ ու համբերող. այդ վերջին յատկութիւնը նրա մէջ այնքան էր զարգացել, որ նրա համբերութեան և իդէալական համբերութեան միջև համարեա մի մազ էր միայն մնացել. եթէ կարողանար՝ Զաքարը այդ մազէ կամուրջն էլ անց կըկենար։ Եթէ համադանի ականջեղ մոխրաթաւալները նախանձելու ընդունակ լինէին՝ շատ շուտով կը-

խղճահարւէին, տեսնելով Զաքարի համբերութեան չափն ու սահմանը... այո, կըխղճահարւէին և միազրդռ հաւանութեամբ եօնջայից դափնիներ կըհիւսէին ու նրանցով կըպսակէին Զաքարի չարքաշ ճակատը։ Երկու-երեք տարւայ ընթացքում տիրացու Զաքարը ժողովրդի սիրելին է դառնում։ Ուղիղ է, նա ձայն չունի, եղանակ էլ չունի, լեզուն էլ ծանր է շարժւում բերնի մէջ, վախից թէ ինչից վախտվախտ պապանձւում է, այնուամենայնիւ ժողովուրդը նրան համակրանք և մի տեսակ օտարոտի կարեկցութիւն է ցոյց տալիս։ Տիրացու Զաքարը ամենից վաղ է եկեղեցի գալիս և ամենից վերջը դուրս գալիս. տանը եկեղեցական գրքեր է միայն կարդում, իսկ եկեղեցու բակը նրա միակ զբօսավայրն է դառնում. խորին հաւատը, որով նա տոգորւած է երևում, նրա բոլոր շարժումներին, խօսքերին ու գործերին, կարծես, մի տեսակ վեհութիւն է տալիս և մի տեսակ խորհրդաւորութիւն։

Երբ որևէ հարուստ ծխականի տանը խընջոյք է լինում, Տէր Թոմասը տիրացու Զաքարին էլ է անպատճառ հետը տանում։ Ուղիղ է, Զաքարի հետ աղաները առհասարակ չեն խօսում, բայց նա այդ բանի մէջ ոչ մի անյարմարութիւն չի տեսնում. ժամերով մի տեղում լուռումունջ

նստած՝ նա սփռոցի գոյնզգոյն թելերն է եղունգի ծայրովը տնտղում, ճանճերի համարձակ թռիչքներին է աչքերովը հետևում, հարուստ մարդկանց մատների վրայ փայլող ոսկեայ մատանիների քաշը և աղամանդների գներն է մտքումը որոշում, ուրիշների հետ ինքն էլ է ծիծաղում՝ առանց պատճառը իմանալու, կենացներ է խմում, իր բաժակը ուրիշների բաժակների հետ է չրխկացնում, ուրիշների հետ ինքն էլ է նստում, վեր կենում, մի խօսքով տիրացու Զաքարը առանց զբաղմունքի չի մնում։ Եթէ Տէր Թոմասը բուրնոթու տուփը մի տեղ դրած ու մոռացած է լինում, Զաքարը խկոյն թռչում է տեղից, որտեղիցորէ տուփը գտնում, բաց անում ու դնում է նրա առաջ։ Նրա այդ պատրաստականութիւնը աղաներին շատ է դուր գալիս, նրանց քէֆն է բերում։ Եթէ Պօղոս աղան լաւ կօնծելուց յետոյ զուռնա է պահանջում, բայց զուռնաչին տանը չի լինում, այն ժամանակ Տէր Թոմասը Զաքարին ունքերովը նշան է տալիս. նա էլ, հասկանալով թէ ինչ է ասում տէրհայրը, իսկոյն ձգում է նստած տեղում, երկու-երեք անգամ հազում ու կոկորդն է մաքրում, աչքերը գցում առաստաղին և երկար ու բարակ երգում այն ամենը՝ ինչ որ իմանում է։ Քանի նա երգում է, հանդիսականներն էլ, առանց նրան լսելու, գոռում են և բղաւում, խօսում են ու ծի-

ծաղում. բայց հէնց որ տիրացու Զաքարը, շատ երգելուց յոգնելով, մի բոպէ լռում է, որպէս զի կարգին շունչ քաշէ, հանդիսականներն էլ նոյնպէս լռում են և պահանջում որ տիրացուն շարունակէ երգել. և նա շարունակում է, կոկորդը միայն ժամանակ-ժամանակ գինով թացացնելով։

Մի գեղեցիկ օր Տէր Թոմասը տիրացու Զաքարին մի սիրուն աղջկայ հետ պսակում է, ինքն էլ նրա հարսանիքին լաւ քէֆ է քաշում. պէտք է յիշել որ Տէր Թոմասի այրիանալը շատ տարի է։ Տիրացու Զաքարը պսակուելուց յետոյ հետզհետէ փոխւում է. կնկայ բազմաթիւ ազգականները սկսում են նրա մօտ յաճախել, ինքն էլ նրանց մօտ է յաճախում, խմում է շատ, ուտում է նոյնպէս շատ և դառնում է շատակեր. բարակ փորը ճարպոտւում ու բլրակի ձև է ստանում. աչքերը կարմրում են ու փոսիկների միջից դուրս ցցւում. ինքը դառնում է համարձակ ու շաղակրատ։ Ուտելու և խմելու մէջ չափազանց առաջադիմելով՝ նա մինչև անգամ նոր ճաշակ է մտցընում իր մօտիկ ազգականների շրջաններում. նա շատ է սիրում ուտել այն պատառը, որը նրա անունով կոչւում է զ ա ք ա ր ե ա ն թ ի ք ա. դա՝ սպիտակ հացի պատառ է, որի վրայ Զաքարը նախ երկու շերտ գոմշի սերից եփած զ ա յ մ ա ղ է դնում, նրա վրէն երեք գլխալ վարդի մուրաբա

է ածում, նրա վրայ էլ դնում է խաւեարի մի հաստ շերտ. գրազ է գալիս և այդ չորս յարկանի թիքան, ազատօրէն բերանը կոխելով, մի բոպէում խժրում է, առանց որևէ փշրանք թողնելու միրուքի վրան։ Երբ տիրացու Զաքարի որևէ ազգականի տանը ժամանակ-ժամանակ մրցակից է դուրս գալիս և վերոյիշեալ զ ա ք ա ր ե ա ն թ ի ք ա ն ձեռին բռնած՝ նրան ասպարէզ է կանչում, այդ դէպքում Զաքարը մեծ ճարպիկութիւն է ցոյց տալիս. պատառը ձեռին՝ հեգնելով ասում է նա իր հակառակորդին.

«Եւ դու պարսիկ ախոյեան,
«Կարեմ կուլ տալ զթիքան.
«Հապճն, արի ի մէյդան...

Հանդիսականները իսկոյն շրջապատում են Զաքարին և նրա ախոյեանին։ Թիքան բերնին մօտեցնելով՝ Զաքարը ասում է.

«Մ՚ուտ ի տուն տեառն-ի բերան»։

Եւ յանկարծ տեսնում են որ Զաքարի բերանը արդէն դատարկւած է. մինչդեռ պարսիկ ախոյեանը թիքայի կէսը խժրած, կէսը չխժրած, սկսում է սաստիկ հազալ և քիչ է մնում խեղդուի։ «Կ ե ց ց է» բղաւում են հանդիսականները, ծիծաղից թուլանալով, և իսկոյն Զաքարի կենացը խմում. իսկ երեխաները՝ խմբովին հաւաքւած Զաքարի փորի առաջ՝ բոլոր ժամանակը ակնածութեամբ մտիկ են տալիս նրա փոր ու բերանին և համեմատում իրայինների հետ։ Ասենք Զաքարը միայն շատ մօտիկ ազգականների տներում էր իրան թոյլ տալիս մրցել ախոյեանների հետ. իսկ օտարների առաջ նա միշտ միևնոյն ամօթխած ու համեստ տիրացուն էր։

Զաքարը ինը տարի միայն տիրացութիւն է անում. տասներորդ տարւայ սկզբին՝ Տէր Թոմասը նրան տէրտէր է ձեռնադրել տալիս. տիրացու Զաքարը դառնում է Տէր Խաչատուր և սկսում ծուխ հովւել. չար լեզուները ասում են՝ իբր նրա տէրտէր լինելու միակ պատճառը սիրունիկ կնիկն է եղել։ Դուք պէտք է տեսնէիք թէ ինչպէս ամօթխած ու համեստ էր պահում իրան Տէր Խաչատուրը առաջին տարիները. ինչպիսի ջերմեռանդութեամբ էր նա պատարագ մատուցանում. ինչպիսի նազուկ շարժումներով էր բուրվառում՝ սրբերին, քահանաներին և աղա ծխականներին. նախ՝ խորը երկրպագում էր, յետոյ երեք անգամ բուրվառում ու կրկին երկրպագում։ Թարախ ման ածելիս՝ աչքերը եկեղեցու պատերին էր գցում. ժամուց ստանալիս՝ փողը ձեռի միջում չէր շոշափում, այլ յուշիկ շարժումով տանում ուղիղ գրպանն էր գցում. իսկ մատաղամիս ուտելիս՝ բոլոր քահանաներից յետոյ էր թիքա վերցնում։ Եկեղեցուց դուրս էլ

Տէր Խաչատուրը իրան օրինակելի էր բռնում. խօսում էր առհասարակ քիչ և հազիւ լսելի ձայնով. քայլում էր ծանր. հարուստ ծխականներին 20 քայլ հեռաւորութիւնից էր բարևում. մեռելահաց ուտելիս՝ փոքրիկ թիքաներ էր վերցնում. իսկ ծամելիս՝ նրա ուժեղ ծնոտները հազիւ էին շարժւում։ Նորընծայ Տէր Խաչատուրը շատ անգամ սաստիկ ամօթխածութիւնից դժուարանում էր թիքաները կարգին կուլ տալ և ինքնիրան խեղդելու վտանգին էր ենթարկում. թիքան կոկորդի խոռոչներում կծկելով՝ ոչ ցած էր գնում և ոչ վեր բարձրանում. Տէր Խաչատուրը հազում էր սաստիկ, աչքերը կոպերից համարեա դուրս էին գալիս, արցունքի կաթիլները միրուքի ծայրից կաթ-կաթ թևի վրայ էին թափթփում, և միայն որևէ գթառատ հարևանի փրկարար բռունցքն էր որ այդ բոպէին օգնութեան էր շտապում, մի քանի ծանրակշիռ հարուածներ էր իջեցնում Տէր Խաչատրի ծոծրակին ու փորձանքի առաջը առնում։ Տիրացու Զաքարը Տէր Խաչատուր դառնալուց յետոյ հաւատն ու ջերմեռանդութիւնը կրկնապատկում է։ Երբ պատարագ անելու հերթը նրան է գալիս, ամբողջ շաբաթուայ ընթացքում՝ երեկոներին եկեղեցու բակում մենակ «ե կ ե ս ց է» է ասում, իսկ առաւօտեան՝ տեղից շատ վաղ վեր կենալով՝ սաղմոս է քա-

ղում իր առանձնասենեակում։ Պատարագից առաջ նա ոչինչ չի ուտում՝ ոչ պանրով հաց, ոչ էլ կաթնով թէյ. կօշիկով սեղանի վրայ բարձրանալը սրբապղծութիւն է համարում, իսկ պաս ուտելը մահացու մեղք։ Պատմութիւններ շատ է նա իմանում, մանաւանդ ճգնաւորների կեանքից, և սիրում է երկար ու բարակ պատմել. իր պատմածին նա ինքն էլ է հաւատում, լսողներն էլ են հաւատում. այդ պատճառով պատմածքի վերջը միշտ սրտաշարժ է լինում. ինքն էլ, լսողներն էլ արտասուում են։ Եւ ահա մի օր նա նոր միտք է յղանում՝ գրել իր իմացած պատմութիւնները ու տպել տալ. մի քանի երես մինչև անգամ գրում է, բայց յանկարծ մտաբերում է որ այդ բոլորը կարելի է Այսմաւուրքից քաղել. այդպէս էլ նա անում է. մի գիրք է կազմում, անունը դնում է «Վարք Սրբոց» ու տպել տալիս։ Գ. քաղաքում այն ժամանակները գիրք ասած բանը հազւագիւտ մի զարդ էր համարւում. և յանկարծ լուր է տարածւում թէ Տէր Խաչատուրը գիրք է հնարել. նրա անունը, հեղինակութիւնը միանգամից բարձրանում է. նա էլ օգտւելով այդ հանգամանքից՝ պատահողի ձեռին մի-երկու օրինակ Վարք Սրբոց է տալիս։ Տգէտ ժողովուրդը ամաչելով փողը տալիս ու գիրքը վեր առնում տուն է տանում, մի քա-

նի անգամ նրան ձեռների մէջ շուռ է տալիս, մեծ ու ծաղկատառերն է կէնտ-կէնտ արտասանում և յետոյ, կարդալուցը սաստիկ յոգնելով, ծածկում է գիրքը, տալիս է կողակցին ու ասում.

—Վեր առ, Վարդուհի, էս գիրքը Տէր Խաչատուրը ինքն ա գրել... ասում ա՝ Սրաբիոն ճրագնաւորի պատմութիւնն էլ ա սրա միջումը. մեծ ուսում ունի, ինչ ուզում ես, ասա, գիրք ա հնարել մարդը, հանաք բան չի... տնօրհնէնքի որ գայ՝ մի ըուբլու տեղաք երկուսը պէտք ա տուած, մէկէլ տէրտէրների թայը հօ չի...

—Հալբաթ որ, պատասխանում է Վարդուհի խանումը և գիրքը վեր առնում պահարանի խորը գցում, որտեղից միայն մկները, տարիների ընթացքում քիչ-քիչ ուսումնասիրելով, ամբողջ գիրքը համեղ կազմի հետ միասին իրանց փորերն են տեղափոխում։ Տէր Խաչատրի ծուխը, նրա մօտիկ և հեռու ազգականները «Վարք Սրբոց»ի պատճառով սկսում են աւելի պատուով վերաբերուել դէպի նա. մսավաճառները, ձկնավաճառները, դուքանչիները և արհեստաւորները, մէկմէկու առաջ կտրելով, համարեա ամեն օր խընդրում-աղաչում են ու Տէր Խաչատրին իրանց մօտ հացի տանում։ Այդպիսով նրան յարգողների շըրջանը գնալով աւելի և աւելի է ընդարձակւում.

նա դառնում է աւելի համարձակ, սկսում է ծխականների տներում պատմութիւններ պատմել, քարոզել, խրատել ու զանազան խորհուրդներ տալ. միևնոյն ժամանակ բոլորից էլ խստիւ պահանջում է՝ պաս պահել, եկեղեցի յաճախել, Աստծու տուած բարիքներից եկեղեցուն ևս բաժին տալ։ Այդ միջոցներում մեռնում է Տէր Թոմասը. նրանից մի քանի տարի առաջ էլ մեռել էր Տէր Գէորգը, որի ծուխը առժամանակ միւս քահանաները բաժանել էին իրանց մէջ և հովւում։ Տէր Թոմասի ծխականներից նրանք, որոնք նոր հարստացած ու աղա դարձած մարդիկ էին, Տէր Խաչատրի հետ մտերմացած լինելով, դառնում են նրա ծուխը. մնացած ծխականների վրայ մի ինչ որ տիրացու, որը լռութիւն պահելու մէջ մեծ հմտութիւն էր ցոյց տալիս, տէրտէր է ձեռնադրւում, ստանալով Տէր Յովակիմ անունը. իսկ հանգուցեալ Տէր Գէորգի ծուխին գալիս զօրով տէր է դառնում Տէր Մարուքէն. չորրորդ քահանան Տէր Բարսամն է, որից Տէր Խաչատուրը չի քաշւում ամենևին. այդպիսով Տիրամօր եկեղեցու 4 քահանաներից Տէր Խաչատուրը դառնում է ամենահեղինակաւորը և ժողովրդի ամենասիրելին։ Ծերունի Յովհաննէս աղան, որը շատ տարի է երեցփոխանութիւն է անում և մոմերի հաշիւը պահելուց զոկ ոչ մի բանի չի

խառնում, Տէր Խաչատրի համար աւագութեան իրաւունք է բերել տալիս։ Անցնում են 20 երկար տարիներ. այդ միջոցում Յովհաննէս աղան էլ է մեռնում և այն հին աղաներն էլ են մեռնում, որոնք բարձրից էին նայում Տէր Խաչատրի վրայ. այդպիսիներից մի քանիսն էլ սրնանկանալով՝ ասպարէզից դուրս են գալիս. իսկ դինեվաճառների, մսավաճառների և զանազան դուքանչիների միջից, որոնք Տէր Խաչատրի հետ, ինչպէս հարազատ եղբօր հետ, մտերմացած էին վաղուց, նոր-նոր աղաներ են դուրս գալիս և հասարակական գործերի ղեկը առնում իրանց ձեռները. լինելով բոլորովին տգէտ՝ այդ աղաները առանց Տէր Խաչատրի խորհրդներին ոչինչ չէին կարողանում անել. ահա այդտեղ արդէն Տէր Խաչատուրը, տեսնելով որ ասպարէզը միայն իրան է մնացել, դիմակը ղէն է գցում և դառնում է այն, ինչ որ էր սրտի խորքումը։ Ամօթխած Տէր Խաչատուրը դառնում է անամօթ. ջերմեռանդը—ծիսամոլ. համբերողը—հալածող և հնազանդը—խստապահանջ։ Ով նրա առաջ դողալով է կանգնում, կոյր հնազանդութիւն է ցոյց տալիս, նրան էլ Տէր Խաչատուրը առաջ է քաշում, հասարակութեան մէջ որևէ պաշտօնի արժանացնում. այն երիտասարդներին, որոնք Մոսկւայում ուսում են առնում և ամառային արձակուրդներին Գ. քաղաքը գալով հասարակական գործերով են սկսում հետաքրքրուել, Տէր Խաչատուրը սաստիկ է ատում և թոյլ չի տալիս, որպէս զի նրանք էլ իրանց կարծիքները յայտնեն այս ու այն հասարակական հարցի վերաբերմամբ։ Այժմ Տէր Խաչատուրը երկու փառաւոր տներ ունի շինած Գ. քաղաքի լաւ փողոցներից մինի վրայ. բոլոր պետական ուսումնարաններում կրօն և լեզու է աւանդում, թէև աշակերտները, 6-7 տարի սովորելուց յետոյ, երբ ուսումնարանից դուրս են գալիս, վանկեր կապելով հազիւ են կարողանում կարդալ։ Քաղաքում գտնուած բոլոր հասարակական հաստատութիւնների մէջ Տէր Խաչատուրը կամ նախագահ է, կամ հոգաբարձու և կամ պատուաւոր անդամ. իսկ հոգևոր կառավարութեան վրայ նա նայում է՝ ինչպէս իր սեփական դուքանի վրայ։ Կոնսիստորի քարտուղարը, առաջնորդը, սինոդի անդամները նրան յարգելով-յարգում, սիրելով-սիրում են. նրանց յարգանքների ու սիրու գաղտնիքը Տէր Խաչատուրը մենակ ինքն է իմանում. թիկը տուած այդ չինական պարսպին՝ տասնեակ տարիների ընթացքում նա ամբողջ Գ. քաղաքը սուսիկ-փուսիկ իր չնչին ես-ին է ծառայեցնում։ Յովհան-

նէս աղայի մեռնելուց յետոյ Տէր Խաչատուրը շատ է շարչարւում և Մարկոս աղային նոր երեցփոխան է հաստատել տալիս, որը մինչև այժմ էլ վարում է այդ պաշտօնը և գուցէ մինչև մահն էլ մնայ այդ պաշտօնի մէջ։ Մարկոս աղան Տէր Խաչատրի շատ մօտիկ բարեկամն է. նա շարչիութիւնից է սկսել իր գործը, վաշխառութեամբ էլ, կարծեմ, ուզում է վերջացնել. ստոր, կեղտոտ և գող արարած է Մարկոս աղան, բայց Տէր Խաչատրի կամքը նրան սրբագործել է ժողովրդի աչքում։

Գ. քաղաքի միւս եկեղեցիների քահանաները ու տիրացուները այնքան խեղճ են, որ նրանց մասին խօսելը ժամանակի կորուստ է միայն։ Տէր Խաչատուրը այդ եկեղեցիների համար երեք թէ չորս քահանայ է ձեռնադրել տուել. բայց ինչպիսի մարդիկ է ընտրել և ինչպէս է նրանց պատրաստել այդ կոչումի համար... գիւղերից փախած, բթամտութեան համար ամեն տեղից աքսորուած խղճուկ և անգրագէտ արարածներ են դրանք։ Տէր Խաչատուրը նրանցից ամեն մինին նախապէս 10-15 տարի շարունակ իր աչքի առաջ ամեն օր ծառայեցրել է՝ թէ իբրև ծառայ, թէ իբրև տիրացու, թէ իբրև ստորաքարշ գրագիր և թէ իբրև լրտես ու մատնիչ. ամեն մինի հոգու, սրտի, փորի, աղիքների, լեարդի ու երիկամունքների խորն է քրքրել, ինչ որ մարդկային է գտել, բոլորը անխնայ ոչնչացրել է և յետոյ միայն տէրտէր է ձեռնադրել տուել, վստահ լինելով որ նրանք այնուհետև նրա համար ստուերներ կլինեն միայն և ոչ բանական արարածներ։

—Հայրիկ, ինչ նշանաւոր գործեր է արել Տէր Խաչատուրը, որ այդքան խաչեր ու շքանշաններ է կախում կրծքին, հարցնում է մի անգամ Մոսկւայում սովորող մի խելօք պատանի իր հօրը։

—Ի՞նչ գործ ես ուզում, իշու ձագ, պատասխանում է նրա հայրը բարկացած.—ինչ վնաս ա քեզ տալիս Տէր Խաչատուրը իր խաչերովն ու շքանշաններովը։ Մեր եկեղեցու աւագ քահանան ա, ամօթ չի՞ մեզ համար որ գոնէ մի՛ հատ փ ա ռ ա ւ ո ր ու զ ա ր դ ա ր ո ւ ն քահանայ չունենանք վերևի դասումը կանգնած. բա՛յց, ուսում ես առել, բայց, ինչպէս տեսնում եմ, հաւատդ պակասել ա... Տէր Խաչատրի նման խելօք մարդ ըսկի Մոսկովումն էլ չես գտնի, հաւատա էջմիածնումն էլ որ փնտրես՝ մէկ կասես ու կրկանգնես... վեր առ Վ ա ր ք Ս ր բ ո ց ը ու կարդա, տես, թէ ինչ ա գրել Տէր Խաչատուրը...

Մի անգամ մի ուսումնական քահանայ է գալիս Գ. քաղաքը մասնաւոր գործով. մի քա-

նի շաբաթ նա մնում է այդտեղ. կիրակի և տոն օրերին նա Տիրամօր եկեղեցին է յաճախում։ Մի կիրակի օր նրա և Տէր Խաչատրի մէջ կռիւ է ծագում. ուսումնական քահանան բէմին մօտենալով ինչ որ մաղթանք է սկսում ասել. բայց Տէր Խաչատուրը մատուռից դուրս վազելով բռնում է նրան և ուզում է մաղթանքը ինքն ասի. հակառակորդը, աւելի ուժեղ լինելով, մնում է տեղումը կանգնած և հեռանում է միայն այն ժամանակ, երբ սկսած մաղթանքը վերջացնում է. բայց այդ նրան թանկ է նստում, որովհետև հետևեալ կիրակին Տէր Խաչատուրը արգելում է նրան դասը բարձրանալ. քահանան հոգևոր կառավարութեան գրաւոր բողոք է ներկայացնում. բայց շուտով ստիպւած է լինում թողնել Գ. քաղաքը և հեռանալ, տանելով իր հետ և գրաւոր բողոքը։ Այդ դէպքը երկու-երեք շաբաթ խօսակցութեան առարկայ է դառնում քաղաքում. բայց նոր երեցփոխան-Մարկոս աղան շատ շուտով կարողանում է պղտորւած մտքերը պարզել ու հանգըստացնել։

—Տէր Խաչատուրը լաւ չվարւեց քահանայի հետ, ասում է Պողոս աղան խնջոյքում.

—Իհարկէ լաւ չվարւեց. եղբայր, ինչպէս կարելի է, մարդը ուսումնական է, մի թէ կարելի է այդպէս նրան բռնել, նկատում է Սողոմոն աղան.

—Տէր Բարսամին հօ ամեն օր է բռնում, մարդը ըսկի ձէն չի հանում, նկատում է խորամանկ Գալուստ աղան.

—Ինչ էք դուրս տալիս, ինչ ա պատահել, դուք էս ասէք միայն՝ ոչխարն ա լաւ թէ գայլը, մէջ է ընկնում Մարկոս աղան.

—Իհարկէ ոչխարը, պատասխանում են նրան դէսից-դէնից.

—Գրծա՛ւ գնաց... ուսումնական տէրտէրը գայլ ա, հասկանում էք թէ չէ, ձեռաց կըկծի ու կուտի...

—Հալբաթ որ... մրթմրթում է տանուտէրը. Մարկոս աղան շարունակում է.

—Էլի Տէր Բարսամը բոլորիցը լաւ ա, ոչխարի նման հանգիստ ա իրան պահում. ուզում ես՝ դմակիցը հուպ տուր. չես ուզում՝ բրդից խուզիր, ձէն չի հանիլ... տնա՛շէն, վատ բան ա՛...

—Հա, հա, հա, լաւ ես ասում, նկատում է Սողոմոն աղան և ակամայ լռում։ Նա մտքումը ամենևին համաձայն չէ Մարկոս աղայի հետ, բայց վախենում է նրանից, այդ պատճառով էլ լռում է. Մարկոս աղան համ երեցփոխան է, համ լաւ փող ունի, համ էլ շատ մարդկերանց հետ է ծանօթ։ «Ե թէ ուզի, բուրդս քամուն կըտայ, ինչ գործ ունեմ, տո՛» մտածում է նա և լռում։ Նոյնը մտածում են և Պո-

ղոս ու Գալուստ աղաները և երեսանց համաձայնւում Մարկոս աղայի հետ։

Տէր Խաչատրի կինը անզաւակ է. այժմ նա դառել է չաղլիկ մի տանտիկին. սիրում է լաւ ուտել, լաւ խմել, լաւ էլ քնել. սիրում է նոյնպէս որ ծխականների կնանիք նրան պատուով ընդունեն և լաւ հիւրասիրեն. խօսում է քիչ, լսում է ուշադրութեամբ, մանաւանդ եթէ իգական սեռի թոյլ կողմերի վրայ է լինում խօսակցութիւնը, կուշտ-կուշտ էլ ծիծաղելու սովորութիւն ունի։ Տէրտէրակինը և Տէր Խաչատուրը միմեանցից շատ գոհ են։ Այժմ, երբ Տէր Խաչատուրը արդէն 62 տարեկան է դառել, շատ ու համով ուտելու սովորութիւնը նրա մէջ և՛ աւելի է զարգացած. դրան գոհացնելու համար՝ նա միշտ հարուստների մօտ է հաց ուտում. իսկ իր տանը շատ քիչ անգամ է հաց ուտում, այն էլ առանց ախորժակի։ Այն օրից, երբ նա պատահմամբ իմանում է որ օրը կէս գիշերից է սկսւում, չորեքշաբթի և ուրբաթ օրերին խնջոյքներում պատահելիս՝ մինչև գիշերւայ ժամի 12-ը պասւայ սեղանի մօտ նստած՝ զէյթուն ու հալւա է ուտում. բայց հէնց որ ժամացոյցը 12 է խփում, իսկոյն գնում ուտիսւայ սեղանի մօտ է նստում և սկսում դայմաղով խաւեաը, ճուտով փլաւ և գառան խորոված անուշ

անել։ Պատարագ անելիս նա էլի առաջւայ նման երեկոներին «եկեսցէ» է ասում, առաւօտեան՝ սաղմոս քաղում, առանց մաշիկի ամենևին թոյլ չի տալիս մէկին սեղանի վրայ բարձրանալ, պատարագից առաջ ոչինչ չի ուտում, իսկ եթէ տեսնի որ եկեղեցու գմբէթին բուս է նստած և վայում է, իսկոյն միւս օրը ծանուցումն է անում և զգուշացնում ժողովրդին, որպէս զի աղօթք անեն և խնդրեն Աստծուց՝ հեռացնել Գ. քաղաքից բուի գուժած անբաղդութիւնները...

IX

Դասպարն ու Մելքոնը մի տեղում երկար ժամանակ չեն կանգնում. նրանք շուտ-շուտ մի դասից միւսն են գնում, գրքակալն են բէմի առաջ բաց անում, փակում և կամ տեղափոխում...

Տիրացու Դաւիթն ու տիրացու Մինասը միասին փոխ են ասում, սաղմոսներ են քաղում, մի-մի ժամանակ շարականի դիւրին կտորներն էլ են երգում, երբ դասումը մնում են մենակ։ Դաւիթը բարձրահասակ է և յաղթանդամ, իսկ Մինասը կարճահասակ է և շատ նազ։ Դաւթի ձայնը ուժեղ բասս է, Մինասի ձայնը թոյլ բարիտոն. բայց երբ Մինասը որևէ յանձնարարու-

թեամբ է զբաղված լինում, այն ժամանակ տիրացու Դաւիթը Մելքոնի հետ է ստիպված լինում սաղմոս ասել. այդտեղ արդէն գործը բաւական դժուարանում է. Մելքոնը իր երեխայական բարակ ու զիլ ձայնովը բարձրից է սկսում, տիրացու Դաւիթն էլ իր ձայնը թէև ամեն կերպ աշխատում է յարմարացնել, բայց տեսնելով որ անկարելի է, սկսում է քթի տակից մրմռալով ասել. եթէ նրանց ձայները կամենանք որևէ բանի նմանացնել, տիրացու Դաւթի ձայնը պէտք է կոնտրբասի մռնչոցին նմանացնենք, իսկ Մելքոնի ձայնը մոծակի բզզոցի. մռնչոց և բզզոց, մռնչոց և բզզոց, մռնչոց և բզզոց...

Տիրացու Գասպարի լեզուն թլատ է, տիրացու Սիմոնի լեզուն էլ է թլատ, թէև նա շատ է աշխատում սքօղել այդ. իսկ ինչ վերաբերում է լեզուի թ ռ ա ծ լինելուն՝ ցաւիսիրտ պէտք է խոստովանել, որ բոլորի լեզուներն էլ թ ռ ա ծ են. այսինքն՝ ծանր-ծանր կարդալ չեն կարող. հէնց որ մի սաղմոս, աղօթք կամ քարոզ սկսեցին՝ մի քանի խօսքերից յետոյ յանկարծ լեզուները լպրծուն ձկնիկների նման բերաններումը տրտինգ են տալիս և մին էլ տեսնես՝ մաղթանքն էլ, քարոզն էլ վերջացրին ու պրծան։ Դրա պատճառը, կարծեմ, այն է, որ նրանք ոչ մի կետադրութեան նշանակութիւն չեն տալիս. ստորակէտ-

ները, միջակէտները և կամ հարցական նշանները նրանց համար բոլորովին աւելորդ բաներ են։ Բացի դրանից՝ նրանցից ոչ մինը իր կարդացածը չի հասկանում. և այդ տգիտութիւնը նրանք աշխատում են փոքր հասակից սկսած ամեն կերպ ծածկել ուրիշներից. ծածկում են նրանով՝ որ շուտ-շուտ և զարմանալի արագութեամբ են աշոռատում կարդալ ամեն ինչ, չդանդաղելով ամենևին այն խօսքերի վրայ ևս, որոնք շատ դժուարութեամբ են արտասանւում։

Նրանք Ե և Է տառերը Ի-ի հետ են խառնում. Տ-ն Ա-ի հետ և այլն. գիրքը մի շնչով են սկսում կարդալ և նոյն այդ շնչով էլ աշխատում են ինչքան կարելի է շատ ու շուտ կարդալ. և որտեղ նրանց շունչը կտրւեց, այնտեղ էլ կանգ են առնում և իրանց սեփական վերջակէտը դնում. այդ պատճառով ոչ ոք նրանց կարդացածից ոչինչ չի հասկանում. ոչ իրանք, ոչ ժողովուրդը։

—Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, բառաչում է տիրացու Սիմոնը, մի բոպէ բերանը լայն բանալով. բայց և իսկոյն քարոզը այնպիսի արագութեամբ է շարունակում ասել, որ միայն «վ ա ս ն, վ ա ս ն» է լսւում նրա բերնից։ Իսկ Տէր Խաչատուրը, գուցէ ատամներ չունենալուն համար, աղօթք կարդալիս՝ միայն սկզբից, մէջտեղից և վերջից է մի քանի խօսք մի փոքր լսելի

ձայնով ասում. մնացածը բոլորն էլ առանց ձայնի, մտքումն է ասում. գոնէ կարծում են, թէ ասում է. եկեղեցում լռութիւն է տիրում. տիրացուները, ուշադրութիւնները լարած, սպասում են, թէ երբ կլսեն նրա վերջին խօսքերը։

—Հայր մեր որ յերկինս ես, ասում է Տէր Խաչատուրը ու լռում։

—Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր, ասում է նա մի փոքր անցած և էլի լռում.

—Փառք յաւիտեանս ամէն, ասում է նա յանկարծ և վերջացնում։

—Տէր Խաչատուրը էլի կերաւ, շշնչում է ծխականներից մինը միւսի ականջին.

—Ի՞նչ կերաւ.

—Աղօթքի կէսը.

—Ի՞նչ ես իմանում, կարելի է բոլորն էլ ասեց.

—Ես չլսեցի.

—Ի՞նչ անենք որ դու չլսեցիր. Աստծու ականջը հօ լսեց...

Եկեղեցին արդէն հոծ բազմութեամբ է լեցուած. սրբերի առաջ բազմաթիւ մոմեր են վառում. Մաթոսն ու Բաղալը կիսավառ մոմերն են հանգցնում. չքաւոր մարդիկ մոմերը իրանց ձեռներովն են վառում, իսկ հարուստները, մանաւանդ Պետերբուրգում կրթուած նրբասուն տիկիններ, Մաթոսին մօտ են կանչում, փող են տալիս և բացատրում, թէ ինչ արժողութեան և քանի հատ մոմ պէտք է առնէ և ո՞ր սրբերի առաջ պէտք է վառէ. այդ միջնորդ-ծառայութեան համար նրան միայն տասը կոպէկ են տալիս, որովհետև Մաթոսը նրանց հետ սակարկութիւն չի անում։

Տէր Բարսամն ու Տէր Յովակիմը արդէն վաղուց կանգնած են իրանց տեղերում. ընթերցողը նրանց հետ դեռ ևս ծանօթ չէ և եթէ շատ էլ չի հետաքրքրւում նրանցով, այնուամենայնիւ, գոնէ Պարոնեանի մատնանիշ արած ա ր և ե լ ե ա ն ք ա ղ ա ք ա վ ա ր ու թ ե ա ն հետևելով, պէտք է նրանց հետ ևս ծանօթանայ, մանաւանդ դրա համար առանձին դժուարութիւններ չկան, հետևեալ գլուխը միայն պէտք է կարդալ։

VI

Տէր Բարսամը Տիրամօր եկեղեցու քահանաներից ամենահասակաւորն է, 67 տարեկան է այժմ. ոչ աւագութիւն ունի, ոչ կամիլաւկա և ոչ ծաղկեայ փիլոն. այդ բոլորի փոխարէն նա ունի մի փառաւոր սպիտակ միրուք և երկու կապտագոյն շատ բարի աչքեր. նրանք ում վրայ

նայում են, նրան էլ, կարծես, օրհնում են. ծխականներից շատերը նրա դէմքը Գրիգոր Լուսաւորչի դէմքին են նմանեցնում։ Ժամանակով Գ. քաղաքում եղել է մի յայտնի կօշկակար, ուստա Վիրապ անունով. նա շատ բարեսիրտ, խոնարհ և անշահասէր մարդ է եղել. ազատ բոպէներին Ս. Գիրքն է նա կարդալիս եղել, որը նոյնպէս կօշկակարական գործիքների արկղումն է պահելիս եղել։ Քաղաքում տարափոխիկ հիւանդութիւն է յայտնւում, շատ մարդիկ են մեռնում. նրանց միջին մեռնում են և Տիրամօր եկեղեցու երեք քահանաները-մինը միւսի ետևից։ Արհեստաւոր դասակարգը միաձայն հաւանութեամբ ուստա Վիրապին իր համար քահանայացու է ընտրում. եպիսկոպոսն էլ նրան ձեռնադրում է և անունը դնում Տէր Բարսամ։ Երկար տարիների ընթացքում Տէր Բարսամը շատ է չարչարւում, շատ է աշխատում, որպէս զի ժամասացութիւնը կարգին սովորի, բայց այդ նրան լիովին չի աջողւում։ Նա թէև տանը աղօթքները միշտ անգիր է անում, բայց երբ եկեղեցու դռնից ներս է մտնում և երբ մանաւանդ տեսնում է Տէր Խաչատրի կնճռած դէմքը, իսկոյն սովորածը մտքից փախչում է։ Այդ պատճառով նա միշտ խընդրում է Սահակ սարկաւագից, որպէս զի մոռացած կտորները մի կերպ նրան յիշեցնէ։ Սարկաւագը թէև մեծ յօժարութիւն է ցոյց տալիս, բայց որովհետև նրա ականջները ծանր են, այդ պատճառով չի կարողանում հեռից լաւ լսել, թէ Տէր Բարսամը աղօթքի ինչ տեղումն է կանգնել, ուստի շատ անգամ ուրիշ բան է թելադրում և աւելի է սխալացնում Տէր Բարսամին։ Այն օրը, երբ նա առանց սխալների է պատարագ մատուցանում, զարթ տրամադրութեամբ է տուն վերադառնում, ճանապարհին անդադար կրկնելով շարականի «Սրբուհի անարատ, զքեզ մեծացուցանեմք» յայտնի նախադասութիւնը. բայց այդպիսի օրեր շատ քիչ են պատահում։ Ինքը լինելով սաստիկ հաւատացող, ջերմեռանդ և երկիւղած, խորապէս խոցւում է Տէր Բարսամը, երբ Աստծու սեղանի առաջ՝ Ս. Գիրքը կարդալիս՝ սխալներ է անում։ Երբ նա աւետարանը ձեռն է առնում, սրբազան դող է անցնում իսկոյն նրա ամբողջ մարմնովը, աչքերը պղտորւում են և նա յափշտակւածի նման է արտասանում բառերը, բովանդակութեան համարեա նշանակութիւն չտալով։

—Մատուցին նմա պատարագ ոսկի՝ և կընդրուկ և զմուռս... կարդում է նա ամեն անգամ սաստիկ ոգևորւած, ձայնն էլ ոլոր-մոլոր երկարացնում։

—Փուչ կենդանի, զմուռս ասա, զմուռս,

զմուռս, փնթփնթում է Տէր Խաչատուրը ձախակողմեան դասից։

Տէր Բարսամի երեսի գոյնը փոխւում է իսկոյն. նա թէև չի լսում Տէր Խաչատրի խօսքերը, բայց գլխի է ընկնում որ էլի սխալ է արել. աւետարանը կարդալ—վերջացնելուց յետոյ նա մօտենում է Տէր Խաչատրին և ասում.

—Տէրտէր, մեղայ Աստծու, միւս անգամ չեմ սխալւիլ։

Բայց անցնում են շաբաթները, կրկին հերթը Տէր Բարսամին է գալիս, կրկին աւետարան կարդալիս նոյն սխալն է անում և Տէր Խաչատուրն էլ նոյնը փնթփնթում. իսկ ծխականները լուռ ու մունջ մտիկ են տալիս և ա ն մ ե ղ օ ր է ն զւարճանում. բայց ոչ ոք սիրտ չի անում յանդիմանել Տէր Բարսամին կամ ծաղրի առարկայ շինել նրան։ Ծխականներից մի քանիսներին նոյնպէս լաւ յայտնի է որ Տէր Բարսամը երկու անհաշտ թշնամիներ ունի, որոնց դէմ նոյն իսկ քահանայ դառնալուց առաջ ոչինչ չի կարողացել անել և չի կարողանում. դա՝ Ղ և Զ տառերն են. հէնց որ աւետարանի որևէ երեսում Տէր Բարսամը այդ երկու տառերին է հանդիպում՝ կռիւը սկսւում է իսկոյն. տէրհայրը տառը Ղ է կարդում. բայց նոյն րոպէին խորամանկ Ղ-ն թրռչում է և Զ-ն գալիս-նստում նրա տեղը. և կամ

հակառակն է պատահում. տէրհայրը թէև նկատում է այդ, բայց իրան յատուկ բարեսրտութեամբ չտեսնող ձևանալով, խաղաղ ձայնով առաջ է գնում։ Բայց ահա նրա թշնամիներից մինը կրկին մօտենում է, միայն յայտնի չէ թէ ո՞րն է. Ղ-ն է թէ Զ-ն. տէրհայրը այս անգամ արդէն անմեղ խորամանկութեան է դիմում. դէմքը խոժորած՝ կանգ է առնում ու մոմ բռնող դասպարին նկատողութիւն անում, թէ ինչու մոմը աւետարանից հեռու է պահում, բայց և միևնոյն ժամանակ աչքի պոչովն էլ ամեն կողմից զննում է իր թշնամուն։ Դասպարը մոմը աւելի է մօտեցնում. Տէր հայրը աչքերն է լարում և քաջ զինուորի նման կուրծքը թշնամուն ուղղակի դէմ տալիս. բայց... զարմանալի բան... երկուերեսանի թշնամին համ Ղ-ի է նման, համ էլ Զ-ի, ա՜յ քեզ օյին... այդտեղ արդէն տէրհայրը յուսահատւում է և լեզուի կապը բաց թողում։ Լեզուն էլ, կարծես, հէնց դրան էր սպասում. իսկոյն բերնի մէջ մի-երկու անգամ տրտինգ է տալիս և տէրհայրը, մի ինչ որ անորոշ ձայն հանելով, իր աչքերը դէպի հետևեալ բառն է դարձնում և այդ կերպով ազատւում նենգաւոր թշնամու որոգայթներից։ Նրա ձեռները վերջին ժամանակները սկսել են նկատելի կերպով դողդողալ. այդ հանգամանքը տիրացու Սիմօնին ուրախացրել է, որով-

հետև Տէր Խաչատուրը արդէն դիմել է ուր հարկն է և խնդրել, որպէս զի Տէր Բարսամին արգելեն պատարագ մատուցանելը. թուղթը էսօր-էգուց պէտք է գայ։

Տէր Յովակիմը 10 տարով մեծ է Տէր Մարուքէից. կարճահասակ է և բարակ փորով. դէմքը—դեղնագոյն, աչքերը—տխուր, բայց խորամանկ. Մկրտիչ վարժապետի մօտ է սովորել. աւետարան ու գիրք ազատ է կարդում. ձայնն էլ բաւական դուրեկան է. լռութիւնը նրա կեանքի այծն է եղել. նրա ետևից գնալով-գնալով հասել է մինչև քահանայական պաշտօնին և այժմ թէկուզ ցանկանայ էլ խօսել՝ չի կարող ամեն ժամանակ յաղթել իր լռութեան այծին։ Տէր Խաչատուրը նրանից այնքան չի վախենում, որքան նրա լռութիւնից, այդ պատճառով հետը առհասարակ զգոյշ է վարւում։ Ինքնասէր է Տէր Յովակիմը, նախանձոտ և իշխելու մեծ փափաք ունի. բայց առ այժմ լուռ է մնում, որովհետև նրա ծխականների մէջ հարուստ աղաներ դեռ ևս չեն դուրս եկել։ Չիթ ծախող Եղնիկը ասենք էսօր-էգուց աղա դառնալու մօտ է. այդ պատճառով Տէր Յովակիմը աւելի յարգանք է նրան ցոյց տալիս և շուտ-շուտ է նրան այցե-

լում։ Դուքանումը երես երեսի նստած՝ Եղնիկն ու Տէր Յովակիմը թէյ են խմում, բարեկամներին են բամբասում և ապագայի համար ծրագիրներ կազմում։ Եղնիկը Տէր Յովակիմի համար արդէն ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք է բերել տալ. տէրհայրն էլ նրան խորհուրդ է տալիս երեցփոխան դառնալ, խօսք է տալիս ամեն կերպ նրան աջակցել։ Տէր Խաչատուրը մի քանի անգամ տեսնում է Տէր Յովակիմին Եղնիկի դուքանումը նստած և անհանգստանում. այո, նա լաւ է տեսնում որ Տէր Յովակիմն էլ նրա նման աղաների միջոցով է ձգտում հեղինակութիւն ձեռք բերել... և ինչ զարմանք, եթէ մի օր էլ նրան, Տէր Խաչատրին որևէ հակառակութիւն ցոյց տայ... «խաբեցի, խաբեցի, ինչ արած» ասում է նա յաճախ ինքնիրան՝ Տէր Յովակիմի ձեռնադրութեան մանրամասնութիւնները մտաբերելով։

Տէր Յովակիմը իր տանը նոյնպէս աշակերտներ է կարդացնում. նոյն սաղմոսը, հին ու նոր կտակարանը, Նարեկն ու Այսմաւուրքը կարդում են նրա աշակերտները. նա ճիպոտ չի գործածում, չի էլ ծեծում, որովհետև ներդային է, աղիքների հիւանդութիւն ունի, յաճախ է զկրտում և սիրտը վեր ածում. այդ պատճառով աղմուկ չի կարողանում տանել։ Աշակերտները գալիս

նստում են իրանց տեղերը և սուսիկ-փուսիկ դասերը կարդում։ Ժամի 9-ին մտնում է նրանց սենեակը Տէր Յովակիմը և նստում սեղանի առաջ. աշակերտները, ինչքան սագի փետուրներ ունեն հետները բերած, թափում են նրա առաջ. տէրհայրը գրչահատը գրպանից դուրս է բերում և ժամերով սկսում է ծանը ու բարակ գրչի ծայրերը կտրել ու սրել. աշակերտներն էլ հետզհետէ գալիս ու վերցնում են սեղանի վրայից իրանց գրիչները. ժամի 1-ին գրչահատութիւնը վերջանում է. այնուհետև աշակերտները հերթով կանգնում են տէրհօր առաջ և դասերը կարդում. եթէ աշակերտը շուտ-շուտ և առանց դանդաղելու է կարդում, տէրհայրը դասը փոխում է և մատիտի ծայրովը նշան անում. հակառակ դէպքում դասը թողնում է միևնոյնը։ Ժամի 2-ին նա արձակում է աշակերտներին և գնում հաց ուտելու։ Եթէ հացը համով է լինում, Տէր Յովակիմը, չնայելով բժիշկների տուած խորհրդներին, շատ է ուտում. բայց երբ զկրտալ է սկսում, իսկոյն թողնում է սեղանը ու դուրս գալիս սենեակից։

Թէև Տէր Յովակիմը խորամանկ է և շատ զգոյշ, այնուամենայնիւ ծխականներից մի քանիսը արդէն նկատել են որ նա կեղծաւոր է. նրա խօսքերն ու գործերը հակասում են միմեանց։ Եկեղեցում և նրանից դուրս նա ամենքին խոր-

հուրդ է տալիս՝ որպէս զի երեխաներին կարդալ-գրել սովորացնեն, ուսում տան և խելացի քաղաքացիներ պատրաստեն նրանցից. իսկ ինքը իր 4 որդիներին էլ, որոնք այբուբենը հազիւ են կարդում, հարուստ վաճառականների մօտ ծառայութեան է տուել, որպէս զի դուքաններում առևտուր անել սովորեն, փող աշխատեն և ժամանակով նրանք էլ, թէև յիմար, բայց հարուստ աղաներ դառնան։

XI

Ժամասացութիւնը, կարծես, ընդհանուր է դառնում. վերևի դասից և ներքևի դասից փոխ-փոխ շարականներ են երգում. միայն Տէր Խաչատուրը և Տէր Յովակիմը լուռ են. հինգ րոպէն մի անգամ նրանք ետ են դառնում և ծխականներին մտիկ տալիս՝ արդեօք հարուստներից ով է եկել, որտեղ է կանգնել և այլն և այլն. Տէր Մարուքէն աչքի ծայրովը տեսնում է, որ իր հարուստ ծխականը-գինեվաճառ Մեխակը Տիրամօր պատկերի առաջ մոմ է վառում. նա իսկոյն ոգեւորւում է և իր ամենաբարձր ձայնովը շարական սկսում. երկու նպատակ նա ունի. համ ուզում է Մեխակին դուր գալ, համ էլ տիրացու Սիմօ-

նին նեղը գցել ու խայտառակել։ Միւս դասում Տէր Մարուքէի ձայնին հաւասար ձայն չկայ. Սահակ սարկաւագը միայն կարող է իր ճրճռոցով մի կերպ նրան յարմարել, բայց դժբաղդաբար նա էլ Տէր Մարուքէի հետ միևնոյն դասումն է կանգնած։ Միւս դասից փորձ են անում շարականի հետևեալ տունը ասել, բայց իզուր, չի աջողւում... տիրացու Սիմօնը թէև բառաչում է մի փոքր, բայց կոկորդը սկսում է քոր գալ և սաստիկ հազը հուպ է տալիս ու ձայնը կտրում։ Իսկոյն նրա բերնից առնելով՝ Տէր Բարսամը, Տէր Յովակիմը, տիրացու Մինասը և Մելքոնը ձայն-ձայնի տուած զօրում են, տիրացու Սիմօնն էլ է նորից միացնում ընդհանուրի ձայնին իր աննման բառաչը, բայց ոչինչ չի դուրս գալիս. իւղ չտեսած անիւների ճրճռոց է միայն լսւում. մի հայ չերքէզ, որը հիւսիսային դրան մօտ է կանգնած, մեքենաբար լուսամտից դուրս է նայում, կարծելով, թէ սայլերի քարւան է անցկենում։ Իսկ Տէր Մարուքէն, վերևի դասումը անշարժ կանգնած, քը՜ռ-քը՜ռ ծիծաղում է ու միրուքը շոյում։ Տէր Խաչատուրը վերջապէս Սահակ սարկաւագին բօթելով հրամայում է՝ գնալ միւս դասը և շարականը մի կերպ վերջացնել։ Սարկաւագը իսկոյն մատների մէջ առած բուրնոթին նորից տուփի մէջ է ածում ու շտապում դէպի միւս դասը...

և ահա նրա ճռնչոցը վէտ-վէտ ալիքներով սկսում է լող տալ օդի մէջ ու բարձրանալ դէպի բիւզանդական փառաւոր գմբէթի առաստաղը...

«Փառք ի բարձունս»ից յետոյ եկեղեցի է մտնում և երեցփոխանը—Մարկոս աղան իր փոքրիկ որդու-Համբարձումի հետ և կանգնում մոմի պահարանի առաջ. ծանօթ աղաները, մոտիկ կանգնած լինելով, իսկոյն նրան բարևում են և ձեռը սեղմում։

Մարկոս աղան 56 տարեկան է. կարճ հասակով և հաստափոր. սպիտակ մազերը կարճ է խուզում. նեղ ու ցած ճակատը դուրս է ցցւած. թաւ բեխերը քթի երկու կողմերից ցած կախւելով՝ նրա ահագին բերանը փոքր են ցոյց տալիս. սև աչքերը թափանցող են և արիւնախառն. նրանց պոչերը պարբերաբար կծկւում են, այդ պատճառով կոպերն էլ փայլակների նման ստէպ-ստէպ են բաց ու խուփ անում։ Նրա թուլացած ու դեղնագոյն թշերի ճարպոտ կաշին բերնի երկու ծայրերից ծալ-ծալ կախ ընկած լինելով՝ դէմքը որսորդական շան դնչի շատ է նմանում։ Նրա ածիլած երեսը և հաստ ու ճարպոտ պարանոցը շուտ-շուտ են քրտնում. ծոծրակի վրայ և կզակի տակին մի քանի ճարպոտ ծալքեր են կախ ընկած. նրանք Մարկոս աղային թոյլ չեն տալիս գլուխը աջ ու ձախ դարձնել. այդ պատ-

ճառով նա ստիպված է ամբողջ մարմնով աջ ու ձախ շուռ գալ ճիշտ այնպէս, ինչպէս անում են գայլերը, խոզերը և մի քանի ուրիշ կենդանիներ։ Ամենից աւելի աչքի է ընկնում Մարկոս աղայի վիթխարի փորը, որը իր ձևովը, կարծես, մի տեսակ նմանութիւն ունի մեծ ու ձուաձև սամաւարների հետ, միայն այն զանազանութեամբ՝ որ սամաւարները պղնձից են առհասարակ շինած լինում, իսկ Մարկոս աղան ճարպից է թիսել իր սամաւարը։ Մարդիկ պղնձէ սամաւարները հետները ման չեն ածում. իսկ Մարկոս աղայի սամաւարը նրա անբաժան ընկերն է. նա ո՛ւր գնաց՝ փոր-սամաւարն էլ հպարտ-հպարտ առաջիցն է գնում, համ ճանապարհ է բաց անում իր տիրոջ համար, համ էլ ուրիշներին ծիծաղացնում այնպիսի շարժումներով, որոնք գինով լիքը գոմշի տկճորն են յիշեցնում։ Մարկոս աղան երբ ոտով է ման գալիս՝ «թլը՛փ-թլը՛փ» ձայն է լսում իր փորի միջից. իսկ երբ ստիպված է լինում շտապել, այն ժամանակ գլուխը ետ է գցում, փորը առաջ է տնկում, ձեռները ու ոտնամանների քթիկները աջ ու ձախ է չռում և սկսում է օդի մէջ ալիւր մաղելու շարժումներ անել։ Նրա ամբողջ կազմը այդ միջոցին նաւակի նման է օրօրւում, ոտները պէտք եղածից աւելի են ծալւում, կոկորդից էլ «խո՛ռթ-խո՛ռթ» ձայներ է արձակում։

Մարկոս աղան ինքն էլ ուրախ չէ որ վիթխարի փոր ունի. հաշտարար դատաւորի մօտ նա շատ յաճախ է լինում, իսկ դատարանի դռները նեղ են և նա ամեն անգամ՝ այնտեղ մտնելիս ու դուրս գալիս՝ սաստիկ է ցաւացնում իր փորոտիքը։ Բացի դրանից՝ Զատկի տօներին նա ակամայ խուսափում է կարճահասակ շեկ աստիճանաւորների շնորհաւորութիւններից. որովհետև նա պարտաւոր է երեք համբոյր ստանալ, նոյնքան էլ վերադարձնել. բայց նրա փոր-սամաւարը արգելք է լինում դրան. առանց այլ և այլի նա հուպ է տալիս աստիճանաւորին ու գցում Մարկոս աղայի կամ աջ և կամ ձախ ուսի վրայ. հետևանքը լինում է այն, որ Մարկոս աղան իր բերանում համբոյրի փոխանակ աստիճանաւորի ականջն է շօշափում, որը, բացի նրանից որ Մարկոս աղայի բերնին համ չի տալիս, վտանգաւոր ևս կարող է լինել իր հետևանքովը, մանաւանդ եթէ աստիճանաւորը հաշտարար դատաւորը լինի և կամ դատախազը. այն ժամանակ հօ Ա՜ստուած հասնի։ Ծանօթների շրջանում Մարկոս աղան շատ անգամ ինքն իր բռունցքովը իր փոր-սամաւարին հարուածներ է տալիս և կիսածիծաղ լրջութեամբ բացագանչում.

—Անիծեա՛լ լինիս, դժոխավայել կպրի կաթսայ, հոգի՛ս հանեցիր, անիրաւ, հոգի՛ս...

Մարկոս աղան երբ խօսում է, այնպէս է թւում, կարծես, նրա հաստ ձայնը խոր հորից է դուրս գալիս. իսկ երբ բարկանում է ու ձայնը բարձրացնում՝ անտառում ապրած մարդը իսկոյն աչքերը այն կողմը կը դարձնէ, որտեղ ծառեր են բուսնում, կարծելով, թէ տանձի սիրահար արջը ճիւղեր է ջարդոտում։

Երբ իրանից կախումն ունեցող կամ չքաւոր մարդի հետ է խօսում Մարկոս աղան՝ նրա երեսին ամենևին չի նայում. կամ նրա ձեռներին ու ոտներին է մտիկ տալիս, կամ թէ չէ՝ աչքերը իր փորին յառած՝ ձախ ձեռովը վզի ճարպոտ ծալքերն է շփշփում։ Բայց երբ հարուստ մարդի հետ է խօսում՝ աչքերը նրա աչքերից չի հեռացնում, իւղալի ժպիտը նրա շրթունքներից չի պակասում. հինգ բոպէն մի անգամ էլ խօսակցի թիկունքն է քնքշօրէն թափահարում։

Նա ունի մի լաւ տուն, կողքին—պարտէզ. նրա ծառաները որբ երեխաներ են եղել. որտեղից-որէ ճարել է նրանց և ծառայեցնում, փոխարէնը տալով միայն՝ օրական մի փոր հաց, տարեկան երկու ձեռք շոր։

Տասներկու տարի շարունակ Մարկոս աղան Տիրամօր եկեղեցու երեցփոխանութեան պաշտօնն է վարում։ Ամեն անգամ, երբ նա իր պաշտօնի ժամանակամիջոցը լրանալուց մի-երկու ամիս առաջ հրաժարական է տալիս, առարկելով, թէ լուծը թէև քաղցր է, բայց և շատ ծանր՝ ծխականները Տէր Խաչատրի նախագահութեամբ ժողով են կազմում և խնդրում Մարկոս աղայից, որպէս զի հրաժարականը ետ առնէ. նա էլ ամեն անգամ, մի փոքր տատանումից յետոյ, զիջանում է, նորից վեր է առնում այդ քաղցր ածանը լուծը և դնում իր ուսերի վրայ։

Գ. քաղաքի ժողովուրդը սկզբից եղել է միայն արհեստաւոր, մասամբ էլ հողագործ։ Ժամանակի ընթացքում՝ արհեստաւորները, կուլտուրական շրջաններից բոլորովին կտրուած ու կղզիացած ապրելով, դառնում են անպէտք, մնում են անգործ։ Սովածութեան երկիւղը նրանցից աւելի համարձակներին դուրս է մղում նահապետական շրջանից. նրանք դէն են գցում մուրճն ու մկրատը, ընկնում են առևտրի ետևից և կարճ միջոցում հարստութիւն ձեռք բերում։ Եւ ահա այդ մի քանի հարստացած մարդիկն են սկսում առաջին անգամ յեղաշրջել Գ. քաղաքի կարգ ու սարքը, փոփոխութեան ենթարկել ժողովրդի նահապետական պարզ նիստն ու կացը։ Սոխով հաց և կամ մի բուռը լոբի ուտելով օրերը մթնեցնող արհեստաւորները տեսնում են յանկարծ, որ Բալիենց Մկրտիչը և Զումբալենց Սերոբէն, որոնք մի քանի տարի առաջ դուքանի շեմքին նստած

ոտնամանները էին կարկատում, այժմ մեծ-մեծ տները են շինում, սեփական կառքեր ունին, ծառաներ են պահում, ամեն օր ճուտով փլաւ, գառան մսի խորոված են ուտում. գինին ու արաղը տակառներով են առնում բազարից, զուռնան ու թառը նրանց տներից անպակաս է. մի խօսքով՝ ապրում են այնպէս՝ ինչպէս մի ժամանակ ապրում էին թուրք աղաները, նրանց պապերի կեղեքողները...

Եւ ահա այդտեղ արդէն զարթնում է անկիրթ մարդու վատ բնազդը. խղճուկ արհեստաւորների ոչխարային հօտը քծնել է սկսում, շողոքորթել է սկսում հարուստներին, աղա է կոչում նրանց ու վեր առնում իր գլխի վրայ դնում. նա յոյս ունի, որ մի օր, աղայի միջոցով, գուցէ ինքն էլ բարօրութիւն տեսնէ։ Նորակոչ աղաները թէպէտև սկզբումը իրանք էլ են զարմանում, թէ էդ երբ նրանք այդպէս շուտ աղա դառան, բայց շուտով մտնում են իրանց դերի մէջ, հպարտութեան և գոռոզութեան դիմակները են դնում երեսներին, անցնում են ժողովրդի գլուխը, սանձն ու ղեկը պինդ հուպ են տալիս փորերին և սկսում աղայութիւն անել. այսինքն՝ բարերարութեան անունի տակ զրկելով ու գողանալով՝ փառք և պատիւ վայելել։

Այդտեսակներից է և Մարկոս աղան. Տէր Խաչատրի հետ անխզելի կապերով է կապուած. ուրիշների հաշին նրանք մէկմէկու այնքան լաւութիւններ են արել, որ այլ ևս չեն կարող առանձին-առանձին մտածել։

—Մարկոս ջան, մենք պէտք է միմեանց պահպանենք, շեշտելով ասում է Տէր Խաչատուրը ծանօթութեան հէնց առաջին օրերից.

—Հրամերես, տէրտէր, միմեանց պէտք է անպատճառ պահպանենք, ուրիշ կերպ չի կարելի, համաձայնւում է Մարկոս աղան։

Եւ ահա տասնեակ տարիներ նրանք պահպանում են միմեանց. ժամանակ-ժամանակ ինչ որ հաշիւ են գրում եկեղեցական մատեանի մէջ և ուղարկում ուր հարկն է. այնտեղ էլ սուս ու փուս մատեանը վեր առնում գցում են այնտեղ, որտեղից դեռ ևս ոչ մի մատեան դուրս չի եկել.

—Ղրկեցիր մատեանը, հարցնում է Մարկոս աղան հազիւ լսելի ձայնով.

—Գնաց, անհոգ եղիր, պատասխանում է Տէր Խաչատուրը.

—Ակռաժաժիկը քիչ չի, տէրտէր.

—ԲՀլ ա, շատը լաւ չի, թէ չէ երես կառնեն... դու տեղումդ հանգիստ նստիր, Մարկոս

ջան... մատեանը Յազկերտի Անյուշ բերդումն ա հրմի... ինձ լսիր ու հաւատա...

—Կեցցէ Հայաստան, բացականչում է Մարկոս աղան ուրախացած ու նոր սիգարա ծխում...

Տասներկու տարւայ ընթացքում Մարկոս աղան համարեա ամեն տարի եկեղեցին է դրսից ու ներսից նորոգում. անցած տարի նա մինչև անգամ Եհովայի պատկերն է նկարել տալիս մեծ գմբէթի առաստաղին։ Կոնսիստորից այդ առիթով հանդիսաւոր օրհնութեան թուղթ է գալիս Մարկոս աղայի անունով, իսկ հոգևոր կառավարութեան անդամներին հրամայւում է միասին հաւաքւել, պատկերը տեսնել ու քննել՝ արդեօք լուսաւորչական եկեղեցու աւանդութիւններին հակասող ոչինչ չկայ այնտեղ և այնուհետև միայն նրան օծել։

Հաւաքւում են տէրտէրները. նախանդամն էլ Տէր Խաչատուրն է. գալիս է և Մարկոս աղան հայ նկարչի հետ։ Տէրտէրները, միրուքների ծայրերը դէպի գմբէթի առաստաղը բարձրացրած, երկար մտիկ են տալիս պատկերին. վերջինը ներկայացնում է Աստծուն, Որը ամպերի միջով ցած է նայում և օրհնում է մարդկանց։ Տէր Սարգիսը նկատում է թէ նկարը վատ չէ. Տէր Խաչատուրը նրա ձայնը լսելով բարկանում է և պատասխանում, թէ պատկերը անբնական է, որովհետև

Աստուած եթէ ամպերի միջով է մտիկ տալիս, ուրեմն դէմքը պէտք չէ երևայ.

—Մենք երևակայութեամբ պէտք է նրան տեսնենք, հասկանում էք թէ չէ, ասում է նա հեղինակօրէն։

—Իհարկէ, իհարկէ, պատասխանում են միւս տէրտէրները, մինը միւսի ետևից իր հաւանութիւնը տալով։

Նկարիչը սկսում է ինչ որ բացատրել, բայց տեսնելով որ ոչ ոք նրան չի լսում, վիրաւորւում է և հեռանում։ Միւս օրը Մարկոս աղան մի շեկ ներկարար է կանչում, որը, հասկանալով թէ բանը ինչումն է, վրձինը թաթախում է մոխրադոյն ներկի մէջ, բարձրանում է գմբէթի մօտ, Եհովայի պատկերը զանազան կողմերից ներկում է և դարձնում ե ր և ա կ ա յ ա կ ա ն։ Նորից հաւաքւում են տէրտէրները, նորից վերև են բարձրացնում միրուքները և պատկերին մտիկ տալիս. երկար ժամանակ նրանցից ոչ մինը ոչինչ չէր ասում. լուռ էր և Տէր Խաչատուրը. այդպէս լռութեամբ էլ նրանք հաւանում են պատկերին և օծում։ Այդ առիթով Մարկոս աղան տէրտէրներին փառաւոր հաց է ուտացնում իր տանը։

Շատ տարի առաջ Մարկոս աղան ինչ որ գիւղում, ասում են, դուքան է ունեցել. երկուերեք անգամ կտակակատար է եղել, յետոյ Գ. քա-

դաքն է վերադարձել, տուն է գնել և իր համար ապրում է. մարդը փող ունի և ապրում է. ում ինչ գործ... այդպէս է խօսում ժողովրդի մեծամասնութիւնը։ Բայց կան մի քանի պառաւներ, որոնք Մարկոս աղային աւելի լաւ են ճանաչում։ Խունդուզենց Սրաբը մօտ հարիւր տարեկան կըլինի, Արթին բիծան և ուստա Օվակը այնքան են պառաւել, որ չեն էլ յիշում թէ երբ են ծընուել։ Այդ երեք պառաւներն էլ սև չուխայ են հագնում, սև ու երկար փափաղներ են գնում գլխներին, ծանր ու բարակ են ման գալիս, նոյն կերպով էլ բուրնոթի քաշում։ Երեքն էլ բարձրահասակ են, բարակ ու նիհար. ուստա Օվակի իրանը արևածաղկի ցողունի նման առաջ է թեքուած։ Երբ տաքարև օր է լինում՝ նրանցից ամեն մինը իր տնից դուրս է գալիս և քայլերը ուղղում եկեղեցու այն պատին, որը արևին է նայում. հէնց որ մինը հասնում է պատին, միւս երկուսն էլ միմեանց ետևից հևալով ու մշմշալով գալիս են և երեքով կողք-կողքի նստում պատի մօտ, քարի վրայ։ Ամեն մինը իր կարմիր կամ կապոյտ թաշկինակը պարզում է առաջին, բուրնոթու տուփն էլ դնում վրէն։ Սկզբում բուրնոթուց են խօսում նրանք, այդպէս է սովորութիւնը. տուփերը բացուխուփ անելով ամեն մինից էլ քաշում են և քննում՝ թէ ում բուրնո-

թին աւելի թունդն է։ Այնուհետև բաւական ժամանակ լուռ ու մունջ արեգակի լուսով լուսաւորուած առարկաներին են մտիկ տալիս... և երբ նրանց սառած արիւնը արեգակի ջերմութիւնից մի փոքր տաքանում է, այն ժամանակ նրանք ոգևորւում են և սկսում խօսել... մեծ մասամբ հին ժամանակից, երբ նրանք դեռ ևս երիտասարդներ էին և երբ, այսպէս ասած, աշխարհը նրանցն էր։ Պատահում է որ նրանց մասլահաթի թունդ միջոցին՝ անցորդներից մինը կամ միւսը նրանց գլխների վրայ բղաւելով բարև է տալիս, անցնում ու գնում. մեր պառաւները երեքով էլ իսկոյն աջ ձեռների հինգ մատները ճակատներին տանելով՝ անցնողի ետևից են նայում, որպէս զի իմանան թէ ով էր նրանց բարև տուողը։

—Մընգըռենց Սեփանն ա, նկատում է ուստա Օվակը բոլորից առաջ.

—Հը՛, հարցնում է Խունդուզենց Սրաբը.

—Հը՛, ինչ ա իլել, հարցնում է բէխաբար Արթին բիծան հեղինակօրէն.

—Մընգըռենց Սեփանն ա, ա՛յ տղայ, չես լսում, Մաղթաղ բաջու թոռը, էլի՛, տաքանում է ուստա Օվակը.

—Ախար էդ որն ա է...

—Տօ, Մաղթաղ բաջուն չես ճանանչում,

տնաշէն, տունը համամի կշտին ա... Սեփխանենց Կարապետի հարսն ա, էլի...

—Հը՞...

Այդ ըոպէին մէկ ուրիշ անցորդ է նրանց բարևում. նրանք էլ, առաջինին թողած, երկրորդի մասին են սկսում խօսալ։

Դուրս է գալիս, որ այդ պառաւները Մարկոս աղային շատ լաւ են ճանաչում. երբ նա, առանց բարև տալու, անցնում է նրանց մօտով, պառաւների մէջ ամեն անգամ հետևեալ խօսակցութիւնն է մօտաւորապէս տեղի ունենում։

—Զուռնաչի Օհանի թոռն էլ անցաւ, ասում է ուստա Օվակը, փափաղի ծայրը թափահարելով.

—Հը՞, հարցնում է Արթին բիծան.

—Երեցփոխանի համար եմ ասում, զուռնաչի Օհանի թոռը...

—Մարկոսը, Մարկոսը...

—Հա՜...

—Այ տղայ, բաղդ եմ ասում է՛... հէրը ինչ էր, ինքը ինչ դառաւ, մշմշում է Խունդուզենց Սրաբը։

—Մէ շալվար հագին՝ բազարումը սայլերի սակից դարման էր հաւաքում քու էդ Մարկոսը, նկատում է ուստա Օվակը.

—Հոգին, հոգին... դու ասա՝ հոգին վերջը որտեղ ա գնալու...

—Ա՛յ տղայ, միտդ ա՞ թէ չէ... աչքիս առաջն ա էլի... հէնց որ դուքանս բաց չէի անում... մին էլ տեսար էդ քո Մարկոսը առաջովս էր անցկենում... քոսոտ զատ էր... ալլա՜խ, ալլա՜խ... էսօր, օրինակ, հագած էր ըլում երկար չուխայ, գըլխին՝ քրդի քօլօզ, ոտներին՝ բրդի կօշիկներ...

—Ո՞րտեղից էր ճարում, դու էդ ասա...

—Ինքը հօ չէր ճարում, մատաղը իր ոտովն էր գալիս նրա մօտ, էն աստղի տակ ա ծնուած... մէկէլ օրը տեսնում ես նրան ու չե՞ս ճանանչում... շորերը դիփ փոխել ա... տրապիզոնցու լէն շալվար ա հագել, ուսերին ռուս սալդաթի շինել ա գցել, ոտներին՝ մաշիկ, գլխին էլ՝ էս իմ փափաղի նման մեծ փափաղ...

—Դժուել ա, տօ...

—Ինչի՞ ա գժուել. իր բանը նա լաւ ա իմանալիս իլել. չարչին ըսկի գիժ կըլի՞... տօ՜ռ, մէ ասեղ ա նիսիա տալիս, փափաղդ վեր առնում ամանաթ ա պահում, դա գիժ ա՞...

—Ետոյ ուրիշի վրայ ծախում, հը՞...

—Բաս, ետոյ ուրիշի վրայ ծախում. աղբերը մեռաւ, նրա դուքանը զաւթեց. քաւորը մեռաւ, նրա ունեցած—չունեցածը զաւթեց ու եթիմ աղջկանը անբաղդացրեց, ըսկի դրանում խըճապըտանք կըլի՞...

—Դժոխքի բաժին ա դրա հոգին, ես իմ

Աստուած, սատանաները դժոխքի համամում նրա սևացած հոգին պրտի քիսա քսեն Սաթայէլին... վա՜յ ինձ, վա՜յ ինձ, մշմշում է երկար ու բարակ Խունդուզենց Սրաբը։

Այդպէս են խօսում պառաւները Մարկոս աղայի մասին. լսողները թէև գնում ուրիշներին են պատմում, բայց Մարկոս աղայի պատիւը դրանով չի պակասում. ընդհակառակը՝ հեռուից են նրան բարևում, որովհետև շատ պէտք մարդ է. և ինչպէս չբարևեն... գալիս են մօտը, պատմում են իրանց նեղ վիճակը և փող ուզում. նա էլ մեծ մասամբ տալիս է և ինչ որ տոկոսներ հաշում. փողը ժամանակին չտուեցիր՝ նա էլ ունեցածդ—չունեցածդ ծախել կըտայ և իր փողերը կըսաղացնէ. բա ինչ անէ, հօ ուրիշի փողերը չի պահանջում, իր արդար քրտինքովը աշխատած փողն է ուզում մարդը... նոյն իսկ Տէր Խաչատուրը շատ անդամ, ասում են, Մարկոս աղայից փող է վերցնում և ժամանակին տոկոսով վերադարձնում... էլ այդտեղ երկար ու բարակ խօսելը կամ բամբասելը յիմարութիւն է...

XII

Մարկոս աղայի կինն ու երեխաները վաղուց են մեռել. մնացել է միայն մի տղայ—Համբարձումը,

որի հետ նա ապրում է իր տան չորս պատերի մէջ։

Համբարձումը արդէն 10 տարեկան է. նա մի վերին աստիճանի օտարոտի և ներդային արարած է. մանկական անհոգութիւն դուք չէք նկատիլ նրա մէջ. նրա մեծ-մեծ սևորակ աչքերի միջից տաղտկութիւնն է միայն մտիկ տալիս։ Իր հասակից աւելի զարգացած լինելով՝ հօր անմիջական ազդեցութեան տակ՝ մարդկանց ու կեանքի մասին բոլորովին տարօրինակ գաղափարներ է կազմել. նա համոզուած է որ ամբողջ աշխարհում միայն հայրն է նրան սիրում, իսկ ուրիշները թշնամիներ են, ուստի օտարներից ամեն կերպ աշխատում է խորշել, թէև ամեն անգամ նրան այդ չի աջողւում, որովհետև նրա մանկական սիրող սիրտը ժամանակ-ժամանակ կաշկանդող մտքերը խորտակելով՝ ամենաքնքոյշ և բուռն զգացմունքներ է արտայայտում՝ նոյն իսկ օտարների վերաբերմամբ։

Համբարձումի նուրբ կազմը, կարմիր ու կլորակ թշերը, սև ու արտայայտիչ աչքերը ամենքի վրայ լաւ տպաւորութիւն են թողնում. բայց երբ փորձում ես հետը խօսել, մանկական հարցեր ես առաջարկում՝ լաւ տպաւորութիւնը իսկոյն ցաւակցութեան է փոխւում, որովհետև Համբարձումը իսկոյն ցնցւում է, աչքերը գցում է գետնին և ձեր բոլոր հարցերին կամ լռութեամբ

պատասխանում և կամ գլուխը շարժելով։ Մարկոս աղան ժամանակ-ժամանակ Համբարձումին հետն առած ռուս աստիճանաւորների մօտ հիւր է գնում։ Այնտեղ երեխաները հրաւիրում են Համբարձումին, որպէս զի նա էլ մասնակցի նրանց խաղերին. բայց նա գլուխը շարժելով մերժում է նրանց առաջարկը, գոռոզ դէմքով և սեղմած շրթունքներով գնում—անշարժ նստում է իր հօր մօտ և բոլոր ժամանակը լուռ շուրջը դիտում։ Մարկոս աղայի քէֆն է գալիս, որ որդին նրանից չի բաժանւում. ուրիշների հետ խօսելիս՝ նա Համբարձումի գլուխն է փայփայում և սեղանից վեր առնում նրան ուտելեղէն կամ շաքարեղէն տալիս։ Համբարձումը 2 տարեկան է լինում, երբ նրա մայրը մեռնում է. այդ ժամանակից Մարկոս աղան իր անմիջական հսկողութեան տակ է պահում ու մեծացնում նրան։ Ամբողջ աշխարհում միայն Համբարձումն էր, որին Մարկոս աղան սիրում էր, ինչպէս աղուէսը իր ձագուկին. միայն Համբարձումն էր՝ որ վերջիվերջոյ պէտք է տիրանար նրա այնքան դժուարութեամբ հաւաքած հարստութեան. այդ միտքը նրան շատ էր զբաղեցնում և անհանգստացնում... ինչպիսի որդի պէտք է նրանից դուրս գայ, կըլինի արդեօք նա այնքան խելօք ու հնազանդ, որպէս զի հօր կարողութիւնը պահպանէ ու չփչա-

ցնէ. այդ այրող մտքերի ազդեցութեան տակ, Մարկոս աղան աշխատում է իր սեփական ճաշակովը կրթել որդուն, որպէս զի նրանից այնպիսի մարդ դուրս գայ, ինչպիսին ինքն է ցանկանում և երևակայում։ Այդ պատճառով էլ նա Համբարձումին փակած է պահում տանը, որպէս զի նա չփչանայ. Համբարձումը ոչ մի երեխայի երես չի տեսնում, ոչ մի մանկական ընկերութեան չի մասնակցում. այդպէս է նրա հօր կամքը։ Մարկոս աղան փափաքում է, որպէս զի նրա որդին իր հոգու բոլոր ուժովը սիրէ—նախ՝ հօրը, յետոյ պաշտէ նրա փողը. լինի հնազանդ, դառնայ ճարպիկ, ուրիշներին արհամարհէ, իսկ փող աշխատելու անյագ ցանկութիւնը սրտին զարդ շինէ։

Եւ ահա Համբարձումը իր բոլոր ժամանակը համարեա անց է կացնում սենեակում և կամ պարտիզում. նրա հետ լինում են՝ կամ նրա ծիծմայրը—Լուսիկը, կամ ծառաները և կամ ինքը—Մարկոս աղան։ Նա խաղալիկներ ունի և նրանցով պէտք է զբաղուի. տարօրինակ են և նրա խաղալիկները. միջատ ու թռչուն որսալու ցանցեր, ճանճի և մկան թակարդներ, կատուի ու շան թաթերը սեղմող կոճղեր, նաղաստակ և աղուէս որսալու գործիքներ, պարսաքար կաշուց, պարսաքար փայտից, մանկական ատրճանակներ, մո-

ղեզ սպանելու սրածայր գաւազանները և այլն և այլն։ Համբարձումը մի արկղիկ ունի՝ լիքը ոսկորի խորանարդներով, որոնց վեց երեսներին էլ նրբութեամբը նկարւած են՝ ոսկի և արծաթ փողերի նշանները։ Նա ունի նոյնպէս երկու արձան, որոնք մետաղից են ձուլւած և մի-մի ոտնաչափ բարձրութիւն ունին. իրանց նրբութեամբը նրանք առանձնապէս են աչքի ընկնում։ Մինը ներկայացնում է մի աղէս, որի քթի մօտ մի կոյտ ձուկն է դիզած. բերնումն էլ մի ձուկ բռնած նա ուտում է. ձկան պոչը բերնի ձախ կողմից դուրս է ցցւած. աղէսը ձախ թաթը ձկան կոյտի վրայ է դրել, աչքերի պոչերովն էլ այն կողմն է նայում, որտեղ գայլն է կանգնած նիհար ու տխուր դընչով. աջ թաթը դէպի աղէսը պարզած՝ գայլը նրանից ձուկն է խնդրում։ Երկրորդ արձանը ձուկ խնդրող գայլին է ներկայացնում, որը առանց պոչի և բոլոր ուժովը փախչում է. սառած ջրի միջից նրա պոչի ծայրն է երևում. չորս գիւղացի, մի-մի գոմբալ ձեռներին, գայլի ետևիցն են վազում. աղէսը, հեռուն կանգնած, բերանն է բաց արել, գայլին լեզու է ցոյց տալիս։ Այդ արձանները Մարկոս աղային ընծայ են ուղարկւած։

Մարկոս աղան ուտելու և խմելու շատ լաւախորժակ ունի. բայց ուտելուց յետոյ նրա փորսամաւարը մինչև այն աստիճանն է ծանրանում,

որ նա երկու—երեք ժամ շարունակ չի իմանում թէ գլուխը որ պատովը տայ... պառկել չի կարող, բժիշկները խորհուրդ չեն տալիս. ոտով մանգալ—զբօսնել նոյնպէս չի կարող, որովհետև շունչն է կտրում. ամեն տասը քայլին ստիպւած է լինում նստել, հանգստանալ։ Առաջները նա Համբարձումի հետ պարտէզ էր գնում, գործիքները լարած՝ աղէս էր որսում. բայց այժմ այդ էլ նրա համար դժւարացել է. այդ պատճառով, հէնց որ հացի սեղանից նա վեր է կենում, քաշ է տալիս Համբարձումին իր քնարանը, դռները պինդ ծածկում է, դուրս է բերում գաղտնի պահարանից մի արկղիկ, որի բաց անելու և կողպելու գաղտնիքը միայն ինքն է իմանում, բաց է անում և որդուն զանազան հրաշալիք ցոյց տալիս։ Հանում է տեսակ-տեսակ կողպէքներ և նրանց գաղտնիքը մանրամասնօրէն բացատրում, ցոյց է տալիս հայելիներ, որոնց միջոցով կարելի է տեսնել թէ հարևան սենեակում ինչ է կատարւում։ Հանում է ոսկի և արծաթ փողերի ժողովածու և նրանցից ամեն մինի մասին երկար ու բարակ խօսում ու ցոյց տալիս այն միջոցները, որոնցով ճիշտ կարելի է որոշել իսկական ոսկին։ Թանկագին քարերը արժողութիւնների համեմատ դասում է սեղանի վրայ այնպէս, որ արեգակի ճառագայթները ուղղակի նրանց

վրայ ընկնեն. և միառմի բացատրում է նրանց զանազանութիւնները և առանձնայատկութիւնները։ Այդպէս այդ բոլորը նրան ցոյց տալուց յետոյ նորից կողպում է արկղիկը և պահարանի գաղտնի խորշերում անհետացնում։ Այնուհետև նա սկսում է երկար ու բարակ պատմութիւններ պատմել ու խրատներ տալ որդուն, որոնք Համբարձումին հետզհետէ տաղտկութիւն են պատճառում, որովհետև միևնոյն բանն է անդադար կրկնւում։ Մարկոս աղան ոչ մի առիթ ձեռից բաց չի թողնում նեղշնչելու իր որդուն, թէ հարուստը, ինչքան էլ յիմարու վատթար լինի, դարձեալ հասարակութեան մէջ պատիւ և նշանակութիւն կունենայ. իսկ փող չունեցողը ինչքան էլ խելօք լինի՝ դարձեալ նրա գինը մի քանի ռուբլի է. հարուստը կարող է գնել նրան և հետը վարել այնպէս, ինչպէս վարւում է իր ձիաների հետ. այսինքն՝ սանձը բերնին դրած՝ նրան կըքշի այն կողմը, որ կողմը ինքն է ուզում. եթէ չլսի՝ հարուստը նրան կըմտրակէ. եթէ թուլանայ՝ դնչին ոսկեղէն գարու տոպրակ կըկախէ։ Համբարձումը առաջին տարիները բաւական հետաքրքրութիւն էր ցոյց տալիս իր հօր խօսքերին և գանձերին. բայց այժմ նրանք այլ ևս չեն հետաքրքրում նրան, որովհետև տարիների ընթացքում խիստ շատ

անգամ է նա լսել ու տեսել միևնոյնը։ Մարկոս աղան վերջին ժամանակները ինքն էլ է արդէն նկատում, որ Համբարձումը մի տեսակ անտարբերութիւն է ցոյց տալիս նրա խօսքերին, անուշադիր է երևում և խելացնոր. այդ պատճառով սկսում է ամեն մի քայլին յանդիմանել իր որդուն, սպառնալիքներ կարդալ, որպէս զի երեխան սրտում երկիւղ ունենայ և ուշադրութեամբ լսէ ու միտքը պահէ այն ամենը, ինչ որ հայրն է ասում։

Լուսիկը Համբարձումի ծիծմայրն է եղել և մինչև օրս էլ Մարկոս աղայի տունն է կառավարում. Համբարձումին իր աչքի լոյսի նման խնամել ու պահպանել է։ Երեխան թէև սիրում է նրան իր մանկական քնքոյշ սրտի բոլոր ուժովը, բայց հայրը շատ անգամ նրան հասկացնում է, թէ Լուսիկն էլ օտար է, անփող է, ծառայ է, պէտք չէ նրան սիրել ու վզին փաթաթել։ Համբարձումը լռութեամբ է լսում հօր այդ խօսքերը և ընազդօրէն աշխատում է հօր առաջ չխօսել Լուսիկի հետ. բայց երբ հայրը տանը չի լինում, այն ժամանակ նա երկար չի կարողանում բռնաբարել իր սիրտը։ Մօտենում է, օրինակ, Լուսիկը և կամենում է նրան համբուրել ու փայփայել. իսկ նա երեսը շուռ է տալիս. բայց երբ Լուսիկի աչքերում արցունք է տեսնում, իսկոյն

թռչում է տեղից, ընկնում է նրա գիրկը և ինքն է սկսում խելագարի նման նրան համբուրել, արտասուել ու թոթովել.

—Նանի ջան, լաց մի լինիր, ուզում ես, համբուրիր ինձ։

Լուսիկը մի ձեռով արցունքներն է չորացնում, միւսովն էլ իր հոգուց աւելի սիրած, իր կաթնով ու սիրով խնամած Համբարձումին փարելով՝ մայրական ամենաքնքոյշ համբոյրներ է դրոշմում նրա աչքերին, ճակատին, թշերին... հիացածի նման ուշիուշով լսում է նրա անմեղ զրոյցներն ու մխիթարւում։

—Ինչի՞ չես թողում որ քեզ համբուրեմ, հոգիս, մրմնջում է նա սաստիկ շիկնելով.

—Ախ, նանի ջան, հայրիկիցս եմ վախում... բայց չեմ կարող, նանի ջան, չեմ կարող նրա խրատները կատարել...

—Հայրիկիդ պէտք է լսես, հոգիս...

—Հա՜, լսե՛ս... նա ասում է որ դու օտար ես, ծառայ ես, քեզ համբուրել չի կարելի.

—Դու էլ մի՞ համբուրիր.

—Լա՛ց ես լինում ախար

—Լաց չեմ լինիլ.

—Ինչի՞, ինձ չե՞ս սիրում.

—Ո՞նց չեմ սիրում, մենակ քեզ եմ սիրում աշխարհիս վրայ, որդիս, բալէ՛ս, ջա՛նս, արև՜ս...

ուզում ես, քեզ համար համով գաթա եմ թխել տուել, գնանք...

Համբարձումը համ գաթա է ուտում, համ էլ թռչկոտում է Լուսիկի շուրջը և խօսում.

—Նանի ջան, բաբօն լա՛ւ մարդ ա.

—Լաւ մարդ ա, որդի.

—Նրան էլ գաթա կըտա՛ս.

—Կրտամ.

—Բամբակիցդ էլ ինձ մի քիչ կըտա՛ս.

—Վեր առ, ինչքան սիրտդ ուզում ա, հոգիս.

—Գիտե՞ս ինչի համար եմ ուզում.

—Գիտեմ.

—Գիտե՞ս... ո՞վ քեզ ասեց.

—Ես ինքս տեսայ.

—Տեսա՞ր... հայրիկիս չե՞ս ասիլ, չէ՞.

—Չէ, չէ, չեմ ասիլ, հանգստացնում է նրան Լուսիկը համբուրելով սպրդնած թշիկները. Համբարձումը մի քանի կտոր բամբակ վեր առնում ծոցն է դնում, նրանցով թռչնիկների բներն է նա յարթում, ծերունի Բաբօյի համար էլ մի գաթա ձեռին բռնած՝ դուրս է գալիս բակը, վազում ու մտնում պարտէզ։

Համբարձումը չափազանց սիրում է բնութիւնը. հայրը նրան դեռ ևս այդ չի արգելել. գուցէ մոռացել է։ Հէնց որ պարտէզի դուռը ետեւից ծածկելով նա մտնում է ծառերի և թփերի,

արօտների և ծաղիկների խորքը՝ հետզհետէ հոգով-մարմնով անձնատուր է լինում գեղեցիկ բնութեան և դառնում նրա հարազատ զաւակը։ Հոտաւէտ ծաղիկների հետ նա ծաղկում—կարմրում է, թաւիշ ու մետաքս թիթեռների հետ թռչկոտում—ժպտում է և քաղցրաձայն թռչնիկների հետ ճլվլում-ծլվծլվում.

Գոյնզգոյն ծաղիկներից, հիւթալի դալարներից փնջեր, պսակներ ու գօտիներ է հիւսում, նրանցով իր սիրունիկ ճակատը, կուրծքն ու մէջքն է զարդարում. մեծ-մեծ տերևներից հովանոցներ է շինում, ձեռին բռնած ուրախ-զւարթ ման է գալիս ծառերի շուրջը և անմեղ շրթունքից անորոշ խօսքեր բաց թողնելով՝ երկնքի թռչնիկներին իր գիրկն է հրաւիրում. նա սաստիկ է փափաքում բռնել նրանց իր նազուկ թաթիկների մէջ, ցանկանում է սիրել նրանց, ինչպէս սիրում է Լուսիկին ու Բաբոյին, ցանկանում է համբուրել նրանց, իր թշերին մօտեցնել և այդպէս մի փոքր կարօտը առնելուց յետոյ՝ նորից ազատութիւն տալ նրանց։ Բայց թռչնիկները նրանից վախենում են. նրա ոտների ձայնը լսելիս՝ բարձրանում են ծառերից, թռչում են դէպի եթերային աշխարհը և Համբարձումի սիրող սիրտը վշտացնում։ Ցխուր աչքերով է նա զննում նրանց թեթև թռիչքը... ա՛խ, ինչպէս

ցանկանում է նա, ինչպէս փափաքում է նա, նոյնպէս թեթև թևեր ունենալ, նոյնպէս դէպի երկինք թռչել, ազատ և ուրախ թռչնիկների հետ եղբայր դառնալ։ Այդ ցանկութիւնից մղուած՝ շատ անգամ է նա բարձրանում հսկայ ծառերի գագաթները, որտեղից սքանչելի տեսարաններ են պարզւում մինչև ընդարձակ հորիզոնի հեռաւոր կլորագիծը...

Այնտեղ, շատ հեռուում, որտեղ երկինքը երկրի հետ է միացած, լեռների շղթաներ են երևում. նրանց սրածայր և բութ գագաթները, ձեռ-ձեռի տուած հսկաների նման, կարծես, պար են գալիս, մէկ չոքում են, մէկ բարձրանում. մի քանիսը գլխներին սպիտակ թաշկինակ են գցել, մի քանիսն էլ—կապոյտ. իսկ նրանց շուրջը մանր ու սպիտակ բազմաթիւ ոչխարներ են հաւաքուած. նրանք մերթ հսկաներին են մտիկ տալիս, մերթ կանաչ արօտը պոկում...

Հորիզոնից մի փոքր բարձր՝ երկնքի երեսին՝ արծաթ և ոսկի ամպիկներ են խաղ անում արեգակի շուրջը. ինչքան նման են նրանք նոր կշտացած կայտառ գառնուկներին... ինչքան սիրուն են, թեթև են, ուրախ են... խաղալով—խաղալով ամպիկները մօտեցան ու ծածկեցին արեգակի երեսը. բայց նոյն րոպէին արեգակի ճառագայթները ոսկէգոյն փետուրների նման դուրս

թռան ամպիկների գրկերից, գնացին ու մեխեցին սարերի ձիւնազարդ գագաթներին... տեսէք, տեսէք... գագաթները վառեցին ու կրակ դառան... ինչքան նման են դեղնագոյն շաքարի գլխներին... նանի ջան, վեր առ մուրճն ու դանակը, նրանցից մի կտոր ջարդիր ու ածա շաքարամանի մէջ, ես այսօր այդ շաքարովն եմ կամենում սուրճ խմել...

Սարերից դէսը ընդարձակ դաշտ է տարածուած. նրա մի մասը մուգ կանաչ գոյն ունի, միւսը—բաց դեղին. դաշտի միջով գետն է օձի նման սողալով գալիս և անցնում Գ. քաղաքի միջով. Համբարձումը իր ձախ կողմից քաղաքի մէկմէկու վրայ կուտակուած տներն է տեսնում, իսկ աջ կողմում նրանց ընդարձակ պարտէզի այն մասն է, որտեղ պտղատու ծառեր են միայն տնկուած և որտեղ լինում է մեծ մասամբ Բաբօն, ծերունի պահապանը։ Համբարձումը տեսնում է նրան և զիլ ձայնով բղաւում. «Բ ա բ օ օ»... բայց Բաբօն նրան չի լսում. նա ցած է իջնում ծառից և նորից վազում ծերունու մօտ։ Համբարձումը շատ է սիրում Բաբօյին, շատ է սիրում լսել նրա զրոյցները. ինչն է դրա պատճառը, նա չի կարող բացատրել. գուցէ նրա համար է սիրում, որ Բաբօն շատ է պառաւ, նրա գլուխը և ամբողջ երեսը՝ մինչև աչքերը և ականջների ետ-

տեը սպիտակ ու երկար մազերով է ծածկուած. գուցէ նրա համար է սիրում, որ Բաբօն միշտ մինակ է ապրում պարտէզի խորքում, ոչ մի ծանօթ չունի և ոչ ոքի հետ չի խօսում. եթէ մի բան հարցնես՝ կարճ պատասխան կըտայ, այն էլ հինգ րոպէ մտածելուց յետոյ. վերջապէս Համբարձումը Բաբօյին գուցէ նրա համար է սիրում, որովհետև ինքն էլ, ընութեան գրկում սրբագործելով, գլխից մինչև ոտը մարմնացած սէր է դառնում ամեն անգամ։

Բաբօն պարտիզում անգործ չի մնում ամենուին. դանակն ու կացինը, սղոցն ու մուրճը միշտ մօտին է դրած։ Համբարձումը կախ է ընկնում նրա թեւից և խնդրում, որպէս զի թողնէ գործը և նրա հետ զրոյց անէ։ Բաբօն սկզբում սովորաբար ոչինչ չի պատասխանում, լուռ ու մունջ իր գործն է շարունակում։ Պէտք է ասել, որ նա Համբարձումին սրտով շատ է սիրում, իր կորած թոռան կարօտը նրանից է առնում։ Համբարձումը բնազդով զգում է որ Բաբօն նրան սիրում է, ուստի չի խրտնում նրա օտարոտի վարմունքից. ինչպէս երես առած երեխայ՝ նա այնքան է նրան աղաչում ու ճտովը ընկնում, որ վերջիվերջոյ Բաբօն կատարում է նրա ուզածը. երկսով գնումնստում են մեծ կաղնու տակ. Համբարձումը, Բաբօյի ծնկների մօտ պպզած, անթարթ աչքերն

էլ նրա դէմքին ուղղած՝ սրտատրոփ սպասում է՝ թէ երբ նրա բեխերը կըշարժուեն, բերանը կըբացուի, լեզուն խօսել կըսկսի։ Բաբօն, բեխերի նմանող թաւ ունքերը մի քանի անգամ խաղացնելուց յետոյ, աչքերը տրեխի լայն քթին յառած՝ մի քանի բոպէ մտածմունքի մէջ է խորասուզուում. ապա ինքնիրան մրթմրթալով, հուպ է տալիս փափաղի ծայրը, խորն է խրում գլուխը նրա մէջ, մի քանի անգամ նրանով օդն է պոզահարում և վերջապէս, ահագին ձեռներովը օդի մէջ ճանճ բռնելու շարժումներ անելով, խօսել է սկսում։ Նա խօսում է գլխաւորապէս հովիւների, որսորդների և հողագործների կեանքից, անտես չի անում և աւազակներին. Համբարձումի թախանձանքներին զիջանելով՝ տասներորդ անգամը պատմում է և իր թոռան Աւետի մասին՝ թէ ինչպէս նա սարի լանջին գառնուկների հետ խաղ էր անում. Բաբօն իր թոռան համար դարմանից գլխաման էր հիւսում, ժայռերի մամուռներից նրա համար փափուկ անկողին էր պատրաստում ու վրէն քնացնում։ Երբ Աւետը ծարաւ էր լինում՝ Բաբօն այծի ծծերից կաթն էր կթում լայն տերևների մէջ ու նրան խմացնում։ Բայց Աւետին չար մարդիկ գողացան. Բաբօն մինչև այսօր էլ չի իմանում թէ նրա թոռը որտեղ է, ողջ է թէ մեռած։ Համբարձումը ծերունու աչ-

քերում արցունք է նկատում, իր աչքերն էլ արցունքով են լեցուում։ Բաբօն բարձրանում է տեղից և դանդաղ քայլերով հեռանում. Համբարձումը մնում է մինակ. ձախ ձեռով կաղնու բունը գրկած, ճակատն էլ ձեռին յենած՝ լուռ ու մունջ նա նայում է Բաբօյի թիկունքին, ուզում է բան ասել, բայց չի կարողանում, կոկորդը հա՜ կըծկըւում է, նա հազիւ է կարողանում այնտեղ հաւաքուած արցունքի կաթիլները հետզհետէ կուլ տալ... տխրութիւնը որտեղիցորէ գալիս և մառախուղի նման ծանրանում է նրա վճիտ ու սիրող սրտի վրայ. Բաբօն անբաղդ է, նա այդ զգում է. զգում է նոյնպէս, որ եթէ Աւետը լինի, Բաբօն այլ ևս լաց չի լինիլ, իրան բաղդաւոր կըզգայ. բայց ինչպէս գտնել Աւետին... և ահա Համբարձումի մանկական ուղեղը մտատանջութիւնների մէջ է ընկղմում... նա զարթնում է միայն այն ժամանակ՝ երբ ծառայի ձայնն է լսում՝ թէ հայրիկդ քեզ է կանչում. նա բարձրանում է տեղից, գնում է դէպի տուն... և հէնց որ մտնում է իր հօր սենեակը, անախորժ զգացմունքներն էլ մտնում են նրա սիրտը և արճիճի գնտակների նման ծանրանում նրա վրայ...

XIII

Համբարձումը թէև 10 տարեկան է արդէն, բայց հազիւ մի ամիս կըլինի ինչ որ սկսել է կարդալ-գրել սովորել. տիրացու Սիմօնի մօտն է նա կարդում. Տէր Խաչատրի ասելով՝ նրանից աւելի հմուտ վարժապետ Գ. քաղաքում չկայ. ասենք՝ Մարկոս աղան որդու ուսման մասին շատ էլ չի մտածում. նամակ գրել և անունը ստորագրել իմանայ, համարակալի վրայ էլ կոպէկների և մանէթների հաշիւը ճիշտ գցի՝ հերիք է. ինքը 30 տարեկան էր, անունը գրել չէր իմանում, մարդ հօ դառաւ... առանց ուսուցչի, իր աշխատանքովն է նա կարդալ սովորել. Էֆիմերդէն մշտական դրած է նրա սեղանի վրայ. եթէ նրա փորի որևէ մասը խաղայ՝ իսկոյն բաց անում կարդում է և իմանում թէ դա ինչ է նշանակում. այդ գիրքը շատ է տարածուած Գ. քաղաքում. տուն չէք գտնիլ՝ որտեղ նրանից մի կամ երկու հատ չլինի։

Մարկոս աղան գրել ևս իմանում է. իր անունից և ազգանունից ջոկ ուրիշ խօսքեր ևս նա գրում է. բայց երբ իր գրածը դժուարանում է յետոյ կարդալ, յարմար առիթ է փնտրում, իր ձեռագիրը ուրիշներին է կարդալ տալիս և այդպէս մտաբերում բովանդակութիւնը։ Մարկոս աղան գրելու մէջ երկար ժամանակ փորձելուց յետոյ այն եզրակացութեան է հասել, որ այբբենարանում աւելորդ տառերը շատ կան, որոնք համ ժամանակ են խլում, համ էլ մարդու գլուխը շշմեցնում. հեշտութեան համար նա համառօտել և իր համար նոր այբբենարան է կազմել։ Նրա այբբենարանում, օրինակ, Ո և Օ տառերի տեղ միայն Օ տառն է ընդունուած. Ե և Է տառերի տեղ —Է, Ի և Վ-ի տեղ—Վ, Հ և Յ-ի տեղ—Յ և այլն։ Մարկոս աղան երկու տառ շատ է սիրում. դրանք՝ Ը և Ց տառերն են. նա նրանց այնքան է սիրում, որ մի որևէ բառ գրելիս՝ ամեն մի վանկում աշխատում է նրանց էլ անպատճառ տեղ տալ. եթէ երկուսին միասին գետեղելը անհնարին է թւում, գոնէ մէկին Մարկոս աղան անպատճառ կըհիւրասիրէ։ Զարմանալին այն է, որ այդ աւելորդ տառերը միայն ուրիշներին են մոլորեցնում. ինքը—Մարկոս աղան, իր ձեռագիրը կարդալիս, աւելորդ գրած Ը և Ց տառերը չի արտասանում։ Պատահում է որ նա, մի խօսք գրելիս, սխալւում է, մի տառի տեղ ուրիշը գրում. այդ սխալ գրուած տառերը լինում են դարձեալ կամ Ը և կամ Ց, այսինքն նրա սիրած տառերը. իսկ կետադրութեան նշանները նրա համար ամենևին դոյութիւն չունին. երբ մինը նրան այդ մասին նկատողութիւն

անէ՝ «ճանճերի հետքեր են դրանք, տօ» պատասխանում է Մարկոս աղան, հեգնելով։ Եթէ նրա ձեռատետրը ձեր ձեռը ընկնի, այնտեղ դուք ահա ինչպիսի ուղղագրութեամբ գրած բառեր ու նախադասութիւններ կըկարդաք.

«Փ ը օ ղ, յ ը ա ց, օ յ ը թ ը ի (որդի), դ ը ա տ ը ա վ ը օ ը (դատաւոր), է յ ը ը թ օ ը մ (երդում), յ ա յ ը օ ը (հարիւր), թ ա յ թ ը օ ս ը ի ց ը ը ս տ ա յ ց ը ա յ ը է ր կ օ կ ը օ վ ը (թաթոսից ստացայ երկու կով), ղ ա յ ս ը ա բ ը Խ ը է չ ը օ ի ը է չ ը ս ա յ տ ը կ ը է լ ա թ օ ը վ մ ա ն ը ս կ ը օ յ ը ը ա վ ը (դասաբ Խեչօյի էշը սատկել ա, թումանս կորաւ)։

Այդպէս է գրում Մարկոս աղան և շատ գոհ է իր գրածից, թէև մի-մի ժամանակ աւելի լուրջ սխալներ ևս է անում։ Հաշիւ տեսնելիս՝ մինի հաշիւը միւսի հետ է խառնում, ստացած փողը մոռանում է գրել, տւած փողը երկու անգամ է գրում. այդ պատճառով շատ անգամ աղմուկ է բարձրանում նրա և ուրիշների մէջ. բայց հաշտարար դատաւորը ամեն ինչ պարզում է և Մարկոս աղան իր փողերը լիովին ստանում։

Համբարձումին ուսումնարան ղրկելուց առաջ՝ Մարկոս աղան մի քանի փորձ է անում, որպէս զի որդուն համարակալի վրայ հաշիւ անել սովորեցնի.

—Մէ կոպէկ, մէ կոպէկ, մէ կոպէկ... հը՛, ասա ու գցիր, հրամայում է որդուն։ Համբարձումը հատիկները շաքարեղէնների նման բռնելով դէպի ձախ է տանում և բարակ ձայնով ասում.

—Մէ կոպէկ, մէ կոպէկ, մէ կոպէկ...

—Էլի գցիր ու ասա.

—Մէ կոպէկ, մէ կոպէկ, մէ կոպէկ.

—Հը՞, էլի տաբ.

—Մէ կոպէկ.

—Պրծա՞ւ

—Պրծաւ.

—Ինչքա՞ն կոպէկ տարար.

—Մէ կոպէկ.

—Տօ, յիմար, տ՛ասը կոպէկ ախար գցեցիր. ասա տ՛ասը...

—Տասը.

—Հրէս քեզ տասը, ասում է Մարկոս աղան, տասնաւորներից մի հատիկ դէպի ձախ տանելով.—դէ, նորից գցիր, մէ կոպէկից ասա.

—Մէ կոպէկ, մէ կոպէկ, մէ կոպէկ, ասում է Համբարձումը, տասնաւորներից երեք հատ դէպի ձախ տանելով.

—Տօ, էշի լակոտ, էդ կոպէկ չի, բղաւում է Մարկոս աղան, սաստիկ բարկանալով. Համբարձումը երկու ձեռները արցունքախառն աչքերին է տանում.

—Կորիր աչքիցս, հրամայում է Մարկոս աղան.

Երեխան երկչոտ քայլերով սենեակից դուրս է գալիս և վազում Լուսիկի մոտ։

Համբարձումի գնալուց յետոյ Մարկոս աղան ամեն անգամ դառն մտածմունքների մէջ է ընկնում. նա սաստիկ է վշտացած, որովհետև որդին բթամիտ է երևում, խելքը ոչ մի բան չի կտրում. դրա վերջը ինչ կըլինի ախար... սարսափելի մտքեր են գալիս ու փաթաթւում նրա ուղեղի շուրջը. սրտումն էլ ինչ որ մի բան ասեղի նման հա՜ ծակում է և ցաւ պատճառում. սառը քրտնքի խոշոր կաթիլները հետզհետէ կաշու տակից դուրս են գալիս ու նստում նրա ճակատի ու քունքերի վրայ...

—Ա՜խ, մենա՜կ եմ, մենա՜կ, մրմնջում են նրա փամփլիկ շրթունքները...

Վերջապէս մի օր Մարկոս աղան որդու ուսման մասին երկար ու բարակ խորհուրդ է անում Տէր Խաչատրի հետ. հետևանքը մեզ յայտնի է։ Տիրացու Սիմօնի տունը Մարկոս աղայի տնից շատ հեռու չէ. նոյն օրը Մարկոս աղան Համբարձումին վեր առնում նրա մօտ է տանում։ Բերսաբէ խանումը, ծամոնը բերնին սեղանի առաջ նստած, ինչ որ թերթեր է կարդում. աշակերտներն էլ բակումը խաղում են։ Մարկոս աղային տեսնելով՝ Բերսաբէ խանումը իսկոյն

վեր է կենում տեղից և նրան առաջարկում իր տեղը նստել, որովհետև Սիմօնը էս րոպէիս տուն պէտք է գայ։ Մարկոս աղան նստում է և մեքենաբար թերթերից մինը առնում ձեռը... ինչ որ հայերէն է գրած. ակնոցը աչքին է նա դնում և սկսում կարդալ. «Ով խնձորը կըմաքրի և չի ուտիլ, ով աղջկայ հետ կընստի և նրան չի համբուրիլ, ով գինի կունենայ և չի խմիլ, նա իսկական յիմար է»...

—Լա՜ւ, ասում է Մարկոս աղան և մի ուրիշ թերթ վերցնում սեղանից ու կարդում. «Ով մէկ անգամ համբուրեց և երկրորդ անգամ չի համբուրիլ, նա արժանի չէ ստացած բաւականութեանը»...

—Փիէ՜, ասում է Մարկոս աղան և էլի կարդում. «Ինչո՞ւ են գեղեցիկ ծաղիկներին համբուրում և նրանք դարձեալ գեղեցիկ են մնում.— գեղեցիկ օրիորդներ, թողէք ձեզ էլ համբուրեն, դրանից դուք չէք վատանայ»...

—Հողեմ քո գրողի գլուխը, մրթմրթում է այս անգամ Մարկոս աղան դժգոհ ձայնով, դէն է գցում թերթը և երրորդը վեր առնում-կարդում. «Պէտք է բարձր համբուրել, սակայն համբոյրը խուլ էլ չպէտք է լինի։ Համբոյրից յետոյ անմիջապէս չէ կարելի խօսել. պէտք է մի փոքր միջոց սպասել, որ տպաւորութիւնը չթուլանայ»։

Այդտեղ նա թողնում է թերթը և դառնում Բերսաբէ խանումին.

—Սպասեց, էլի, խանում, էս ինչեր ա գրած ախար.

—Լաւ, լաւ բաներ է գրած, Մարկոս աղա.

—Ինչն ա լաւ, աղչի, սա ինչ ա, գազետ ա...

—Հրամեցեք, Մարկոս աղա, մեր միակ շաբաթաթերթն է.

—Ո՞րտեղ ա ելում, անունը ինչ ա...

—Մ ա ր ա խ է անունը...

—Մ ա ր ա խ...

—Հրամեցեք, Մ ա ր ա խ. երևելի շաբաթաթերթ է Մ ա ր ա խ ը, Մարկոս աղա։

Մարկոս աղան էլի կարդում է. «Օրիորդի ճիտը միայն համբուրել—դա միևնոյնն է թէ մի կտոր պանիր ուտել և համեղ դոլման թողնել»...

—Զահրումար ուտես դոլմի տեղաք, փուչ կենդանի, ասում է Մարկոս աղան ու թերթը գցում ոտի տակ։ Բերսաբէ խանումը լուռ ու մունջ թերթը բարձրացնում է ու կրկին դնում սեղանի վրայ։

—Ախար գազետ, գազետ որ ասում են, միջումը էդպէս բաներ են գրում, հը՞, խանում, խելքդ ո՞նց ա կտրում.

—Մարկոս աղա, ներեցէք, բայց մեր ազգը ապերախտ է.

—Ո՞նց...

—Մ ա ր ա խ ը այսքան երկար տարիները մատաղ սերունդ է կրթում, մինչև անգամ զօրով է կրթում... այո, տղերանց խելքին կուշտ կերակուր է տալիս, աղջկերանցն էլ ճաշակն է ազնուացնում, այսինքն՝ ինչպէս ասեմ որ դուք հասկանաք... այսինքն՝ ցոյց է տալիս թէ ինչպէս հայ օրիորդները պէտք է երիտասարդների հետ համբուրուեն. եթէ Մ ա ր ա խ ը չլինի՝ հաստատ իմացէք որ հայերը թէ իրանց լեզուն կը-մոռանան և թէ նորից կըսկսեն ասիացու նման կոշտ ու կոպիտ ձայներով համբուրել օրիորդների հետ...

—Հա, հա, հա, ա՛յ խանում ջան, շատ հանաքբազն ես եղել, ես այդ չէի իմացել...

—Իհարկէ կըծիծաղէք... մեր հասարակութիւնը դեռ ևս տգէտ է։

—Ինչով ա տգէտ, խանում.

—Ես ինչ իմանամ թէ ինչով, բոլորն էլ այդպէս են ասում, գրում...

—Ի՞նչ են գրում է...

—Գրում են որ հայ հասարակութիւնը իր խմբագիրներին գնահատել չի սիրում...

—Սաքի ո՞նց գնահատել.

—Գնահատել, էլի, չէք հասկանում, փող տալ, որպէս զի ինքը—խմբագիրը լաւ ուտի, լաւ

խմի ու չհիւանդանայ, որովհետև նրա կեանքը իրան չի պատկանում, ազգին է պատկանում...

—Չեմ հասկանում, խանում ջան, ինչեր ես ասում.

—Ա՜յ, բոլորն էլ ձեզ նման են խօսում, Մարկոս աղա. ամենքն էլ սպասում են, թէ երբ կըմեռնի խմբագիրը, որպէս զի նրա դագաղի վրայ պսակներ դնեն...

—Գիտես ինչ կայ, խանո՛ւմ... ես ոչ Մ ա ր ա խ եմ ուզում, ոչ խմբագիր թաղել և ոչ աղջիկ համբուրել, հասկանո՛ւմ ես թէ չէ. ես ուզում եմ որ իմ որդին կարդալ, գրել ու հաշիւ անել սովորի, լաւ սովորի, հասկանո՛ւմ ես թէ չէ... ես էդ թաւուր գաղետին ոչ փող կըտամ, ոչ էլ կըկարդամ. առանց քու Մ ա ր ա խ ի ն ես մարդ եմ դառել, իմ որդին էլ հալբաթ շուն չի դառնալ...

Այդ միջոցին տիրացու Սիմօնը ներս է մըտնում. իմանալով թէ խօսակցութիւնը ինչի մասին է, նա սաստիկ է բարկանում կնոջ վրայ, Մ ա ր ա խ ի թերթերը սեղանի վրայից հաւաքում է ու տանում գցում այն օթեակը, որը խոհանոցին առհասարակ մօտ է լինում և որտեղ ոչ ոք ձի կամ էշ հեծած չի գնում։

Մարկոս աղան, այդ տեսնելով, մի փոքր հանգստանում է. պայմանների մասին մանրամասնօրէն խօսելուց յետոյ Համբարձումին թողնում է այնտեղ ու գնում տուն։ Մենք էլ թողնենք նրանց ու վերադառնանք եկեղեցի։

XI

Մաթոսը պատարագի զանգ է խփում. տիրացուները վերևի դասն են հաւաքել և «խ ո ր հ ո ւ ր դ խ ո ր հ ի ն» են երգում. Սահակ սարկաւագը շատ բարձրիցն է սկսել, հրաշալի ելևէջներով ճռճռում է և բառերի վանկերը անատամ բերնի մէջ չարաչար ծամծմում։ Կանանց դասից ինչ որ ձայներ են գալիս. Մարկոս աղան ունքերը կիտած այն կողմն է նայում, մուխսի Բաղալին մատի ծայրովը մօտ է կանչում և հրամայում—գնալ այնտեղ և սաստել կանանց՝ որպէսզի եկեղեցում չխօսեն։

Մուխսին գնում է. իսկ Մարկոս աղան շուտ է գալիս և նրա աչքերը պատահմամբ մտավաճառ Փանոս աղայի փորին են ընկնում, որը թէև նոյնպէս մեծ է, բայց ոչ այնքան. մի ըոպէ նա մտիկ է տալիս այդ փորին և յանկարծ յիշում, որ ինքը ուզում էր նրան, այսինքն Փանոսին, տեսնել ու մի կերպ ծախել նրա վրայ իր նորածին արու հորթը, որովհետև նրան պահելու հաշիւ չկայ.

եթէ էդ լինէր, ինչպէս նա յոյս ունէր որ կըլինի, ուրիշ բան էր։ Եւ ահա Մարկոս աղան շարժւում է տեղից, ծանր քայլերով մօտենում է սրբերի պատկերներին և սկսում կիսավառ մոմեր հանգցրնել. հանգցնելով-հանգցնելով նա հետզհետէ Փանոս աղային է մօտենում։

—Խաղաղութիւն ամենեցուն, ասում է պատարագիչը։ Մարկոս աղան երեսն է խաչակընքում և յետոյ մատի ծայրովը Փանոսի փէշից քաշում։

Վերջինը շուռ է գալիս և հէնց որ տեսնում է նրան՝ իսկոյն բերնի ծայրերը մինչև ականջներն է ձգում և քծնուղի սովորական շարժումներով մի քանի անգամ սեղմում իրան պարզուած ձեռը։

—Բան եմ ասում, Փանոս, սկսում է Մարկոս աղան.

—Հրամայիր, Մարկոս աղա, պատասխանում է Փանոսը, ականջը նրա բերնին մօտեցնելով.

—Մի հորթ ունեմ, արի քեզ վրայ ծախենք, ուզում ես տեսնել.

—Տեսել եմ, արու ա, ծնած սահաթն էլ եմ իմանում, Մարկոս աղա, էդ մեր փէշակն ա. հորթդ շատ ա մատղաշ, քաշն էլ հալբաթ թեթև կըլի։

—Ի՞նչ ես տալի.

—Քու քէֆը ինչքան ա ուզում, Մարկոս աղա.

—Եօթը մանէթ կըտաս.

—Շատ թանկ ես ասում, ոսկոր-կաշի ա նստ հըմի, ինչքան պէտք ա ուտի՝ որ միս ու եղ կապի։

—Վեց մանէթ չե՞ս տալ.

—Հինգ մանէթ կըտամ, էն էլ քո անուշ խաթեր համար, Մարկոս աղա. ուզում ես, փողն էլ էս սահաթիս տամ։

—Էժան ա, բայց թող քո ասածը ըլի. ժամից որ դուրս գանք՝ մարդ ղրկիր, վեր առ, հորթը հըմի քոնն ա։

—Սաղ ըլես, համեցիր քո հինգ մանէթը։

Մարկոս աղան հինգ մանէթը սուսիկ-փուսիկ գրպանն է դնում ու հեռանում նրա մօտից։ Կանանց դասում բարձրաձայն խօսակցութիւնը չի վերջանում. ընդհակառակը, գնալով աւելի է սաստկանում։

—Ախար դա ինչ անկարգութիւն է, նկատում է Մարկոս աղան իր հարևանին.

—Է՜հ, կնանիք են էլի, ըսկի կարելի ըմն է դրանց սուս անելը, պատասխանում է վերջինը։

Մարկոս աղան ոչինչ չի ասում. գալիս է Բաղալը. Մարկոս աղան իսկոյն նրան է դառնում.

—Այ տղայ, էդ ինչ աղմուկ ա ախար.

—Օռոռոյենց հարսն ա, Մարկոս աղա.

—Ի՞նչ ա ասում.

—Իր բերած խալիչայի վրայ ուզում ա նստի.

—Յետոյ.

—Ուշացել ա. նրանից առաջ եկողները պինդ նստել են խալիչայի վրայ ու չեն ուզում վեր կենալ.

—Ովքեր են էդ նստողները.

—Էլի նրանք են, Մարկոս աղա. Պուտպուտենց Լուսիկն ու Մայասիլենց Զմրուխտը. աննամուս զատեր են. վեր կացէք եմ ասում. «քո դուշմանը փոսից վեր կենայ ու շլինքիդ նստի» ասում ա Պուտպուտենց Լուսիկը ու վրէս ծիծաղում։

«Ռէէք-կերէք»ի զանգն են խփում. դպիրները նեբքևից, Սահակ սարկաւագն ու տիրացու Սիմոնը սեղանի վրայից սկսում են խմբովին երգել. Գասպարն ու Մելքոնը ճզվզում են, Մինասն ու Սիմոնը բզզում, սարկաւագը ճռնչում է, Դաւիթն էլ մռնչում։

«Սուրբ-Սուրբը» Դաւիթն է ուզում երգել, բայց Մինասը առաջ է ընկնում և խլում է նրա բերնից։ Դաւիթը բարկանում է և այդ պատճառով «յամենայնին» աշխատում է մինակ ինքն ասել. Գասպարն ու Մինասը թէև փորձում են նրա հետ միասին երգել, բայց կէս ճանապարհին կանգ են առնում, որովհետև Դաւիթը շատ փ ի ս-փ ի ս է նրանց մտիկ տալիս, համ էլ իր մռնչոցով նրանց ձայնը խափանում է բոլորովին։ Տէր Բար-

սամը, երկար ժամանակ լուռ կանգնելուց ձանձրանալով, նոյնպէս իր ձայնը խառնում է դպիրների ձայներին և ահա եկեղեցում մի սարսափելի աղաղակ է բարձրանում. կանանց ձայները այլ ևս չեն լսւում. ժողովուրդը, ընտելացած լինելով այդ սարսափելի ձայներին, դուրս չի փախչում, այլ անշարժ մնում է կանգնած իր տեղում. շատ մեծ է նրա հաւատը, ականջն էլ ծնւած օրից ճռնչոցներից ջոկ ուրիշ ոչինչ չի լսել։ Բայց կան մի քանի կրթւած երիտասարդներ, որոնց լսողութիւնը նրբացած է. նրանք չեն կարող անտարբերութեամբ լսել տիրացուների անկարգ և անհամ զորդոռոցը, նրանք հոգեպէս չարչարւում են. այդ պատճառով շուտով են դուրս գալիս եկեղեցուց։ Տէր Խաչատուրը սաստիկ է ատում այդպիսի երիտասարդներին, ա ն հ ա ւ ա տ ն ե ր ը է նրանց կոչում։

Գասպարը բուրվառը ձեռին մատուռն է վազում. մի բոպէից նա ետ է դալիս և կրակով լիքը բուրվառը մօտեցնում Տէր Յովակիմին. վերջինը, խնկամանի վրայ խաչակնքելով, երկու դդալ խունկ է վեր առնում և ածում վառ ածուխի վրայ. խնկածուխը սկսում է առատութեամբ դուրս գալ այնտեղից և տարածւել օդի մէջ։

Տէր Յովակիմը՝ աջ ձեռին բուրվառը բռնած, ձախ ձեռին էլ զոգաւոր ահագին թաբախը, ըսկըսում է բուրվառել՝ սրբերին, տէրտէրներին ու դպիրներին. յետոյ վերևի դասից ցած է իջնում և մտնում ժողովրդի մէջ. ով նրա թաբախը փող է գցում, նա էլ նրա քթին խունկ է ծխում։ Տէր Յովակիմի ետևից թաւալւելով գնում է երեցփոխանը—Մարկոս աղան... փոքրամաւորը առաջ ցցած՝ հանդիսաւոր ձայնով բարբառում է. «հրամայեցէք եկեղեցու թաբախին»։ Նրա ետևից գնում է տիրացու Սիմոնը, որը սեղանից յատկապէս դրա համար է ցած իջել. ոչխարի ձայնով նա շուտ-շուտ բառաչում է. «հրամայեցէք լուսաբարի թաբախին». նա լուսաբարութիւն էլ է անում։ Նրա ետևից երեք երեխաներ են գնում. երկու ձեռներով թաբախները կրծքերին սեղմած՝ զիլ ձայներով նրանք հա կանչում են. «հրամայեցէք Էջմիածնի թաբախին, հրամայեցէք աղքատաց թաբախին, հրամայեցէք որբոց և այլոց թաբախին»։ Ամենից վերջը գնում է ժամկոչ Մաթոսը. գլուխը ցած գցած՝ երկչոտ ձայնով նա ժամանակ-ժամանակ արտասանում է. «հրամայեցէք ժամկոչի թաբախին»։ Ժողովուրդը նրա թաբախը կոտրած գրօշները ու ժանգոտած կոպէկներ է գցում. իսկ Տէր

Յովակիմի ու երեցփոխանի թաբախները—մեծ մասամբ արծաթ փող։

Վերջապէս Տէր Յովակիմը փողով լիքը թաբախը ձեռին կրկին դասն է բարձրանում. նա պէտք է մատուռը մտնի և հաւաքած փողը կարմիր կնքամոմով կնքած մեծ արկղի վերևի ծակից ներս գցէ. բայց հէնց որ նա մատուռն է մտնում, Տէր Խաչատուրն էլ նրա քամակիցն է մտնում, չկամենալով նրան մենակ թողնել այնտեղ։

Եւ ահա, վերևի դասում՝ երկու տէրտէր արկղի ծակից մէջը թը՛խկ-թը՛խկ փող են գցում. ներքևի դասում՝ տիրացու Սիմոնը իր փողերի հաշիւն է տեսնում. իր սեղանի առաջ՝ Մարկոս աղան եկեղեցու, Էջմիածնի, աղքատաց և որբոց համար հաւաքած փողերի հաշիւն է անում. ժամկոչ Մաթոսն էլ իր ընկեր-Գաբօյի հետ խցիկում նստած՝ գլխներն են քորում և իրանց քամբաղդ թաբախի միջից ժանգոտ կոպէկներ են դուրս բերում ու վրայ-վրայ դիզում, որպէս զի իրանց մէջ կիսեն։

Բոռշենց Զաքարը, որը Էջմիածնի թաբախն էր ման ածում, հէնց որ թաբախը երեցփոխանին է յանձնում, խսկոյն եկեղեցուց դուրս է գալիս ու կորչում։ Աղքատաց թաբախը ման ածող երեխան որբոց թաբախը ման ածողին մի կողմ է քաշում և ականջին փսփսում.

—Գէորգ, գիտես ինչ տեսայ.

—Ի՞նչ.

—Զաքարը թարախից փող դողացաւ.

—Վա՜հ...

—Աչքովս տեսայ. մի արծաթ փող կատի նման թաթովը մշտեց ու թևի մէջ դցեց։

—Վա՜յ, վա՜յ, վա՜յ... Նրա հոգին հրմի սևացա՜ւ...

—Սևացա՜ւ.

—Բաս, սևացա՜ւ. Զաքարը դժոխք կրգնայ.

—Որ էդպէս ա՝ նրա հետ էլ ես չեմ խաղայ.

—Ես էլ չեմ խաղայ։

Պատարագը վերջանում է. լսելով որ հիւսիսային դրան մօտ մատաղ են բաժանելու՝ ժողովուրդը խռնւում է այնտեղ. դառնում է սաստիկ նեղւածք. մարդիկ միմեանց կողք են թակում, ոտներ են կոխոտում, կանանց շրջազգեստներն են պատառում, ամենքն էլ շտապում են դուրս դալ եկեղեցուց, որպէս զի մատաղամսից անմաս չմնան։ Ժամկոչ Դաբօն, ձախ ձեռով մատաղ ուհացով լիքը տաշտը գրկած կանգնել է դրան մօտ. ով եկեղեցուց դուրս է դալիս՝ նա նրան հացի վրայ դրած մի կտոր մատաղ է տալիս։ Բայց հոգիւ տասը թիքա է նա կարողանում այդ կերպով բաժանել, որովհետև երեխաների և պատանիների մի խումբ թափւում է Դաբօյի վրայ,

խփում է նրա ոտներին ու ցած դցում. մատաղամիսը հացի թիքաների հետ թափւում է քարէ սանդուխի վրայ, դաշտն էլ դլորւում է ցած. Դաբօն հազիւ է կարողանում իր սեփական դլուխը դուրս բերել մարդկանց ոտների տակից։ Ժողովուրդը իրար է անցնում. մեծ ու փոքր թափւում են մատաղամսի վրայ. ով ինչքան կարողանում է ձեռք է դցում ու փախչում. իսկ ուշացողները մատաղամսի միայն հոտը քթերի մէջ առած եկեղեցու բակից դուրս են դալիս։

Դաբօն դատարկ դաշտը շալակած վաղուց փախել, մատաղատուն է մտել, դուռն էլ ետևից կողպել։ Բայց ահա Մաթոսը վազելով դալիս է և դուռը թակում. Դաբօն բաց է անում և նրանք երկսով մի ահագին սինիով մատաղամիս չորս ձեռների վրայ բռնած՝ տանում են այն սենեակը, որտեղ տէրտէր ու տիրացու պէտք է հաւաքւեն և ուտեն։

Այն միջոցին՝ երբ ժողովուրդը եկեղեցու դրանը մէկմէկու դունչ էր թակում մի կտոր մատաղի համար՝ տէրտէրները, սենեակում հանդիստ բազմած, մատաղամիս էին անուշ անում։ Տէր Խաչատուրը իր սիրած թիքաներից հինգ-տասը կտոր լաւ ուտելուց յետոյ բերանը սրբում է ու վեր կենում. տիրացու Սիմոնն էլ է վեր կենում. նրանք երկսով մի հարուստ ծխա-

կանի մօտ են գնում, որպէս զի տօնը շնորհաւորեն. Տէր Խաչատրի գնալուց յետոյ միւսները սկսում են ազատ շունչ քաշել, ուտել, խօսել ու ծիծաղալ։ Տէր Բարսամն ու Սահակ սարկաւագը փափուկ կտորներ են դիզում իրանց առաջ և ծանր ու բարակ ծամծմում։ Տէր Յովակիմը իւղալի պատառները է ջոկում, փիլիսոփայօրէն ամեն կողմից զննում է նրանց և յետոյ արագութեամբ բերանը կոխում. իսկ Տէր Մարուքէն ինչ թիքա էլ որ ձեռը ընկնի՝ իսկոյն բերանն է կոխում և ագահաբար ուտում. ժամանակ-ժամանակ նա շտապով Մաթոսի խցիկն է վազում, շիշը կըլկըլացնելով ումպ-ումպ արաղ է խմում և կրկին վերադառնում դէպի մատաղամսի կոյտը. Սահակ սարկաւագը խղճուկ դէմքով մտիկ է տալիս նրա կարմրած երեսին, ահ է քաշում ու սուսիկ-փուսիկ մատաղը ծամծմում։ Մուխսի Բաղալն ու տիրացուներն էլ՝ մի-մի թիքա գալիս սեղանից վերցնում են և հեռուն կանգնած ուտում. իսկ ժամկոչ Մաթոսն ու Դաբօն լրջօրէն մտիկ են տալիս հեռուից այդ բոլորին և ժամանակ-ժամանակ իրանց մէջ քչփչում։

Ամենից առաջ Տէր Մարուքէն է տեղից բարձրանում. Տէր Բարսամին դառնալով նա ասում է։

—Տէրտէր, վեր կաց, հերիք ա ինչքան ծամեցիր. գնանք տուն, մի քիչ էլ տանը կրծամես։

—Տօ, հէնց իմանաս պառաւ ոչխարի միս ըլի, ծամումեմ, ծամումեմ, ըսկի բան դուրս չի գալի, նկատում է Տէր Բարսամը խղճուկ ձայնով ու տեղից բարձրանում. նրանք երկսով միասին են դուրս գալիս եկեղեցուց։ Սահակ սարկաւագը, իր առաջը դիզած մսի կոյտը քթի թաշկինակի մէջ փաթաթելով, գրպանն է գնում ու նոյնպէս դուրս գալիս։ Տէր Յովակիմը, որը բոլոր ժամանակը մի տեղում նստած լուռ ու մունջ ուտում էր, զկրտալ է սկսում. նրա ստամոքսը դրանով իր բողոքն է յայտնում. Տէր Յովակիմը վերջին թիքան, որը ձեռումն էր բռնել, ետ է գցում, բայց զկրտոցը գնալով սաստկանում է. նա վեր է առնում բաժակով ջուրը և սկսում ումպ-ումպ նրանից խմել... բայց զկրտոցը չարաղուշակ կերպարանք է ստանում. այդ նկատելով՝ Տէր Յովակիմը իսկոյն վեր է կենում տեղից, հագնում է վերարկուն, հիւսիսային դռնով դուրս է գալիս և մեծ-մեծ քայլերով շտապում դէպի տուն։ Նոյն ճանապարհով դուրս է գալիս և մուխսի Բաղալը, մատաղատան դրան բանալին ձեռների մէջ խաղացնելով։ Նրանից յետոյ ջահիլ տիրացուներն են դուրս գալիս, թղթի մէջ փաթաթած մատաղամսի թիքաները ձեռներին. եկեղեցու դրանը մնում են մի քանի մուրացիկներ, նրանց էլ Մաթոսն է բոթելով-բոթելով դուրս անում. ամբողջ

եկեղեցում մնում են միայն Մաթոսն ու Գաբոն և սկսում պատրաստութիւն տեսնել, որպէս զի նրանք էլ վերջապէս, տէրտէրների նման հանգիստ նստած, մատաղամիս ուտեն և Աստուած փառաբանեն։ Գիշերապահ Մակիչը, թեւի մէջ ինչ որ պահած, զգոյշ քայլերով եկեղեցու բակն է մտնում, երկ-երկու աստիճան փոփոխելով արևմտեան սանդուխով վեր է բարձրանում և ուղղակի մտնում Մաթոսի խցիկը. այնտեղ արդէն սեղանը պատրաստ է. մեծ ափսէով մատաղամիսը սեղանի մէջտեղն է դրած. նրա շուրջը դարսուած են՝ կանաչեղէնը, ոչխարի գլխի մի մասը—խաշած, թոքերը-խորոված, մի բուլիկ էլ մատաղապուր։

—Մակիչ, որտեղ ես կորել, կեր, խմիր, քէֆ արա, բացագանչում է Մաթոսը նրան տեսնելով։ Նրա աչքերը փայլում են, բերնից էլ արաղի հոտ է գալիս. Մակիչը այդ նկատում է և թեւի միջից երկու շիշ արաղ հանում ու դնում սեղանի վրայ։

—Հոգիդ ուտեմ, Մակիչ, բղաւում է Մաթոսը, շիշերը տեսնելով. ցատքում է ու Մակիչի վզովը փաթաթւում։ Գաբոն այդ միջոցին անձայն քայլերով մօտենում է նրա ետևից և մի շիշ էլ արաղ ինքն է սեղանի վրայ դնում։

—Արի է, քեօփակ, բղաւում է Մաթոսը

շուռ գալով. բայց յանկարծ երբորդ շիշն էլ որ չի տեսնում՝ ա՜՜ա, օ՜օ՜օ բացագանչելով խլում է շիշը սեղանի վրայից և սկսում խցիկի մի անկիւնից միւսը գժի նման ցատքրտել ու տրտինգ տալ, շիշը երկու ձեռով գլխից բարձր բռնած...

—Մաթոս, եավաշ, շիշը կըջարդես, նկատում է Մակիչը։

Եւ հէնց այդ իսկ բոպէին շիշը զարնւում է քարէ պատին ու ջարդւում. արաղի կէսը թափւում է Մաթոսի գլխին. իսկ շիշի միւս մասը զգուշութեամբ բերնին մօտեցնելով՝ նա բոլոր արաղը մի շնչով խմում է.

—Տօ, մեզ բան չթողեցիր, բացագանչում է Գաբոն անհանգիստ ձայնով.

—Օխայ, այ ափսոս, կէսը թափաւ, շշնչում է Մաթոսը խորը շունչ քաշելով և արխալուղի փէշովը բերանը սրբելով. նրա երեսը իսկոյն կարմրում է ինչպէս եփած խեցգետին։

—Տօ, եկէք է, էս մատաղը ում համար ա ախար, ասում է Մակիչը. նա արդէն բաց է արել արաղի շիշերը, երկու թաս խմել է, մատաղից էլ է կերել և այժմ ոչխարի ծնոտն է կըրծոտում.

—Մենք երկու անգամ կերել ենք էլ, խմել ենք էլ, Մակիչ, արխային կաց, էլի կուտենք էլ, կըխմենք էլ... ասում է Մաթոսը, կանգնած տե-

դում ճօճանակի նման տատանուելով։ Նրա ձայնը շատ քաղցր է դուրս գալիս փորիցը, շիլ աչքը մի բանով, կարծես, սաստիկ է զմայլած։ Վերջապէս նրանք երեքով նստում են և նորից ըսկըսում ուտել և խմել...

—Տղէրք, բղաւում է Մաթոսը, վերջին լիքը բաժակը ձեռին բռնած.—էս էլ խմենք մեր երեքի կենացը. Աստուած մեզ առողջ պահէ. մեռելը բՀլ ըլի, կնունքը բՀլ ըլի, մատաղը բՀՀլ ըլի... դրՀուստ եմ ասում.

—Դրուստ ա՜, բացականչում է Մակիչը, երկու ձեռները եզան պոչերի նման ականջների մօտ բռնած.

—Քեօփա՜կ, չէս լսում, դառնում է Մաթոսը Գաբօյին։

Բայց Գաբօն նրան չի լսում. երկու ձեռներով աթոռի թիկունքը գրկած, խիարաձև գլուխն էլ ձախ ուսին թեքած, մեղմ ձայնով նա իր քէֆի համար հա՜ երգում է.

«Թող սև ըլի, բՀլ ըլի,
«Թող տաք ըլի, բՀլ ըլի»...

Վ Ե Ր Ջ

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՈՒՀ-СОР А.
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0323873

28.133